

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՊԱՏ

ՀԱՅ-ԹՈՒՐԻՔԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ • 2018



DVV International

BMZ



Federal Ministry
for Economic Cooperation
and Development

Գրքի տպագրությունը ֆինանսավորվել է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (Դի-Վի-Վի Իթերնեյշնալ) կողմից՝ Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության միջոցներով: Գրքում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել հրատարակիչների կարծիքների հետ:

Շապիկի լուսանկարը՝ ՎՋամ, Գյումրի, 1998 թ.

ՀՏԴ 821.19-3Միության
ԳՄԴ 84(5Հ)-4
Մ992

Միության Աննա
Մ992 Պատ հայ-թուրքական սահմանում/Ա. Միության.— Եր.: Դի-Վի-Վի
Ինթերնեյշնալ, 2018.— 144 էջ:

«Պատ հայ-թուրքական սահմանում» տեքստն արտացոլում է «Գործելով միասին» ծրագրի երկշաբաթյա ճամփորդության անցքերը: Տեքստում տեղ գտած օրագրային նոթերը վավերագրություններ են 20 հայ և թուրք երիտասարդների, ինչպես նաև հայ, թուրք և գերմանացի կազմակերպիչների համատեղ ճամփորդության ընթացքի մասին Հայաստանի մի քանի քաղաքներում ու վայրերում: Հորինվածք է Գյումրի-Կարս վիրտուալ գնացքը, ինչպես նաև Ցեղասպանուհու կերպարը:

Ծրագիրն իրականացվել է 2015-2016 թթ. Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի և իր գործընկեր կազմակերպությունների՝ Հայաստանից «Հազարաշեն» ազգաբնակական հետազոտությունների հայկական կենտրոնի և Թուրքիայից «Պատմության հիմնադրամի» (Tarih Vakfi) կողմից (վերջինս ծրագրին միացել է 2015 թ.)՝ Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

ՀՏԴ 821.19-3Միության
ԳՄԴ 84(5Հ)-4

ISBN 978-9939-1-0827-8

© Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ, 2018

Սյու տեքստը գրել են 2016 թ. հունվար–մարտ ամիսներին՝ ներառելով 2015 թ. սեպտեմբերյան 12 օրերի ընթացքում գրված նոթերը. այս մասին նշել են նաև ներածությունում: Սյն պետք է տպագրվեր 2016 թ. ընթացքում՝ հայերեն, անգլերեն և թուրքերեն լեզուներով՝ թուրք գործընկերոջ՝ Էքին Ջան Գյուկտոյի տեքստի հետ միասին: Սակայն անգլերեն թարգմանությունից հետո սկսեցին երկարատև բանակցություններ՝ տեքստում տեղ գտած այս կամ այն մտքի, նախադասության և արտահայտությունների վերաբերյալ: Մասնավորապես, թուրքական կողմին դուր չէր եկել թուրք քաղաքացիական ակտիվին տրված իմ գնահատականները:

Մանրամասնեն: 2013 թ-ից ընդգրկված լինելով հայ-թուրքական հաշտեցման տարատեսակ ծրագրերում՝ նկատել էի, որ հայ մասնակիցները սիրտ ու էներգիա էին դնում ծրագրերում, իսկ թուրք մասնակիցները բավականին անտարբեր էին: Գրել էի. «Մատների արանքով էին նայում»: Ուզում են ընդգծել,

որ խոսքը վերաբերում էր ոչ բոլոր մասնակիցներին, սակայն այդպիսի միտումն ակնհայտ էր: Ըստ իս: Ըստ այդմ, վերլուծել ու որոշ վարկածներ էի առաջարկել, թե ինչու է դա այդպես: Տեքստի այդ հատվածը բավական լայն ռեզոնանս էր առաջացրել թե՛ թուրք և թե՛ գերմանացի կազմակերպիչների կողմից, որոնց կարծիքով հայ-թուրքական ծրագրերում ընդգրկված թուրքական կողմի մասնակիցներն ու կազմակերպիչները շատ բան են անում հայ-թուրքական երկխոսության համար:

Հետո՝ 2016 թ. հուլիսին, Ստամբուլի նոտակա մի ծովափնյա հանգստավայրում երկօրյա ռեֆլեքսիա կազմակերպվեց, որի ընթացքում փորձեցինք միմյանց հասկանալ: Թուրքական կողմին ակնհայտորեն դուր չէր եկել նաև Յեղասպանուհու կերպարը: Նաև, որովհետև այն հորինված կերպար էր ու որևէ կերպ չէր արտացոլում ճանփորդության ընթացքը: Իսկ տեքստը պետք է լիներ ճանփորդության մասին: Ես որոշեցի, որ ներածություն կգրեմ, որպեսզի բացատրեմ որոշ դետալներ ու հստակություն մտցնեմ որոշ հարցերում: Այդ ներածությունը, որը գրել եմ Ստամբուլյան ռեֆլեքսիայից հետո, անփոփոխ կցված է տեքստին:

Ճակատագրի հեզնանքով Ստամբուլի «Աթաթուրք» օդանավակայանից մեր թռիչքը նախատեսված էր հուլիսի 15-ի գիշերը, այսինքն՝ այն օրը, երբ Թուրքիայում տեղի ունեցավ հեղաշրջման փորձ: Ինչպես հետո պարզվեց, մեր թռիչքը եղել էր վերջիննե-

րից, որից հետո օդանավակայանը փակվել էր: Այսինքն՝ Թուրքիայում իրավիճակը ավելի սրվեց: Այդ պատճառով հայ և թուրք կազմակերպիչների համաձայնությանը որոշվեց գրքի հրատարակությունը հետաձգել անորոշ ժամանակով, մինչև իրադրությունը կփոխվի:

Իրադրությունը փոխվեց: Գեպի վատը: Այս օրերին, երբ գրում են այս տողերը, Ստանբուլում կալանավորվել է Օսման Կավալան, իսկ նրանից առաջ արդեն սկսել էին կալանավորել թուրք քաղաքացիական հասարակության մի շարք մարդկանց: Մարդկանց, որոնք իրականում ներկայացնում են թուրք հասարակության այն շերտը, որոնց էլ ես քննադատել էի՝ ասելով, որ մատների արանքով են նայում հայ-թուրքական հարաբերություններին:

Հիմա 2017 թ. նոյեմբերն է: Գրեթե երկու տարի անց բուն ճամփորդությունից: Իրավիճակը Թուրքիայում և տարածաշրջանում բավականին փոխվել է: Փոխվել են նաև ես: Այս ընթացքում սովորել ու ավարտել են Բուդապեշտի Կենտրոնական եվրոպական համալսարանի գենդերային գիտակարգի ֆակուլտետն ու այլ հայացք ձեռք բերել: Ու եթե հիմա այս տեքստը գրելիս լինեի, կգրեի բոլորովին այլ տեսանկյունից ու բոլորովին այլ կետեր կշեշտադրեի: Նախ ներածությունում հստակորեն կսահմանեի իմ դիրքն ու տեղը տեքստում ու ճամփորդության ընթացքում, ինչպես նաև լայն մեֆլեքսիայի միջոցով կպատճառաբանեի իմ այդպիսի կեցվածք ընդունելու

հիմքն ու բնույթը: Բացի այդ՝ իմ նոր հայացքը քննադատորեն է նայում Արևմուտքին ու արևմտյան քաղաքակրթությանը, որին պարտական ենք կապիտալիզմի ծնունդով ու դրանից բխող այլ հետևանքներով, ինչպիսին են ռասայական, գենդերային, դասային և այլ խտրականությունները, ու հետևաբար այլ լույսի տակ կանդրադառնայի նրանց մասնակցությանը հայ-թուրքական երկխոսության կայացման պրոցեսին: Վերջապես, այժմ գտնում եմ, որ թուրքական կողմի մասնակցությունը հայ-թուրքական երկխոսությանը միաշերտ չէ, ու մատների արանքով նայելու մասին կարծիքը չի արտահայտում հաշտեցման գործընթացում ընդգրկված թուրքական քաղաքացիական ակտիվի բազմաշերտությունն ու այդ շերտերի միջև եղած բարդ փոխհարաբերությունները:

Իմ հետահայաց ընթերցանությունը ցույց տվեց, որ տեքստը գրել եմ հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ ընդհանրական հայացք ունենալու տեսանկյունից, ու այդ դիրքորոշումն ակնհայտ է տեքստի ամենատարբեր հատվածներում: Սակայն փոխել տեքստի առանցքը՝ կնշանակի նորից գրել ողջ տեքստը, որը համարում եմ ոչ ճիշտ, ինչպես նաև՝ անհնար աշխատանքի ծավալի առումով: Այդ պատճառով որոշեցի ուղղակի տեքստից հանել որոշ հատվածներ: Մասնավորապես հանել եմ մի լայն հատված, որտեղ ուղիղ քննադատում եմ թուրք քաղաքա-

ցիական ակտիվին: Կարծում եմ, որ դրան անդրադառնալու առիթներ հետագայում դեռ կլինեն:

Նաև ուզում եմ նշել, որ քանի որ ի սկզբանե տեքստը նախատեսված էր հրապարակել երեք տարբեր լեզուներով, բավական շատ ծանոթագրություններ եմ արել՝ փորձելով օտար ընթերցողին հասու դարձնել որոշ հայկական համատեքստեր:

2017 թ., նոյեմբեր

Մարդիկ տարբեր են, ու Ամերիկյան կրկին հայտնագործելու հավակնություններ չունեն: Հատկապես, որ այն հայտնագործելու կարիք բոլորովին էլ չկար: Դիրքորոշման հարց է: Հակամարտությունը կամ ավելի ճիշտ՝ հակամարտող կողմի տեսակետը հասկանալու համար պետք է փորձել աշխարհը դիտել նրա աչքերով:

Այս տեքստը, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից իրականացվող «Գործելով միասին»¹ ծրագրի ճամփորդական նոթ լինելուց զատ, նաև մի փորձ է մեր

¹ «Գործելով միասին» ծրագիրը Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության Միջազգային համագործակցության ինստիտուտի (Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ), «Հազարաշեն» Ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն (Հայաստան) և «Պատմության հիմնադրամ» (Թուրքիա) կազմակերպությունների համագործակցությամբ իրականացվող հայ-թուրքական հաշտեցմանն ուղղված ծրագիր է, որին նախորդել են «Լսելով միմյանց» և «Խոսելով միմյանց հետ» ծրագրերը: «Գործելով միասին», ինչպես նաև նախորդ բոլոր ծրագրերը ֆինանսավորվել են Գերմանիայի արտաքին գործերի նախարարության կողմից: «Գործելով միասին» ծրագիրը չորս հիմնական բաղադրիչների միավորում է՝ բանավոր պատմությունների հավաքագրում, ճամփորդական ամսագիր, աճող արխիվ և այս տեքստը՝ որպես ճամփորդության տեքստայնացում:

թուրք բարեկամներին ցույց տալու, թե ինչպես է հայ-թուրքական հաշտեցման գործընթացն ընկալվում հայկական կողմում:

2015 թ. Ստամբուլում մասնակցեցի մի լայնածավալ ռեֆլեքսիայի, որին հրավիրված էին հայ-թուրքական հաշտեցման գործընթացում ընդգրկված կազմակերպություններ, դոնորներ, ծրագրի մասնակիցներ և այլն. բավականին պատկառելի կազմ՝ երկու երկրներից: Ռեֆլեքսիայի ընթացքում բազմաթիվ պաթետիկ ստրեր հնչեցին հայ-թուրքական վաղնջական բարեկամության մասին, ու նրանց լսելով՝ զարմանում էի, թե ինչու է հայ-թուրքական սահմանը փակ: Զարմանքը մի պահ ընդհատվեց, երբ թուրքական կողմից մի կին համարձակվեց խոսել հաշտեցման գործընթացի դժվարությունների, այսինքն՝ նույն բանի մասին տրանագծորեն հակառակ ընկալումների բախման մասին: Նրան պատասխանեցին, որ գնում է սխալ ճանապարհով, ու ցույց տվեցին ճիշտ ճանապարհը: Որից հետո կինը լռեց: Ես չկարողացա հետը խոսել, որովհետև նա շատ արագ դահլիճից հեռացավ, ու ռեֆլեքսիան նորից շարունակվեց հայ-թուրքական վաղնջական բարեկամությունը վերականգնելու ազնիվ ու վսեմ տոնայնությամբ: Զարմանքը շարունակվեց:

«Գործելով միասին» ծրագիրը նախատեսված էր մեկնարկել 2015 թ. սեպտեմբերի 1-ին Ստամբուլից: Որոշված էր, որ 23 օրում խումբն անցնելու է Ստամբուլ–Այաշ–Չանքըր–Գերսիմ–Վարդո–Ադրը–Կարս–Գյումրի–Թալին–Էջմիածին–Երևան երթուղիով, որպեսզի 20 հայ և թուրք երիտասարդներ փորձեն անցնել 1915 թ. ապրիլի 24-ի արքայի ուղիներով:

Սակայն այդպես չեղավ: Թուրքիայի մասով: Որովհետև 2015 թ. հունիսի 7-ին Թուրքիայի խորհրդարանական ընտրություններում ընդդիմադիր քրդամետ ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունը, մոտ 13 տոկոս հավաքելով, մտավ խորհրդարան: Որին սակայն հաջորդեցին նոյեմբերին նշանակված նոր ընտրություններ: Բայց հունիսի վերջից արդեն մեր քուրդ և թուրք եղբայրներն իրար հետ այնպես կովշտորեցին, որ Դի–Վի–Վի Ինթերնեյշնալը, առաջնորդվելով խմբի անվտանգության և ապահովության նկատառումներով, որոշեց սեպտեմբերի 1-ին նախատեսված Թուրքիա այցելությունը հետաձգել առնվազն մինչև նոյեմբեր: Հույսով, որ ընտրություններից հետո կրքերը կհանդարտվեն: Սակայն կրքերը հանդարտվելու փոխարեն ավելի բորբոքվեցին, ու անհանգիստ օջախներն ավելի շատացան՝ ընդգրկելով Թուրքիայի ավելի ու ավելի լայն շրջաններ՝ այսպիսով ավելի նեղացնելով հայ–թուրքական բարեկամություն քարոզող մեր խմբի այցելության

ողակները: Ի վերջո, իրադրությունն ավելի շիկացավ, ու որոշվեց, որ Թուրքիա չենք գնում:

Սա տեքստը կազմակերպելու առումով որոշ դժվարություններ առաջացրեց, որովհետև որոշել էի, որ օրագիրը բաղկացած է լինելու երկու մասից, որոնցից յուրաքանչյուրը համարժեքորեն կարտահայտեր Հայաստանում և Թուրքիայում անցկացված ճանփորդությունները: Սակայն քանի որ Թուրքիայի հատվածը չեղարկվեց, ստեղծված վակուումը լրացրի հաշտեցման գործընթացում ունեցած իմ փորձառությունից բխող պատմություններով, որպեսզի հնարավորություն ունենայի խոսելու հայ-թուրքական հարաբերությունների տարբեր շերտերում առկա խնդիրների մասին, որոնք հիմնականում աշխատում են շրջանցել: Սյո է պատճառը, որ տեքստը գուտ վավերագրությունից բացի պարունակում է հորինվածքային տարրեր: Սյոպիսի հորինվածք է, օրինակ, Ցեղասպանուհու կերպարը կամ վիրտուալ գնացքը, որով ճանփորդում են Կարսում ծնված իմ հայրական պապիկի հետ, որին, սակայն, երբեք չեն տեսել: Սակայն տեքստի հերոսներն իրական մարդիկ են՝ 20 հայ և թուրք երիտասարդներ, կազմակերպիչներ Հայաստանից, Թուրքիայից և Գերմանիայից:

Մաքուր վավերագրությունը ներկայացված է օրագրային նոթերով, որոնք թվագրված են կոնկրետ օրերով, և որոնց բովանդակությունը գրված է ճանփորդության ընթացքում, սակայն հորինվածքային տարրերն ավելացրել ու տեքստը ամբողջացրել են

ծրագրի ավարտից հետո՝ արդեն 2016 թ. հունվար-մարտ ամիսներին, երբ պարզ դարձավ, որ Թուրքիա չենք գնալու:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել Գի-Վի-Վի Ինթերնեյշնալին նման հնարավորություն ընձեռելու համար, որովհետև 2011 թ-ից ընդգրկված լինելով հայ-ադրբեջանական, իսկ 2013 թ-ից արդեն հայ-թուրքական հաշտեցման գործընթացում՝ որոշակի ճանապարհ էի անցել ու որոշ փորձառություն կուտակել, որոնք ցանկանում էի ինչ-որ կերպ տեքստայնացնել: Փորձել եմ խմբի աշխատանքն ու ծրագրի տարբեր գործողությունները նկարագրելուն զուգահեռ՝ տեքստում արտահայտել իմ փորձառությունից բխող որոշ մտահոգություններ, որոնց մասին գիտեն բոլորը, բայց որոնց մասին ոչ ոք հրապարակայնորեն չի խոսում:

ՄԱՍ Ա.

Գյումրի-Կարս գնացքում

Գյունրվա¹ Թուրքի մայլա² կոչվող թաղամասում են: Անհույս-քայլանդոր: Մի մայլա, մի Ուրի բաբա, ինքն էլ 80-ականների վերջին քաղաքը լքած: Մարդ երեկվա կերածը չի հիշում, դե արի ու քառորդդարյա հնության անուն պեղի: Թուրք գործընկերս, սակայն, լիահույս վճռականությամբ քայլում է: Մուրատը: Լճակյաց ու քչախոս մի երիտասարդ թուրք, որ Աջապահյանի³ հետ հանդիպման ժամանակ, տեղեկանալով թաղամասի գոյության մասին, երկու ոտքը մի կոշիկի մեջ դնելով՝ որոշել էր մի քանի ժամվա ընթաց-

¹ Հայաստանի երկրորդ խոշոր քաղաքը. գտնվում է Հայաստանի հյուսիսարևմտյան հատվածում և Թուրքիայի սահմանից 7-10 կմ հեռավորության վրա:

² Թաղամաս Գյունրիում: Այժմ անվանակոչված է Արցախի անունով, սակայն ժողովրդի մեջ դեռևս շրջանառվում է Թուրքի մայլա անվանումը, որտեղ նախախորհրդային ժամանակներում հայերի հետ միասին ապրել են նաև թուրքախոս մահմեդականներ: Հայերը խոսակցական լեզվում Անդրկովկասում ապրող բոլոր թրքալեզու մահմեդականներին անվանում են թուրք:

³ Միքայել եպիսկոպոս Աջապահյան, Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ:

քուն Գյումրիում Ալեքսանդրապոլի⁴ հետքերը պեղել՝ թուրքական տներով-բանով, հետն էլ՝ քանի մը պարկ հիշողություն, անուն, պատմություն հայթայթել, որոնք կարող էին ուղիղ և անմիջական կապ ունենալ Սեբաստիայի⁵ հորական պապի տան հետ. այն տան հետ, որը հայկական էր, սակայն պապը՝ ոչ:

Թուրքական հետքեր, այդուհանդերձ, կան: Որոնց մասին թուրքերը չգիտեն, վասնզի չենք խոսում իրար հետ՝ կլինի արդեն մի հարյուր տարի: Ու չգիտեն նրանք, որ թուրքերեն բառերի⁶ մի որոշ զանգված վաղուց մեր առօրեականության մաս է դարձել՝ որպես լուռ, բայց խոսուն վկաներ մեր համատեղ անցյալ կյանքի:

Ամենուրեք հոգնատանջ լռություն է: Կիսափոշոտ ու սալարկի կարոտ փողոցներում դեպքից դեպք ես մարդ տեսնում: Թեպետ Թուրքի մայլեն քաղաքի կենտրոնից շատ էլ հեռու չէ: Շուրջբոլորը ցածրիկ տներ են շարված, որոնք անկանոն արահետներով բացվում են դեպի այլ նույնակերպ փողոցներ ու ոլորվելով վերջանում ինչ-որ փակուղիներում:

⁴ Մինչև 1840 թ. քաղաքի անվանումը եղել է Գյումրի, որից հետո 19-րդ դարի սկզբին Ռուսական կայսրության կողմից՝ Արևելյան Հայաստանը նվաճելուց հետո այն անվանակոչվել է ռուս ցար Նիկոլայ I-ի կնոջ՝ Ալեքսանդրայի անունով:

⁵ Թուրքիայի Սըվաս քաղաքի նախկին՝ հայկական անվանումը:

⁶ Հայերենում առկա արաբերեն ու պարսկերեն փոխառյալ բառերի մի մասը հայերենին անցել է արաբների ու պարսիկների հետ անմիջական շփման միջոցով, իսկ որոշ մասն էլ՝ թուրքերենի միջոցով: Ներկայիս հայերենը՝ թե գրական լեզուն և թե բարբառները, հարուստ են նաև թուրքերեն, ռուսերեն և այլ լեզվական փոխառություններով:

Չգիտեմ՝ Մուրատին ո՞նց բացատրեմ, որ հիմա Գյումրիում ոչ մի թուրք չկա, ինչպես նաև՝ թուրքի տուն: Ինքն էլ է հասկանում, թերև: Սակայն հղվելով հարևանուհի տիկին Ռուզանի խոսքին, որ մի քանի հատակեցնող հարցից հետո, այդուհանդերձ, պնդեց, թե Ուրի բաբան Թուրքիայի թուրք է, մտքում փայփայում է, որ Գյումրիում թրքուհու տուն է գտել:

Տունն էլ մի տուն լիներ: Ժանգոտած կանաչ թիթեղյա մի հյուղակ՝ շրջափակված վշտակոծ լռությամբ, որի կողքին երևում էին տեղահանված մեկ այլ նույնպիսի հյուղակի բետոնե քարուքանդված հիմքերը: Նրա տունը, եթե կարելի էր այդպես անվանել, ճահճագույն սգված մի զանգված էր, դեպի որտեղ մեզ առաջնորդեց Ուրի բաբայի նախկին հարևանի երիտասարդ որդին ու որոշ կցկտուր մանրամասներ պատմեց նրա կյանքից:

Ու տեսնել էր պետք Մուրատի հուզմունքը, երբ պարզվեց, որ գտել ենք Ուրի բաբայի տունը: Ու դրան հաջորդող սառած ժպիտը, երբ այգի մտնելով՝ պարզվեց, որ եղածը մի քոլիկին վայել հյուղակ է:

— Չի կարող պատահել, որ սա լինի Ուրի բաբայի տունը,— դուրս պրծավ նրա բերանից այն բանից հետո, երբ տիկին Ռուզանի թոռնուհին ոլոր–մոլոր արահետներով տարավ ու կանգնեցրեց խիտ թփերով շրջապատված կիսախարխուլ, երերուն մի ժանգոտ դռան առջև, որը ոտքի մի լավ հարվածից բերանքսիվայր կպառկեր: Ինչո՞ւ չի կարող պատահել, սիրելի՛ Մուրատ: Պալմտ էիր ուզում տեսնել՝ ոսկեհուռ պատերով զարդարված, թե՛ քարե երկհարկանի վիլլա

մը: Թուրքերի⁷ հետ երկխոսել չի լինում: Երեխայի նման նեղանում են: Եղբայր, չգիտե՞ս՝ ինչի ես եկել: Չլինի՞ կարծում ես, որ եկել ես՝ իրար ջան ասենք ու ջան լսենք: Դա էլ կլինի, բայց ավելի կարևոր գործ կա: Հարյուրամյա հնության: Աղոտ հույսեր կան, որ Հայաստան գալուց առաջ գլխի ընկել ես: Որ էստեղ բաներ ես տեսնել-լսելու, որոնք դուրդ հաստատ չեն գալու: Ու սա դեռ նրանք, ովքեր Սուրատի պես ներքուստ պատրաստ են երկխոսության: Բայց մի տեսակ կա, ինքն էլ մեծամասնական տեսակ, որ էն գլխից գիտի՝ ինչն ինչոց է, ու, բնականաբար, դավաճան⁸ հայերն էին մեղավոր կատարվածի մեջ:

Հիմա ինքն էլ, իմացար, առաջնորդվելով եղբայրական բարի ցանկություններով ու ընդառաջ գնալով քաղաքակիրթ աշխարհի հորդորներին, ցանկանում է մեծ եղբորը վայել տոնով քանի մը խոսք մեր հետ փոխանակելու շնորհ մը պարգևել: Որի համար, գիտե՞ս, պիտի ծունր դրած ոտքները պագենք ու երջանկությունից փակված աչքերով շնորհակալություն շնջանք նման մեծապատիվ վարմունքի համար:

⁷ Գործածելով թուրք կամ թուրքեր եզրերը՝ հեղինակը նկատի ունի անձի ոչ թե էթնիկ պատկանելությունը, այլ Թուրքիայից լինելը: Թեպետ Թուրքիայում ապրում են բազմաթիվ էթնիկ ինքնությամբ մարդիկ, սակայն հայ հանրությունում Թուրքիայի բնակիչներն ընկալվում են որպես թուրք:

⁸ Ցեղասպանության մասին Թուրքիայի պաշտոնական թեզը երկար տարիներ հյուսվել է հայերի դավաճան լինելու շուրջ, որոնք անցել են ռուսների կողմը:

Ուրի բարան, սակայն, ամենայն հավանականությամբ աղբրեջանուհի էր, որն այժմ հավանաբար ապրում է անազգ ժամանակի ու աղբրեջանական տարածության հատման ինչ-որ կետում ու որոշ ստորեր ունի, եթե, իհարկե, դեռ Ալլահի կանքով չի լքել երկիրը՝ հանուն երկնային արքայության: Մենք գերադասում ենք ընտրել տարբերակը, որ անազգ ժամանակի անարգ հարվածներին դիմակայելով՝ նա երբեմն հիշում է այն նշները, որ վաճառում էր Աղբրեջան-Հայաստան չսահմանից դեպի Լենինական⁹ առաքված բարեկամների միջոցով, ու որոնցից մի քանի նուա 1970-ականներին գնել ու կերել է իրենց սայլի Ռուզանը հղի ժամանակ, վասնզի սիրտը նուա էր ուզում: Իսկ աղբրեջանական նշները հո՛ նուա չէին: Պանի-պանի-պանի: Նույնիսկ ես այդ նշների հետ հիշողություններ ունեմ: Հորս պատճառով, որ Զվարթնոցի տոնավաճառում¹⁰ պատահաբար հանդիպել էր մի աղբրեջանցու, որ նուա էր բերել վաճառելու ու լույսով չէր հասցրել հետ գնալ: Ու այդ գիշերն օթանանեց մեր տանը՝ ձեռքի տակ ունենալով երեք տռուզ պարկ՝ լի խոշոր ու բոտրագույն նշներով:

⁹ Գյումրու մյուս անվանումը 1924–1990 թթ.: Անվանակոչվել է կոմունիստների առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինի անունով:

¹⁰ Էջմիածին-Երևան մայրուղուն կից տեղակայված Զվարթնոցի տոնավաճառը շատ երկար տարիներ եղել է Խորհրդային Հայաստանի միակ տոնավաճառը, որտեղ հագուստ էին վաճառում: Երբեմն նաև՝ միրգ: Հիմա այդ վայրն ավերակ է:

Ուրի բարայի վաճառած նռները դեպքից առնվազն հիսուն տարի հետո առարկայացել ու կանրջել էին Հայաստան–Թուրքիա փակ սահմանի արանքով սողոսկած տկար երկխոսությունը, որը չգիտես երկխոսությունն է, թե՛ հայերեն մենախոսություն:

Ուրի բարայի վաճառած նռների պատմությունը Մուրատին դուր է գալիս: Նա ցանկանում է տեսնել տիկին Ռուզանի որդուն, որ մոր փորում սնվել էր այն նռների հյուսված, որ կերել էր տիկին Ռուզանը, որ գնել էր Ուրի բարայից, որը վաճառում էր՝ չաշխատելու և երկու որբուկ աչքի առաջն ունենալու հանգամանքների բերումով դրդված: Սյն նռների,¹¹ որոնք մանկության պես քաղցր էին ու անձկալի:

* * *

Ուրի բարայի տան որոնումներին նվիրած Մուրատի անխոնջ ցանկությունը մեջս արթնացնում է երկանյա զգացողություններ, որոնք ինձ տանում են կլոր երկու տարով հետ, երբ «Հրանտ Դինք» հիմնադրամի¹² մի ծրագրով առաջին անգամ գնացի Ստամբուլ, ու մեզ տարան Քունքափի¹³ տեղի բողո-

¹¹ Թեպետ Հայաստանի որոշ մարզերում ևս նռենի մշակվում է, սակայն խորհրդային շրջանի մթերքի շուկաներում Ադրբեջանից բերված նռներն ավելի նախընտրելի էին, որովհետև ավելի խոշոր էին, կարմիր և քաղցր:

¹² 2007 թ. հունվարի 19–ին թուրք ազգայնականի կողմից սպանված թուրքահայ լրագրող Հրանտ Դինքի անունը կրող հիմնադրամ Ստամբուլում:

¹³ Թաղամաս Ստամբուլի Ֆաթիհ վարչական շրջանում, որտեղ պատմականորեն բնակվել են պոլսահայերը: Տարիների ընթացքում, երբ

քական եկեղեցու նկողում ծվարած հայաստանցի հայ երեխաների համար դպրոց: Ու բան–ման զգացի: Քումքափիի փողոցներում: Ծերուկ Ջոյսը բան–մանին հաստատ անուն կտար, բայց մենք՝ ուր, Ջոյսն՝ ուր: Ծնվածդ օրվանից կաթեցնում են, թե քիչ¹⁴ ենք մենք, ու կարճ է մեր մտքի ուղենիշը: Հակառակ դեպքում հենց հիմա լեզվիս երկարության մի նախադասությամբ մտքակոխ կանեի բան–մանի պահերով: Դե, փաստացի, հայի շունչ էի զգացել Քումքափիում, թեպետ դրա համար ոչ մի հիմք էլ չկար: Ամեն ինչ՝ մինչև վերջին խազ սահմեղականություն էր շնչում՝ սկսած լեզվից, վերջացրած նեղլիկ փողոցների եզերքով շարված ցածրապնդ սեղան–աթոռիկներով: Միտքդ կարող է խաբվել, սակայն հոգիդ՝ ոչ: Հավանաբար ասած կլինի միջնադարյան մի իմաստակ: Չլինի էլ՝ կհայտնագործվի: Բրիտանացի գիտնականները¹⁵ էն գլխից էդ գործի վրա են:

Ստամբուլն ընդլայնվեց, պոլսահայերը տեղափոխվեցին ավելի նոր, բարեշեն թաղամասեր: Հիմա այնտեղ բնակվում են Հայաստանից ժամանած աշխատանքային միգրանտները՝ հիմնելով «Փոքրիկ Հայաստան» ոչ ֆորմալ համայնք: Քումքափիում են գտնվում նաև Պոլսո հայ պատրիարքարանը, Ս. Աստվածածին Մայր եկեղեցին, Ս. Հարություն առաքելական և Գետիկ փաշայի ավետարանական եկեղեցիները:

¹⁴ Հայ հանրության շրջանում գերակա կարծրատիպ, համաձայն որի Հայաստանը, լինելով քիչ բնակչությամբ փոքր երկիր, դարերի ընթացքում միշտ հալածվել ու ճնշվել է թշնամիների կողմից, և հայերը միշտ գտնվում են ստորադաս վիճակում և չեն կարող ոտք մեկնել աշխարհի հետ:

¹⁵ Հեգնական մեմ: Հայաստանի մամուլի մի որոշ հատված եվրոպական մամուլից թարգմանություններ, հողվածներ է ընտրում, որտեղ հղում է արվում բրիտանացի գիտնականներին, ու այդ գերակշռու-

Ուրի բաբային կամ ավելի ճիշտ՝ նրա մասին եղած հիշողությունները գտնելու համար ոտքի տակ ենք տալիս Թուրքի սայլեն, որտեղ Սուրատն արդեն նախորդ օրը եղել էր: Ես նրան օգնում եմ թարգմանության հարցում. մեր շփման լեզուն անգլերենն է: Սակայն հայտնաբերում եմ, որ Գյումրիում թուրքերեն ինացող բազմաթիվ սարդիկ կան. անհայտ փաստ երկրիս մասին, որտեղ ապրելով՝ թվում է, թե ամեն ինչ գիտես քո ենթանշակույթների մասին: Խաբուսիկ գիտելիք է՝ սովետական¹⁶ ծագմամբ, երբ ինացության սահմանները կոնկրետ ու որոշակի էին՝ ընդգրկելով, իբրև անսահմանությունը:

Հենց այդ սարդկանց օգնությամբ էլ Սուրատը նախորդ օրն ընկել էր Ուրի բաբայի հետքի վրա: Թուրքական հետքեր փնտրելիս խոսել էր նվազ թուրքերեն ինացող մի մեկի հետ, որն էլ նրան տուն էր հրավիրել ու սեղան բացել: Տանեցիներից մեկն էլ հընթացս ասել էր, թե հարևանությամբ Ուրի բաբա անունով մի թուրք է ապրելիս եղել:

թյունը ծնել է մի մեմ, որ եթե մի ֆենոմեն ուսումնասիրված չէ, ապա բրիտանացի գիտնականներն անպայման դա կանեն:

¹⁶ Խորհրդային շրջանում հասարակությունում չվիճարկվող ճշմարտություն էր ցանկացած տպագիր տեքստ կամ հանրային խողովակով արտաբերված միտք: Քանի որ այդ խողովակը շատ նեղ էր ու միատեսակ, հասարակական լայն խավն ապրում էր բացարձակ ճշմարտություններով սահմանագծված իրականությունում, որտեղ ստեղծված միօրինակության պատրանքի որևէ մեկնաբանություն կամ հարցադրում չկար: Խոսքը չի վերաբերում էլիտաներին, որոնք ունեցել են ինֆորմացիայի այլ խողովակներ:

Հինա եկել ու ուզում է Ուրի բարայի տունը գտնել: Իաթա է էս տղեն: Մի հսկա մայլա, մի Ուրի բարա: Դե արի ու գտի: Մնեռոյս գործ է: Ստածում են ու կողանց մտահայում Սուրատի անթափանց դենքը, որը յուր մտքերը սքողելու համար հետը քառսուն թոփ անվա կտավ է ման ածում:¹⁷

Սուրատը, սակայն, անդրդվելի է: Որոշել է, որ գտնելու է Ուրի բարայի տունը, ու ես էլ են մանրից վարակվում նույն տրամադրությամբ: Աշխուժորեն հարցուփորձ ենք անում բոլոր անցորդներին: Հընթացս ներկայացնում են Սուրատին: Ստում են, որ թուրք է ու զինված քանքարահեն մտքերով ու աննկուն տրամադրությամբ, եկել է՝ հայ-թուրքական վաղնջական բարեկանությունը վերականգնելու ազնիվ մտադրությամբ: Իհարկե: Մնտարակոյս: Կասկածողին ոտքի վրա կհանոզենք: Հղացքով, որ հետը բերել է Ստամբուլից:

Իմ հայրը ծնվել է հայի տանը: Ստում է Սուրատը: Իմ հայրն ասել է, որ Սեբաստիան հայկական քաղաք է եղել: Ու մի երկու տարի առաջ որոշեցի գնալ Սեբաստիա: Հեծանիվով: Ես սիրում են հեծանիվը, որովհետև ապրում են հեծանիվի ժամանակում: Հեծանիվի ժամանակը բազմաթիվ բաներ է թույլ տալիս, որ հնարավոր չէ պատկերացնել ավտոմեքենայի ժամանակում: Զորօրինակ, հովիվ դառնալ ու այդ կերպ փող հավաքելով՝ իրականացնել մտադրվածս ճանփորդությունը: Հեծանիվը նաև մարդկային է, ու

¹⁷ Փոխառություն «Սասունցի Դավիթ» հայկական էպոսից:

հեծանվելով սարդուն ավելի ես սնտենում, իսկ ավտոմեքենայի ժամանակն արագ է, ու այն հեռացնում է սարդուց: Երբ ես հեծանիվ եմ վարում, ստնում եմ հեծանիվի ժամանակը:

Ես ուզում եմ շուրջերկրյա ճանփորդություն իրականացնել ու այցելել բոլոր հայաշատ վայրերը: Որոշել եմ մի քար վերցնել Սեբաստիայի պապական տանից ու հետո սնն ածելով՝ ցուցադրել բոլորին: Առաջինը գնալու եմ Վաշինգտոն, որովհետև Ստամբուլում մի հայ կնոջ հետ ծանոթացա, որի պապը Սեբաստիայից է: Այդ կինն ամուսնու հետ պտտվում էր աշխարհի շուրջը: Իրենց սնտոցիկլետով: Բայց ես դա կանեմ հեծանիվով: Մարդիկ տարբեր կերպ են արտահայտում իրենց զգացմունքները, ես դա սնում եմ հեծանիվով, որովհետև իմ սարմնի սնտերը շարժվում են հեծանիվի արագությանը: Ես մի քար կվերցնեմ սեբաստական իմ հորական տանից ու կտանեմ այնտեղ, որտեղ շատ հայ կա: Ցանկանում եմ այդ ժեստով ցույց տալ, թե ինչ է Ցեղասպանությունը:

* * *

Մուրատին ներկայացնում եմ անցորդներին: Ու հատկապես նշում եմ նրա թուրք լինելը: Որոշ անցորդներ սառն ու չոր կարճ են կապում, հատկապես մի երիտասարդ, որի խանութի տեղում, սսում էին, թե ժամանակին թուրքի տուն է եղել: Շատերը, սակայն, երկարուձիգ կանգնում են ու լայնարաց սրտով պատ-

նում երկու ժողովուրդների բարեկանության մասին: Ու ժպտում է Մուրատը: Փայլող դեմքով: Տեղով մեկ ճառագում է: Սակայն անցորդներից մեկն ասում է, որ հայերի ու թուրքերի միջև դարավոր թշնամություն կա: Ու այդ թշնամությունը նույնությամբ պրոյեկտված էր հայ-ադրբեջանական հարաբերություններում, որոնք ինչ-որ 30 տարի առաջ դեռևս եղբայրաբար եփվում էին մի հսկա կաթսայում: Կինը շարունակում է, սակայն Մուրատը չի լսում: Չի ցանկանում լսել, թե ինչու են հայերն ասում թուրքերին: Գնանք: Ասում է: Շարունակենք Ուրի բարայի որոնումները: Ու շարունակում ենք: Մինչև պատահաբար հանդիպում ենք տիկին Ռուզանին, որն իմանալով Մուրատի թուրք լինելու մասին, անմիջապես տուն է հրավիրում՝ սուրճ խմելու, ու պատմում, որ թուրքերի հետ շատ ջերմ հարաբերություններ են ունեցել: Ու մեկ էլ խոսքի մեջ ասում է, որ Ուրի բարա անունով հարևան են ունեցել, որ Դարաբադյան պատերազմն սկսվելուց առաջ բազմաթիվ ադրբեջանցիների հետ հեռացել է Հայաստանից: Մ'յ քեզ բան: Տեսա՞ր՝ ո՞նց գտնվեց: Մուրատի ուրախությանը չափ չկար: Ես էլ են միանում: Տիկին Ռուզանի թոճնուհին Մուրատի սուրճը մատուցում է մեկ բաժակ ջրի¹⁸ հետ, որովհետև ռուսերեն թարգմանությամբ թուրքական սերիալներ է նայում:

¹⁸ Թուրքիայում սուրճը պարտադիր մատուցվում է մեկ բաժակ ջրի հետ, սակայն Հայաստանում այն սովորաբար մատուցում են քաղցրավենիքի հետ:

չուք-չարաք-չարաք-չարաք, գնացքներ պանուն, չուք-
չարաք չարաք-չարաք, տանից են հեռանում

չուք-չարաք-չարաք-չարաք, գնացքներ պանուն, չուք-
չարաք չարաք-չարաք, տանից են հեռանում

ճանապատաարհի, ճանապա րհ, ճանապանրհ,
ճանապարհ, ճա-նաապարհ²⁰

Գյունրի-Կարս գնացքուն են:²¹ Իրիկուն է, ու հաս-
նում ենք Գյունրի: Ես նստած են պատուհանի կողքին:
Պապս պատում է, թե ոնց է թուրքերից փրկվել, իսկ
ես ստահայում են Գյունրվա մայրամուտը: Մտքեր
չկան: Ինչպես նաև այդ մայրամուտը նկարագրելու

¹⁹ Թուրքերեն բունու նշանակում է հացթուփ:

²⁰ Հատված Տոտիկ մականունով Աշոտ Բեգոյանի «Ճանապարհ» եր-
գից, որը 1980-ականների հայկական ռաբիսի հիթերից էր:

²¹ Գյունրի-Կարս երկաթգիծը շահագործվել է 1899 թ. հունիսի 21-ին
(«Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթգծի կառուցումը», Սոնա
Միրզոյան, Ջանդան Բաղեմ, էջ 83) և գործել է ընդհուպ մինչև
1993 թ. հուլիսի 6-ը, երբ հայ-ադրբեջանական կոնֆլիկտի համա-
տեքստում Թուրքիան միակողմանիորեն փակեց սահմանը Հայաս-
տանի հետ:

ցանկություն: Գե մայրամուտ է, էլի: Արևն իր համար պտտվում է, մարդիկ՝ այդ մասին հեքիաթներ սոգոնում: Մարդուն թողնես՝ մի գլուխ սոգոնի: Եույն ձևով կրոն կոչվածը չնոգոնեց, որի պատճառով իրար են սորթում: Հինա դրել ես՝ արի տար: Աղջիկ ես՝ տակից դուրս արի:

բիրտ մատերիան բոլոր մարդկանց համար է, բայց հատկապես նրանց համար, որոնց միտքը պտտվում է իրենց քթի շրջակայքում
Խնչ կա սուրստանաներից ավելի հզոր, եթե ոչ՝ միտքը բոլոր հեղափոխությունները ծնվում են ստքում՝ հետո տեքստայնացվում
մնացածը մեթոդաբանության հարց է արդ, ուրեմն Խնչ կարևոր է մատերիայի տեսակը սահմաններ չկան
փորձած և հանգզված է ես նստած եմ գնացքում
ականջներիս մեջ՝ տոտիկը ստքով՝ որտեղ պատահի
Իսկ ավելի կոնկրետ՝ որտեղ ցանկանամ օրինակ՝ հորական պապուս հետ գյումրի-կարս գնացքի մի կուպեում որով գնում ենք մագրա սա գյուղ է կարսում
որտեղ նա ծնվել, մեծացել ու մի երեք անգամ փրկվել է թուրքերից մի անգամ՝ թուրք ֆլաշնջու շնորհիվ

Ֆըռընջին: Սմեն ազգի մեջ էլ լավը կա: Եւ տեսավ, որ մոտ 1500 հայ սովից ու ցրտից մարագում մահանում է: Ցուրտն էլ ի՛նչ ցուրտ: Կարսի կտրող սառնամանիք: Ու օրը 10–20 դիակ էին դուրս հանում: Սարագից, որտեղ միայն ծղոտ էր: Ու ոջլակույտի մի կոնգլոմերատ, որի շարժմունքից ծղոտը ելնում–իջնում էր: Հայերն անբողջությամբ մերկ էին: Միայն մի լաթի կտոր էր փաթաթած կոնքերին: Թուրք չաուշն այդպես էր կարգադրել, որպեսզի գերիները չկարողանային փախչել: Ու այդպես մերկ էլ աշխատում էին: Մինչև գարուն 1500–ից մնացել էին 300–ը: Մյնտեղ մի լճակ կար սակայն, որի տակից տաք ջուր էր հորդում: Պապա չաուշի հետ լեզու էր գտել ու ամեն օր աշխատանքից հետո այնտեղ լողանում էր: Որտեղ էլ հանդիպեց ֆըռընջուն: Երա բազուկը կարճ էր ու չորս հոգու համար էր հագուստ ճարելու: Պապա ֆըռընջու առաջարկության մասին պատմում է միայն երեք հոգու: Միայն նրանց, որոնց վստահում է: Ու առավոտյան նրան կանչում են թուրք չաուշի մոտ: Չաուշը, թե՛ Հարութիկ, լսել են, որ ուզում ես փախնել: Գետնապատա՛ երդում–կական: Փրկություն չկա: Ու մարագից բերում են մի հայի, որը, փախուստի մասին մատնելով, հույս ուներ վճարել սեփական կյանքի գինը: Բնականաբար, սուխոյ ատկազ է գալիս պապա: Իսկ չաուշը հաստ գավազանը տալիս է պապուս, թե 50 զարկ տուր ընկերոջդ, եթե խաբում է: Ու տալիս է:

Ամեն մի զարկը՝ մի մահացու հարված: Մատնիչն այդ զարկերից մահանում է:

* * *

գնացքը շարունակում է փնջալ
պու-ու-նու-չըբ-չըբ-չըբ-չըբ-չըբ-չըբ
իսկ ես՝ տարուբերվել
պու-ու-նու-չըբ-չըբ-չըբ-չըբ-չըբ-չըբ
մեկ էլ վագոնավարը հայտարարում է
գյումրի-ախուրյան կայարան
հասանք, իջե՛ք

Օր առաջին, սեպտեմբերի 13

Մեր առաջին կանգառը Գյումրիում էր, սակայն մինչև Գյումրի գնալը մենք հանդիպեցինք երևանում ու կիսատ-պռատ ծանոթացանք Գրիգոր Լուսավորիչ փողոցում գտնվող մի հյուրանոցում: Որի լոգարաններից մեկում կատարյալ ջրհեղեղ էր: Խիստ կաակածներ ունեմ, որ Կարմենն²² էր պատճառը: Որովհետև մեր տասնօրյա ուղևորության ընթացքում նրան բաժին ընկած բոլոր համարների լոգարաններում նույն վիճակն էր:

Հետո լցվեցինք մարշրուտկաներ ու դուզ Գյումրի: Սակայն ճանապարհին երկու ժամով կանգ առանք

²² Կարմեն Բեքենբախ, արվեստի պատմաբան, Աճող արխիվի պատասխանատուն և ցուցահանդեսի համադրողը:

Աշտարակում,²³ որտեղ Կարենենց²⁴ սառնանում պիտի ճաշեինք: Կարենը հետաքրքիր աուրա ուներ, իսկ նրա պապական տունը լի էր տարաբնույթ պատմական իրերով ու հիշողություններով, հյուրասենյակի պատին նույնիսկ հրացան կար կախված, որը թեպետ ՀՀԸ-ի²⁵ ժամանակով բռնագրավել էին, սակայն հիշողությունների վրա էլ հո չէին կարող վետո դնել: Հենց այդ տան հյուրասենյակում էլ կայացավ մեր ծանոթությունը:

Մոտ 40 հոգի էինք: Հսկա մի խումբ: Որից գրեթե կեսը՝ հայ և թուրք սասնակիցներ, երկու գրող՝ ես ու Էքինը,²⁶ իսկ սնացածը՝ կազմակերպիչներ Հայաստանից, Թուրքիայից ու Գերմանիայից. մեկ սասնակցին՝ գրեթե մեկ կազմակերպիչ հաշվարկով: Ես մի սասնակատուն գիտեմ, որտեղ 8–9 երիտասարդներ են ապրում: Նրանց կյանքը կազմակերպում են 10 աշխատող, բայց դա չի նշանակում, որ խնդիրներ չկան:

Ուրիկեն²⁷ առաջարկում է, որ սասնակիցները ներկայանան ընտանեկան պատմություններով, ու

²³ Քաղաք Հայաստանում, Երևանից՝ 13 կմ դեպի հյուսիս–արևմուտք:

²⁴ Կարեն Հակոբյանը 2013 թ. իրականացված հայ-թուրքական «Խոտելով միմյանց հետ» ծրագրի հայկական խմբի փերֆորմանսի մենթորն էր: Ծրագրի նյութերը տպագրվել են 2015 թ. հայերենով, թուրքերենով և անգլերենով հրատարակված «Մուշ, քաղցր Մուշ» գրքում:

²⁵ Հայոց համագգային շարժում, 1988թ. սկսված քաղաքական շարժում, որը Հայաստանին տարավ անկախության ճանապարհով: Ղարաբաղյան պատերազմի ավարտից հետո որոշ մարդկանց մոտ զենքեր կային, ու մանր հանցագործությունները կանխելու նպատակով իշխանությունները հավաքում էին բոլոր զենքերը:

²⁶ Էքին Ջան Գյուկսոյ, ծրագրի թուրք գրողը:

²⁷ Ուրիկե Փուշ, «Գործելով միասին» ծրագրի ղեկավար, Գերմանիա:

ինքն էլ սկսում է: Թուրքական կողմից ստապահվում են Սուրատի սեքսատական պապի պատմությունը, ինչպես նաև Քրդստանից ժամանած Գուլեի ինքնաներկայացումը: Ճիշտ այդպես՝ Քրդստանից: Պատիլկ, չամիչի վրա մի աղջիկ համարձակորեն ներկայացավ՝ ես Գուլեն²⁸ եմ Քրդստանից:

Գերմանական կողմից ֆիքսվում է միայն հաղթանդամ, բարետես Ֆաբիանը,²⁹ որը ներկայանում է որպես ճամփորդական ամսագրի մինիստրի: Թեև այդ ամսագրի մասին նախնական պատկերացում ունեն, բայց դեռ լավ չեն պատկերացնում, թե ինչ բզեզ է:

Մյուս հիշողությունը, որ օրվա վերջին այդ հանդիպումից մնաց, այն էր, որ թուրքական կողմի մասնակիցները չափազանց բազմազան ծագում ունեին: Օրինակ՝ Փընարը չորս կողմից տարբեր արմատներ ուներ: Իսկ Լարիսայի մայրական տատը հայ էր: Երեք հոգի քուրդ էին: Հայկական կողմից ոչ մեկի հիշողությունը չի տպավորվում: Միայն այն, որ մեծ մասը ցեղասպանապորժ նախնիներ ունեին կամ որևէ կերպ կապված էին Արևմտյան Հայաստանի հետ, որն այժմ կոչվում է Արևելյան Անատոլիա:

Հետո իջնում ենք մառան, որտեղ ուտում ենք համադամ խորտիկներ ու կոկորդներս թրջում կարմիր կամ սպիտակ գինով՝ ըստ նախասիրության:

²⁸ Թուրքական կողմի մասնակից:

²⁹ Ֆաբիան Վեյս, ազատ լուսանկարիչ, «Ճամփորդական ամսագրի» գերմանական պատասխանատուներից:

Օր երրորդ, սեպտեմբերի 15

Երեկ առաջին օրն էր, ու Էնքան ինֆորմացիա էր կուտակվել, որ հասկացա՝ խորոված ուտելուց ու գինի խմելուց հետո ես դժվար կարողանամ կենտրոնանալ ու սենյակ մտնելուն պես միանգամից գլորվեցի դեպի անկողին: Ոչ մի օրագիր:

Իսկ էսօր՝ ժամը 5-ից հետո, երբ խմբերը ցրվեցին իրենց պատմությունների հետևից, ես որոշեցի բարձրանալ համար ու երկար աշխատել նոթերիս վրա:

* * *

Երեկ չէ մյուս օրը՝ Աշտարակից դուրս գալուց հետո՝ երեկոյան կողմ, հասանք Գյումրի ու տեղավորվեցինք Գյումրի հյուրանոցում: Պարզվեց՝ թուրքերը թուրքերի հետ են մնալու, հայերը՝ հայերի: Ինչ-որ խնդիր կար, որի իմաստն այն է, որ մենեջմենտը թե՛ Հայաստանում և թե՛ Թուրքիայում դեռևս լրջագույն խնդիր է: Մոտ 15 տարուց ավել է, որ ՀԿ սեկտորը Հայաստանում աշխատում է, բայց ինչ-որ պատճառներով փորձը չի կուտակվում, ու ամեն անգամ ամեն ինչ սկսվում է նորից: Ու հաշտեցման ճանապարհ որոնող հայ-թուրքական խումբն ամբողջ տասն օր անջատանջատ ապրեց:

Հյուրանոցի սպասասարահում տնօրենը մոտեցավ ու ասաց, որ մի երկու տարի առաջ մեկ ուրիշ հայ-թուրքական խումբ է իրենց մոտ իջևանել: Պարզվեց՝

ծրագրի նախորդ փուլն էլ է այստեղ կանգ առել: Լուսինեն³⁰ տնօրենին նվիրեց Մուշի³¹ մի օրինակ:

Հետո գնացինք ընթրելու: Սղնանը³² մոտեցավ ու մի փաթեթ ինձ հանձնեց. թուրքական կողմը փոքրիկ նվերներ էր պատրաստել մեզ համար՝ Ստամբուլի մասին բուկլետներ, խտասկավառակ, ծրագրի անունը կրող շապիկ և կտավե պայուսակ:

Ես շուտ գնացի քնելու: Բայց իմացա, որ թուրքերը խանութից գինի էին առել ու հյուրանոցի աստիճաններին նստած՝ խմում էին:

* * *

Իսկ երեկ առավոտյան՝ նախաճաշելուց հետո, գնացինք Գյումրվա հայտնի Վարպետաց փողոցում գտնվող սոցիալ-կրթական կենտրոն: Սա Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմին պատկանող մի կառույց է, որտեղ էլ պիտի անցկացնեինք Գյումրիում նախատեսված մեր բոլոր հանդիպումները, իսկ կենտրոնի աշխատակիցները խմբի անդամներին օգնելու էին բացահայտել քաղաքն ու հետաքրքիր պատմություններ հայթայթել:

Օրը կիրակի էր, ու պատարագի ժամը: Հենց տեղ հասանք, կենտրոնի անմիջապես հարևանությամբ գտնվող եկեղեցու զանգերն սկսեցին դողանջել ու

³⁰ Լուսինե Խառատյան, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի ղեկավար:

³¹ «Մուշ, քաղցր Մուշ», 2011 թ. իրականացված «Խոսելով միմյանց հետ» ծրագրի արդյունքում հրատարակված գիրք:

³² Թուրքական կողմի մասնակից:

շարունակեցին դողանջել մինչև կեսօր: Պարզվեց, որ ախար օրը կիրակի էր ու պատարագի ժամը: Ինչ–որ մեկը նկատեց սիմվոլիզմը. թուրքերն ու եկեղեցու անլթելի զանգակատունը:

Ուրիկեն, Կարմենն ու Լուսինեն հերթով ներկայացրին ծրագրի այս կամ այն կոնպոնենտը: Ուրիկեն մի սեսիա նվիրեց Ցեղասպանությանը, որպեսզի մարդիկ արտահայտվեն, թե ինչ է Ցեղասպանությունն իրենց համար, ու ինչ կարելի է անել դրա հետ: Թուրքական կողմից ռադիկալ ստեքեր հնչեցին, բայց դրանք գալիս էին հիմնականում քուրդ մասնակիցների կողմից: Որոշ մասնակիցներ չարտահայտվեցին: Թե՛ հայ, թե՛ թուրք մասնակիցներից:

Փրնար.³³ հայերի գոյության մասին կասկածները

Հայերն այդ հողում հազարավոր տարիներ են ապրել: Բայց մարդիկ զարմանում են, երբ ասում են, թե այստեղ հայեր են ապրել:

Հրզնի.³⁴ հայ–քրդական կերակուր թուրքերի սեղանին³⁵

Իմ պապը մասնակցել է ցեղասպանությանը: Քրդերը սպանել են հայերին: Այդ թվում՝ իմ պապը: Ու

³³ Թուրքական կողմի մասնակից:

³⁴ Թուրքական կողմի մասնակից:

³⁵ Քրդերի շրջանում տարածված արտահայտություն, որն այժմ գործածում են նաև թուրք հետազոտողները: Այն ամրագրվել է 20–րդ դարի 80–ականներին՝ Դիարբեքիրում հրատարակված «Տատիս պատմությունները» գրքում, որում հեղինակն իր տատի շուրթերով ասում է, որ հայերի ջարդը թուրքերի առավոտյան նախաճաշն էր, իսկ քրդերի ջարդը պիտի ճաշը լինի:

մեր, այսինքն՝ քրդերի սեփականությունը Մարդինում
և Դիարբեքիրում պատկանել է հայերին:

Բայց եթե թուրքերը հայերով նախաճաշեցին,
քրդերին հիմա պատրաստում են լանչին:

*Լուսինե. Կրեպակլանի փոփոխություն 100 փարի
հեզո*

Ժամանակն է հաղթահարելու տրավման, բայց
մեզ համար դեռևս խնդիր է, թե ինչպես պիտի մե-
ծացնենք մեր երեխաներին: Մենք սկսել ենք ստաճել,
թե ինչպես առաջ գնանք և ոչ թե լաց լինենք: Շատերը
որոնում են, թե ինչպես առանց սնոռանալու շարունա-
կեն ճանապարհը:

* * *

Մինչև կանցնեինք Աճող արխիվին, ընդմիջում էր,
որի ընթացքում Արսենն³⁶ իմիջիայլոց ասում է, որ Կար-
մենը նախորդ սեսիայի ժամանակ շարՖ էր գործում,
ու ես ֆիքսվում եմ, որովհետև ինքս երկար տարիներ
գործել եմ: Կարմենը թանգարանային արվեստի հա-
նադրող է՝ Աճող արխիվի մինիստրի: Ես սև սաթե
նագերով՝ Միրեյ Մաթյուի կտրվածքի ոճով մի Կար-
մեն էր, որը գործելու ընթացքին հատկացնում էր գրո-
յական ուշադրություն: Նրան մի քանի բուպե հարցա-
խույզի ենթարկելուց հետո պարզեցի, որ միտումնա-
վոր շեշտադրում է տգեղ սուբստանտը: Թեպետ տգեղն

³⁶ Արսեն Հակոբյան, Հազարաշեն ՀԿ, բանավոր պատմության պա-
տասխանատու:

ու գեղեցիկը, անշուշտ, նախնական պայմանավորվածությունների արդյունք են: Մեյնսթրիմը որոշել է, որ գեղեցիկը Մերիլին Մոնրոն է: Բարեբախտաբար, դրանից դուրս մարդիկ էլ են ապրում, ու նրանց համար Կարմենի տգեղ շարՖերը կատարյալ են:

Մի խոսքով, Կարմենը պատմում է, թե ինչպես է առաջացել Սճող արխիվի գաղափարը, ու ինչ-որ ճանապարհների սլայդներ է ցույց տալիս: Ես դեռ բան չեմ հասկանում: Սկզբից ենթադրում եմ, թե դա վիրտուալ արխիվ է, ու այդ ճանապարհները մեր միտքն են, որ կրում ենք մեզ հետ դարեդար: Բայց էսօր պարզեցի, որ, ո՛չ, ճանապարհները լափ էլ պատրաստված են շոշափելի մատերիայից ու գերմանացիների հետ եկել են Գերմանիայից, որ մեզ հետ ճամփորդեն քաղաքից քաղաք: Հետո էլ գնալու են Թուրքիա:

Սճող արխիվի գաղափարը տարիների էլույուցիա է: Սկզբնապես եղել են երկու՝ հայ և թուրք համադրողներ, որոնցից յուրաքանչյուրն իր նյութին վերաբերվել է ըստ սեփական տեսույթի: Մեկն ասել է՝ սա իմ սարն է, մյուսը, թե սա իմ ձորն է: Բայց գերմանացիների մոտեցումը ենթադրել է մեկ միասնական լեզու և մթնոլորտ: Ու նրանք, նախորդ փուլից սկսած, հրավիրել են Կարմենին, որը, համադրելով թուրքական վառվռուն պոպ արտը հայկական գորշ, շագանակագույն հիշողության հետ, կազմակերպել է ճամփորդող ցուցահանդես, որը ցուցադրվել է Թիֆլիսում, Բաթումում, Փարիզում, Բեռլինում և Կիպրոսում:

Բայց դա եղել է ստատիկ ցուցահանդես, իսկ Մաթիանն ու Կարմենն ուզում էին այցելուի և ցուցահան-

դեսի ակտիվ փոխներգործություն, որը ժամանակակից լեզվով կոչվում է ինտերակցիա, երբ դիտողն ինքն է դառնում ցուցահանդեսի բովանդակության ստեղծողը: Սսենք, օրինակ, դու գնում ու քո Աճող արխիվով, այսինքն՝ ճանապարհներով խարսխվում ես քաղաքի բանուկ հատվածներից մեկում, և անցորդները նոտենում, սկսում են հարցուփորձ անել:³⁷ Սյդպես խոսակցություն է սկսվում: Ու մարդիկ իրենց հիշողությունները կան հույզերն են պատնում, որը կարող է ձայնագրվել կամ տպվել ու գրվել, կարող են ինչ-որ նամակներ ու այլ իրեր նվիրել, ու սա է այն այլընտրանքային ազատ մոտեցումը, որը բացառում է ակադեմիականությունը: Սյն ակադեմիականությունը, որը ցեղասպանության պես ծանր է ու դժվար մարսելի, ու հենց այդ պատճառով էլ ակադեմիական թանգարանները երբեք լայն մասսաներին չեն գրավել:

Աճող արխիվին հետո նորից կանդրադառնամ: Երբ գնամ ու տեղում տեսնեմ, թե ոնց է աշխատում:

* * *

Հետո աշխատանքային խումբը կիսվում է երկու մասի, որոնցից ամեն մեկն իր գործն էր անելու: Երիտասարդների մի խումբը³⁸ պետք է բանավոր պատմություններ հավաքեր բնակչության շրջանում, որոն-

³⁷ Կարմեն Բեքենբախ, Հարցազրույց, Երևան, սեպտեմբերի 19, 2015:

³⁸ Ծրագրի մասնակից երկու խմբերին միմյանցից զանազանելու համար բանավոր պատմություններ հավաքող խումբն այսուհետ կարճ կներկայացվի որպես պատմահավաք խումբ:

ցից լավագույնները կընդգրկվեին ճանփորդական ամսագրում, իսկ սյուս խմբի պարտականությունը ֆոտոպատմություններ գտնելն էր: Հայաստանում այս մասին նախապես հոգ էին տարել հայ կազմակերպիչները, Թուրքիայում դա կանեն թուրքերը: Մարդկանց հետ նախապես պայմանավորվածություններ էին ձեռք բերվել: Պատմահավաք խումբը կազմված էր երկու հայ և մեկ թուրք մասնակցից, ինչպես նաև մեկ հայ կան թուրք փորձագետից: Կան փորձագետը, կան հայ մասնակիցը հարցազրույց է անում տվյալ մարդու հետ՝ նախապես կազմված հարցաշարի համաձայն, իսկ սյուս մասնակիցը սինխրոն թարգմանում է թուրք մասնակցի համար: Ֆոտոպատմություն փնտրող թուրք մասնակցին կցված է անգլերեն իմացող մի մեկը, օրինակ՝ Թուրքի մայլա Մուրատի հետ գնացի ես:

Ըստ այդմ, պատմահավաքները գնում են կողքի սենյակ՝ լսելու Օզլեմին,³⁹ որը նրանց հարցազրույցների ուղարկելուց առաջ մի անգամ ևս նախապատրաստում էր, թե ինչը՝ ոնց և ինչից հետո:

Սյուս խումբը մնում է սրահում՝ լսելու գերմանացի մեդիա մասնագետներին, որոնք պատասխանատու էին ճանփորդական ամսագրի համար: Սյուսի հետ ամսագիրը կանվանեն Բզեզ:⁴⁰ Որովհետև սույն կոնպոնենտի ներմուծումը ծրագիր հայկական խմբի

³⁹ Օզլեմ Զայքենթ, թուրքական «Պատմության հիմնադրամ» գործընկեր կազմակերպության ներկայացուցիչ, բանավոր պատմության փորձագետ:

⁴⁰ Տվյալ համատեքստում բառը կիրառվում է որպես եզր՝ ընդգծելու տվյալ իրի անհասկանալի լինելը:

ամենատարբեր մակարդակներում անթաքույց ընդվզում էր առաջացրել: Թուրքական կողմը Բզեզի նկատմամբ խիստ անտարբեր էր: Երևի հենց սա էլ նկատի ունեւր Մաթիասը, երբ ասում էր, թե թուրք քաղաքացիական հասարակությունն ավելի առաջադեմ⁴¹ է հայկականից: Բայց Մաթիասը ծրագրի ամբողջ 8-ամյա պատմության ընթացքում շփվել է հայ քաղհասարակության ոչ ռադիկալ հատվածի հետ: Իսկ Ցեղասպանությունը՝ հարակից խնդիրներով հանդերձ, հայ քաղհասարակության օրակարգում պարզապես բացակայում է: Հետևաբար նրանք չկան հաշտեցման գործընթացում՝ այդ տեղը թողնելով լայթոտ ազատականներին, որոնց համար գենդեր բառն անգամ տեղով բզեզ է: Ոչ բոլորի համար, անշուշտ: Բայց միտումն այդպիսին է: Մինչդեռ թուրքական կողմում՝ որպես պետական ժխտողական քաղաքականության դիմադրություն, այդ հարցն, այդուհանդերձ, նրանց օրակարգում է: Ինչ-որ տեղ՝ չորրորդ պլանում: Բայց կա:

Ու ես մնացի այս խմբի հետ, որ պարզեմ Բզեզի իմաստը: Բայց էն, ինչ հասկացա, երևի մի երկու օրից գրեմ: Դեռ Աջապահյանենց հետ հանդիպման մասին պիտի գրեմ: Համ էլ հեռախոսս գանգում է:

⁴¹ Մաթիաս Քլինգենբերգ, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ կազմակերպության՝ Թուրքիայի և Կովկասի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար, հարցազրույց, Երևան, սեպտեմբերի 20, 2015: <http://hetq.am/arm/news/64366/germanakan-hayacq-hay-turqakan-haraberutyunnerin%E2%80%A4-cexaspanutyuny-orpes-azgayin-metodabanutyun.html/>.

* * *

Գրիգորն էր:⁴² Ստում էր՝ արի գնանք սահման, մի երկու քարվան կտրենք, գանք: Խենթ է էս տղան: Բայց ես էլ էի ուզում սահմանը տեսնել ու հանդգեցի, որ հաջորդ օրը գնանք:

40

* * *

Երեկոյան՝ 6:30-ի կողմերը կենտրոնում հանդիպեցինք Միքայել Աջապահյան և Սեպուհ Չուլջյան⁴³ եպիսկոպոսների հետ:

Աջապահյանն անգլերեն խոսեց: Մի թեթև զարմացա: Որովհետև քիչ թե շատ ծանոթ եմ մեր հոգևոր դասի ինտելեկտուալ կարողություններին: Ժամանակին մի հոգևորական ընկեր ունեի, ու հոգևորականների հետ ախպերություն էր: Ու տենց շաբաթը մի անգամ հավաքվում-գրիցում էինք: Բայց, փաստորեն, անգլերեն խոսող հոգևորականներ ունենք: Վատ չէ, վատ չէ: Կասեր ինչ-որ մեկը: Աջապահյանը ողջույնի խոսքից հետո հարցրեց, թե ովքեր են էթնիկ թուրք: Մոտ 15-հոգանոց (մասնակիցներ և կազմակերպիչներ) թուրքական խմբից ձեռք բարձրացրին երկու, թե երեք հոգի, որոնցից հիշեցի միայն Օզլեմին:

ՊԱՏ ՏՆՎՅՈՒՄԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

⁴² Հայկական կողմի մասնակից:

⁴³ Սեպուհ Չուլջյան, Հայ առաքելական եկեղեցու Գուգարքի թեմի առաջնորդ:

*Եթե սահմանը բաց լիներ
Ապա Գյումրին կլիներ Հայաստանի կենտրոնը
Իսկ հիմա մենք գտնվում ենք Հայաստանի
անկյունում*

Ասաց Աջապահյանը՝ նկատի ունենալով այն շարժը, որ հատուկ է երկաթգծով կապված սահմանամերձ քաղաքներին, ու բոլորը տպավորվեցին: Հետո նա ասաց, որ Գյումրիում կա Թուրքի մայրա: Սուրատի աչքը լույս:⁴⁴ Աջապահյանը մի քանի տողով ներկայացրեց Գյումրվա պատմությունն ու նշեց, որ այն ունեցել է նաև թուրքերեն անուն՝ Gümriik:⁴⁵ Հետո խոսեց որբանոցների մասին, բայց քանի որ մենք վաղը գնալու ենք որբանոց, այդ մասին կգրեն հետո:

*Դուք պատմություն եք փոխում
Բայց պատմությունը կգա ձեր հետևից*

Ասաց Չուլջյանն, ու ես չտպավորվեցի: Որովհետև հարգարժան կղերականը նկատի ուներ Աստծուն, որի համար կառուցված տունը պետական կառույցի մը պես գործառույթ ունի, և որին էլ ինքը ծառայում է: Իսկ ես նկատի ունեմ մեր շատ սիրելի

⁴⁴ Տե՛ս «Ուրի բաբային որոնելիս» մասը:

⁴⁵ Gümriik թուրքերեն բառ է, որը նշանակում է մաքս: Թուրքերեն Ալեքսանդրապոլն անվանել են Gümriik, որովհետև այստեղ եղել է նրանց մաքսատունը: Ըստ որոշ աղբյուրների՝ Գյումրի անվան ծագումնաբանությունը կապվում է այս բառի հետ: <http://www.gyumricity.am/index.php/hy/gyumri/our-history> Պատմաբանների շրջանում ընդունված է Գյումրի անունը կապել VIII դարի հայկական աղբյուրներում հիշատակվող Կումայրի անվան հետ:

գերմանացի Նիցշեին, որը դեռևս 19-րդ դարում է փաստել, որ Աստված մեռել է և այլն:

Չուլջանը փաստորեն Աջապահյանի հետ սիսիսին շրջել է Արևմտյան Հայաստանում ու չի հանդիպել այն թուրքերին, որոնք հայերին ո՛չ ճանաչում էին, ո՛չ էլ ցանկություն ունեին ճանաչելու: Ստանբուլում մի առաջադեմ աղջկա հետ ծանոթացա, որն ինքն էլ ատում էր թուրքի այն տեսակը,⁴⁶ որին հայերն անվանում են թուրք, ու լավ գիտեր, թե ովքեր էին հայերը: Նա Ադանայից⁴⁷ էր ու մոտ ապագայում կհարստանար: Որովհետև արվարձանում գտնվող իրենց հին տունն այժմ հայտնվել էր քաղաքի կենտրոնում: Այն քանդել ու դրա փոխարեն նորակառույցում 4 բնակարան էին տվել: Նա առաջադեմ թուրք էր: Ու գիտեր Յեղասպանության և հարակից բաների մասին: Սակայն, երբ ասացի, որ այդ տեղում հնարավոր է՝ հայ է ապրել, քիչ էր մնում՝ աչքերս պիպիկախառը բնից հաներ ու դրանով նախաճաշ պատրաստեր յուրյանց ընկերախմբի համար: Ադանայում էլ եմ եղել: Որտեղ անցորդներից շատերը իսկի չգիտեին էլ, թե ինչ բան է հայը: Միայն Ադանայի Աղջկերանց հայ վարժարանի շենքի տնօրենի լեզուն էր փաթ ընկել, երբ շենքի պատմության մասին հարցեր էի տալիս:

⁴⁶ Հայ հանրությունում առկա է «թուրքը մնում է թուրք» կարծրատիպը, որի էությունը հյուսված է Յեղասպանություն գործած բարբարոսի առանցքի շուրջ, որն ի վիճակի չէ փոխվելու:

⁴⁷ Քաղաք Կիլիկիայում, այժմ՝ համանուն քաղաք Թուրքիայի հարավարևելյան հատվածում:

Սակայն Արևմտյան Հայաստանում բոլորը Չուլջանին մեկից մեկ ասել են, որ տարածքը հայերինն է եղել: Նա հարցրել է այս կամ այն գյուղի անունն ու որպես պատասխան՝ լսել հայկական անուններ.

չրղրը լճի մոտ մի փարիկ հանդիպեց.

— *մայրիկ, ովքե՞ր են ապրել այս գյուղում*

— *հայերը*

— *բա ո՞ր են նրանք հիմա*

— *ենիշերհները եկան, գրավեցին այս հողերն ու սպանեցին նրանց*

— *բա ինչո՞ն դա արեցին*

— *բա որ չանեին՝ որպեղից մեզ հող*

Ուր գնաս՝ այսպիսի պատմություններ ես լսում: Ինչպե՞ս կարող են թուրքերը Սյրամբուլը համարել մշակութային կենտրոն, երբ նրանք կործանում են իրենց սեփական մշակույթը՝ եկեղեցիները: Ոչ մի մանրանկարչություն չի մնացել Թուրքիայում: Դուք պատմություն եք փոխում, բայց պատմությունը կգա ձեր հետևից:

Իսկ հիմա՝ այսօրվա մասին, կամ որբանոցների քաղաք իմ Գյումրին

Առավոտը շուտ գնացինք՝ քաղաքն ուսումնասիրելու: Կենտրոնի կամավորները ներկայացնում էին Գյումրու և գյումրեցիների մասին տարբեր պատմություններ: Ամենահիշարժանը մի սև շենքի պատմությունն էր, որը XIX դարի վերջին քաղաքի մեծահա-

րուստներից մեկն իր դատեր համար սահմանել էր որպես օժիտ: Ասում էին, թե աղջիկն այնքան տգեղ է եղել, որ հայրը ստիպված է եղել այդպիսի մեծ օժիտ սահմանել: Փեսացուն գտնվել է, ու նրանք ապրել են երկար ու երջանիկ: Երկնքից, վստահաբար, երեք խնձորն ընկել է:

Ասում են, թե Կարսը Գյումրվա պատճենն է, ու նրանց անպատճառ քույր քաղաքներ պետք է հռչակել: Կարսում չեն եղել, բայց լինողներ շատ կան, ու հենց նրանք էլ ասում են: Իսկ Գյումրին ես նոր եմ բացահայտում: Մյն ինձ համար միշտ Լենինական է եղել, որովհետև ես այստեղ հայրական կողմից բարեկաններ ունեմ, որոնց այցելել եմ փոքր տարիքում: Մյն ինձ համար տիպիկ սովետական, անհետաքրքիր քաղաք էր: Հետո եղել եմ երկրաշարժից⁴⁸ հետո ու տեսել կիսաքանդ քաղաքը: Վերջին տարիներին, սակայն, տարբեր առիթներով արդեն Գյումրի գնալիս բացահայտում եմ նրա հին շերտերը՝ սև հնատճ շենքերի ու բաց կախովի պատշգամբների տեսքով, որոնք խաղաղ գոյակցում են նորի կողքին: Սյստեղ նույնիսկ սալահատակված փողոցներ են պահպանվել, որոնք Երևանում հիմնահատակ ասֆալտվեցին: Գա հայտնաբերեցի, երբ առաջին օրը Էքինի ու Սիրելի հետ քաղաքում պտտվելիս հայտնվեցինք հրապարակամերձ մի փողոցում, որտեղ կողք կողքի կանգնած էին

⁴⁸ 1988 թ. դեկտեմբերի 7-ին Էպիկենտրոնում 10 բալ ուժգնությամբ երկրաշարժը, որին զոհ գնացին մոտ 25000 մարդ, գրեթե ամբողջությամբ ավերեց Գյումրին:

գազարագույն սրբատաշ տուֆով երեսպատված մի եռահարկ ու նրանից մի քանի մետր այն կողմ կքած ցածրիկ մի տուն, որի փայտաշեն բակում գունդուկծիկ եղած շունը կիսաբաց աչքերի տակից փորձում էր հասկանալ, թե ինչ են պատմում իր քաղաքի մասին: Մյո՛, իհարկե: Եւ էլ քաղաքի բնակիչ է, ու ի՛նչ իմանաս, թե իր նախնիներն էլ Կարսից չեն գաղթել:

Այս այցելության ժամանակ իմացա, որ փաստորեն Գյումրին որբանոցների ու գաղթականների քաղաք է. բնակչության կեսից ավելին որբերի ու գաղթականների սերունդ է: Փաստ, որը Սովետական Հաստատանը ինամբով թաքցրել էր իր սովետական նախկին քաղաքացուց: Տվյալ դեպքում՝ ինձնից: Մյո՛ որբերն ու գաղթականներն ապաստանել են զինվորական ավաններում, որը կառուցել էր Ցարական Ռուսաստանը Թուրքիայի սահմանին տեղակայված իր զորքերի համար: Դրանք երեքն էին՝ Սևերսկի, Պոլիգոններ, Կազաչի պոստ: Այս ամենն իմանում ենք Տեխնոպարկում՝ լսելով պատմաբան Կարինե Սլեքսանյանին, որ մի պրեզենտացիա էր պատրաստել Սլեքսանդրապոլի որբանոցների մասին: Բայց որբանոցների մասին վաղը կգրեմ, որովհետև վաղը նաև գնալու ենք Թռչունյան մանկատուն:

Օրվա վերջին գնացինք՝ Շիրակի թեմին պատկանող մի պուրակում խորոված անուշ անելու: Ես մոռացել էի նշել, որ Չուլջանը, ախար, թուրքահայ է. ծնվել է Սալաթիայում ու ընտանիքով Հայաստան է հայրենադարձվել 1969 թ.: Ու փաստորեն լավ թուրքերեն գիտի: Ու Փընարենք մի չորս հոգով եպիսկոպոսին օղակել, կամերան միացրել ու հարցակոխ էին արել:

Իսկ մենք, նստած ծառի տակ, տաշում էինք խորոված: Ընտրագույն խորոված: Գառն ու խոզը՝ առանձին-առանձին: Մատները կարելի էր լպստել: Արանքներն էլ կարտոֆիլ էին դրել, ու, հո՛ կարտոֆիլ չէր, հո՛ կարտոֆիլ չէր: Հատուկ դանակով պտուտակահանած, գառան մսի կողքը շամփրած: Էս տեսակ հանդիպումներից հետո ուղիղ մի շաբաթ օրգանիզմի բեռնաթափում է պետք անցկացնել, որովհետև էնպիսի համեղ ճաշատեսակներ են մատուցում, որ չուտել չի լինում: Հա, ի դեպ, ուտելու գծով հայկական և թուրքական մենեջմենտն անհրաժեշտ բարձրության վրա է: Թեպետ չուտող, փաստորեն, գտնվեց: Բզեզի թիմից: Լոնդոնաբնակ մեր հայ մասնակիցը կերակուրից դժգոհ էր: Պատճառը: Դե, շատ սահմանափակ է. խորոված-ծուկ, խորոված-ծուկ, խորոված-ծուկ: Բարև ձեզ: Բա սալաթները, անմահական լավաշը, պանիրն ու կանաչին: Էլ չհաշված սուպի ու փլավի տեսակները, տեսակ-տեսակ բանջարեղենը: Բուսա-

կերների համար էլ նախապես ասված էր, ու իրենք նստած էին տապակած կարտոֆիլի ու խորոված սմբուկ-տաքդեղի վրա:

Ուրեմն Կենտրոնի ճաշարանում, որտեղ մեզ կերակրում էին, երեկ ցերեկը մեզ կորկոտով փլավ մատուցեցին՝ գառան շոգեխաշած նուրբ միսիկով համեմված: Բերանդ չտարած՝ հալվում էր: Բայց կորկոտի տեսքը ոչ էսթետիկ էր: Փաստորեն: Այնքան, որ դրանից հետո Լոնդոնարնակը նստեց նուտելլայի վրա ու հետը մի տոպրակ էր ման տալիս մեջը՝ մի բանկա նուտելլա ու կտրտած լավաշ: Մեկ-մեկ էլ կարտոֆիլով բլիթ էր գնում: Սյդպիսի բաներ: Քեռի Դանել: Ես Լոնդոնում դեռ չեմ եղել՝ այդ դեպքը խնամքով պահելով ապագա հույժ կարևոր նպատակի մը համար, բայց խստորեն վստահ եմ, որ Լոնդոնի խանութներում վաճառվող միսը չի կարող մեր սարերի խոտը կերած հորթի մսից համեղ լինել: Ամերիկա էլ հո՛ եղել եմ: Ինձ հյուրընկալող ամերիկուհին պատմեց, թե ո՞նց է Հայաստանում վատացել: Նրանք գնացել են սարեր, որտեղ պատվարժան տիկնոջը հյուրասիրել են տնական թթվասեր: Պետք էր պատկերացնել, թե մետրանոց սմբուկին սովոր մեր ամերիկուհու օրգանիզմն ինչպիսի սթրես է տարել: Տեղում վատացել էր ու երկու օրից հազիվ ուշքի եկել: Ինձ էլ անընդհատ ասում էր, թե ձեր կերակուրները շատ յուղոտ են, շատ յուղոտ են: Յուղոտ չեն, սիրելիս, այլ ուղղակի դեռևս՝ բնական:

Մի խոսքով, Աջապահյաննց պուրակում մենք կերանք հինգ գառի ճուռ, երկու պարկ ճրթճրթան կարնրաթուշ կարտոֆիլ, 65 շերտ ապխտած խոզենի, 25 սագի փորոտիքով համենված դրախտահավ ու դրանք ողողեցինք սուտակի պես շողշողուն երեք կարաս գինով:

Օր չորրորդ, սեպտեմբերի 16

Առավոտը ժամը 7-ն է, շուտ են արթնացել ու նստած ճնկոտուն են: Այսօր երկու տարբերակ կա: Թռչունյան մանկատուն: Այսօր երկու տարբերակ կա. Թռչունյան մանկատուն կամ՝ Հովհաննես Շիրազի տուն-թանգարան: Կամ՝ Հովհաննես Շիրազի⁴⁹ տուն-թանգարան: Ես, բնականաբար, կգնամ Թռչունյան, որովհետև նախ Շիրազի թանգարանում մի անգամ եղել են ու հանոզվել, որ սովետի շունչը դեռ բակից փչում է, բացի այդ՝ Կարմենն ասաց, որ մի երկու-երեք տարի առաջ Հայաստանի որոշ թանգարանների աշխատողների համար թրեյնինգ է արել, որոնց թվում էր Շիրազի թանգարանի աշխատակիցներից մեկը: Կարմենն այս թանգարանում մի վառված լամփուշկա էր տեսել ու ասել, որ դա պետք է փոխվի: Երեք տարի անց պարզվել է, որ վառված լամփուշկան տեղում է: Նո քոմենթ:

Երևի մինչև նախաճաշի գնալը մի քիչ աշխատեմ նոթերիս վրա:

⁴⁹ Համարվում է խորհրդային շրջանի հայ մեծագույն բանաստեղծներից մեկը: Ծնվել է Գյումրիում, մեծացել է որբանոցում:

Ալեքսանդրապոլի որբանոցները⁵⁰ 1914–1930 թթ.

Սիւս, ուրեմն: Հասավ ժամանակը, երբ պիտի ողբան զպատմությունդ հայոց ու զքեզ, ո՛վ հայ ժողովուրդ, վասնզի հալածյալ է զավակը քո դարեդար, ու

⁵⁰ Ալեքսանդրապոլի որբանոցների պատմությունն ընկած է 1914–1930 թթ. միջակայքում: Առաջին որբանոցները հիմնվում են 1914 թ., և մինչև 1918 թ. որբախնամությունն իրականացվում է տեղական բարեգործական կազմակերպությունների շնորհիվ: Իսկ երբ Օսմանյան կայսրությունը հարձակվում է նորելուկ Հայաստանի վրա, տեղացի ժողովուրդն ինքն է կարիքի մեջ ընկնում: Այդ ժամանակ Հայաստանը, որն անկախ պետություն էր հռչակվել ու դեռևս ընդգրկված չէր Խորհրդային Միության կազմում, օգնության խնդրանքով դիմում է միջազգային հանրությանը: Օգնության կոչին արձագանքում է Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատուց կոմիտեն (Ամերկոմ), և կնքվում է Ռոբերտ Հոփեր–(ԱՄՆ), Պողոս Նուբար (Փարիզում հայկական պատվիրակության ներկայացուցիչ), Ավետիս Ահարոնյան (Հայաստանի Հանրապետություն) եռակողմ համաձայնագիրը: Ամերիկացիները Հայաստանի իշխանություններին առաջարկում են իրենց տնօրինությանը հանձնել կամ որբերի, կամ գաղթականների հարցը, և Հայաստանը որոշում է նրանց հանձնել որբերի խնամքը, որպեսզի հնարավորություն ստեղծվի այդ երեխաների համար: 1920 թ. Հայաստանի իշխանությունները դատարկում են ռուսական բազայի կառուցած զինվորական ավանները, որտեղ հանգրվանել էին արևմտահայ գաղթականները, ու հանձնում Ամերկոմին՝ թվով մոտ 170 շենք, որոնցից Պոլիզոնները՝ տղաների, Կազաչի պոստն ու Սևերնին՝ աղջիկների համար: Այս որբանոցներում ապաստան են գտել ու փրկվել մոտ 20 հազար արևմտահայ որբեր: Սկզբնական տարիներին Հայաստանի իշխանությունները չէին խառնվում Ամերկոմի գործունեությանը, քանի որ իրենք չէին կարող լուծել այդ հարցը, սակայն Խորհրդային Միությունում ընդգրկվելուց հետո երկիրն աստիճանաբար ոտքի է կանգնում, ու 1930 թ. արդեն Ամերկոմի ներկայությունը համարվում է ավելորդ: Բացի այդ՝ Ամերկոմը որբանոցներից երեխաներ էր տանում Ամերիկա, որը բացասաբար էր ընդունվում խորհրդային իշխանությունների կողմից: Կարինե Ալեքսանյան, Արևմտահայ գաղթականներն Ալեքսանդրապոլի գավառում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (փաստաթղթերի հավաքածու), Երևան, 2008:

կարճ է զբազուկը նրա: Ու պիտի գովերգեն օրինված սհաթն⁵¹ ու անիծեն թուրքի յաթաղանը, քանզի հենց դա է քո ուզածը: Վասնզի նույնն ենք մենք՝ թե՛ կերպարանքով և թե՛ լեզվով:

Ու պիտի դառնան ու գովեստի խոսքեր շռայլեն այն բարեգործական կազմակերպությունների հասցեին, որոնք դեռևս 1881 թ–ից զբաղվում էին քո տեսակի պահպանմամբ, որոնցից էին նաև որբախնամությունն ու գաղթականության⁵² կարիքները հոգալը:⁵³

Ու պիտի դառնան ու ասեն օղորմի. հազար օղորմի այն 10 հազար արևմտահայ որբերին, որոնց համար տեղ չգտնվեց որբանոցներում, վասնզի դեռ նոր էր հասել գույժը թուրքի ջարդի, ու 1914 թ. դեռ 8 որբանոց կար, ու տեղ գտնվեց ընդամենը 500 որբի համար:

Պիտի դառնան ու նորեն գովեն այդ բարեգործական ընկերություններին, որովհետև նրանք խելամտորեն տարբերակել էին որբանոցներն ըստ գավառների՝ Բասեն, Սասուն... որպեսզի երեխաներն իրար հետ չխառնվեին, իսկ ութերորդը՝ տրամադրել

⁵¹ Հայ հանրությունում ոչ միանշանակ ընկալվող ֆրազ հայ գրող Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից (1841 թ.), որում արտահայտվում են հեղինակի դրական տրամադրությունները Ռուսաստանի նկատմամբ:

⁵² Մինչև 1917 թ. Ալեքսանդրապոլում հանգրվանել են 85–95 հազար գաղթականներ: Կարինե Ալեքսանյան, «Արևմտահայ գաղթականներն Ալեքսանդրապոլի գավառում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (փաստաթղթերի հավաքածու), Երևան, 2008:

⁵³ Գաղթականներին ու որբերին վերաբերող բոլոր փաստական տվյալներն այս հատվածում հենված են Տեխնոպարկում պատմաբան Կարինե Ալեքսանյանի ներկայացրած պրեզենտացիայի վրա:

տիֆով հիվանդ երեխաներին, որպեսզի այն տարածում չգտնեք, իսկ որբանոցներին կից՝ բացել դպրոցներ ու արհեստանոցներ, որպեսզի երեխաներն արհեստ սովորեն:

Ու պիտի դառնան ու ողբան Ալեքսանդրապոլ քաղաքը քո, վանձի, երբ 1918 թ. մայիսին թուրքը հարձակվեց Հայաստանի վրա, այն դարձավ գաղթական, իսկ դեկտեմբերին՝ թուրքի գնալուց հետո, վերածվեց գերեզմանի: Հետո քո փրկված զավակները կփաստեն, թե քաղաքը զավթած թուրքերը հատուկ վերաբերմունք ունեին հենց արևմտահայ գաղթականների հանդեպ՝ ոչնչացնելով հատկապես նրանց: Նրանք կասեն, որ Թուրքիան եկել էր գաղթականներին ոչնչացնելու, որպեսզի այդպես լուծի նրանց վերադառնալու հարցը: Սակայն ես նրանց կպատասխանեմ ռուս զորապետ Սուվորովի բերանով. «Хуйня война, главное – манёвры»:⁵⁴

Ու պիտի դառնան ու ասեն հազար օղորմի այն արևմտահայ գաղթականներին, որոնք մեռան, վանձի տգետ են իշխանությունները քո ու կապեկի խելք չունեն: Ինչո՞ն նրանք գաղթականներին հետ ուղարկեցին Կարս՝ առանց թուրքերի հետ համաձայնեցնելու: Որպեսզի մեկ անգամ թուրքի բերանից փրկված հայը նորից ջարդվեր: Դձ էր քո ուզածը: Ուզած էր: Սրդ, ուրեմն, ջարդուած են կրկին զավակները քո:

Ու պիտի դառնան ու շատ գովեն Սմերիկայի ժողովրդին, որն արձագանքեց Հայաստանի օգնություն

⁵⁴ Թքած պատերազմը, կարևորը մանկերն է:

խնդրելու կոչին ու 20 հազար որբ խնամեց: Հենց նրանց շնորհիվ էր, որ այդ երեխաները մահից փրկվեցին, կրթություն ստացան, մի քանիսն էլ գնացին Ամերիկա ու էնտեղ մարդ դարձան: Այս որբանոցներից դուրս եկան քո տաղանդավոր զավակներ Հովհաննես Շիրազը, գուսան Շերամն ու այլք: Դեռ մի բան էլ հայ բոլշևիկները դժգոհ էին: Ծիպա՝ Ամերկոմն իր քաղաքականությունն էր առաջ տանում: Բա հո սովետի դուդուկի տակ չէր պարելու: Ձունը՝ ձեր գլխուն: Քիչ գործ արեցին:

Ու հազար անգամ պիտի զովեմ Ամերկոմին, որովհետև, երբ 1920 թ. թուրքը նորեն ասպատակեց քո հողը, հենց նրանք էին, որ թուրքին թույլ չտվեցին մտնել որբանոցներ: Թուրքը Ալեքսանդրապոլում մնաց մինչև 1921 թ. ապրիլ, ու եթե որբերը փրկվեցին, ապա գաղթականներն սպանվեցին:

Ու պիտի դառնամ ու անվերջորեն փնտվեմ քաղաքական միտքը քո, որ հազարավոր տարիների բովում չի հասունանում ու ինչպես մանկամիտ եղել, այդպես էլ մնացել է: Քիչ հնարավորություններ են տվել. նույնիսկ ջարդի խառնակ տարիներին էլ կարող էիր քո էրմենիստանից 160 հազար քմ պոկել, բայց գերադասեցիր մնալ քո ներկա 29 հազար քմ-ի ներսում:⁵⁵ Ո՛վ է մեղավոր, որ գլխունդ կապեկի խելք

⁵⁵ Այս միտքն արտահայտում է հայ հանրությունում առկա ծովից ծով Հայաստան մտայնությունը, որի հիմքը Տիգրան Մեծ (մ.թ.ա. 140–մ.թ.ա. 55) հայ թագավորի գահակալության տարիներին Կասպից ծովից Միջերկրական ծով ձգվող հայկական պետության մասին ունեցած դարավոր իղձն է: Իսկ Սևրի պայմանագիրը (1920 թ. օգոստոսի 10) նախատեսում էր Հայաստանին միացնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգները՝ դեպի ծով ելքով: Ընդհա-

չկա: Որ քեզ հզորացնելու փոխարեն գերադասում ես սողալ սրա-նրա դիմաց ու մի գլուխ նվնվալ: Որ հպարտանում ես սուլթանների համար կառուցածդ պալատներով, իսկ հարազատ Երևանդ գյուղ էր: Որ հիմա էլ խելքդ գլուխդ չես հավաքում ու կազմակերպվելու փոխարեն կտրում ես ճյուղը, որի վրա նստած ես, ու շատանալու փոխարեն երկիրդ դատարկում ես: Ո՞ւմ վրա էր առավել քաղցր իմ աչքը, եթե ոչ՝ քո վրա: Ո՞ւր էին թուրքերը, երբ դու և կողքիդ հարևաններն այս կողմերում բարգավաճում էիք: Անգամ սեփական որդուս մատաղ արեցի՝ քավելու ձեր բոլորի մեղքերը: Բայց չէ, ոնց տեսնում եմ, խելքի չեք գալիս: Ու ես ամեն անգամ զավակ չունեմ գոհելու: Ու ասացի, որ ջարդելու եմ: Ու քանի՞ անգամ իշմար տվեցի: Սասցի, որ ջարդելու և անօգնական լցնելու եմ թուրքի բերանը: Բայց դու չլսեցիր, որովհետև էն գլխից իմ տունը զավթել են հոգով թանձրամիտները, որոնց գործը ոչ թե իշմարներս մեկնելն է, այլ սեփական գրպանը լցնելը: Չլինի՞ կարծում ես, թե թուրքն առանց իմ թողտվության քեզ ջարդեց: Ու ինչ մի ժողովրդիդ ուղեղը լցնել ես լցրել՝ իբր թուրքը տե-

Նուր առմամբ այս պայմանագրով Հայաստանը լինելու էր 160 հազար քմ տարածք, սակայն դրանից հետո կնքվել է Կարսի պայմանագիրը (1921 թ. հոկտեմբերի 13), որով Հայաստանն ընդգրկում էր 29 հազար քմ: Այս թիվը չի ներառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը համարվում է չճանաչված պետություն:

Այս միտքը նաև հենված է հայ հանրության մեջ առկա ընկալումների վրա, որոնց պատմական փաստացիության վիճարկումը կամ հիմնավորումն այս տեքստի սահմաններում չի քննարկվում:

սակ է: Յանի՛ թուրքը մնում է թուրք: Գերմանացին էլ հո քաղաքակիրթ է: Նույն բանը չարեց: Խելքի՛ աշեցեք: Իսպանացիք էլ Նոր աշխարհում զբաղված էին հնդկացիների գանգամաշկը պոկոտելով: Չինի՛ կարծում ես, թե հիմիկվա քաղաքակիրթ աշխարհը պիտի աներիկացուն ստիպի դուրս գալ յուր տնից ու այն զիջի կարնրամորթներին: Խելքի՛ աշեցեք: Մինչև հիմա նույն անգետն ես: Սևին սապոնն ի՛նչ կանի, խևին՛ խրատը: Ռսի, սրա–նրա ոտն ես լիզում, որ քո անվտանգությունն ապահովեն, մինչդեռ սեփական զավակներդ դրսի լավագույն համալսարաններում սովորելուց հետո մնում են՝ զարգացնելու այդ երկրների կարողությունը:

Ստի՛կ արա՛ ինչ եմ ասում: Հիմա այս կողմերում նորից խառնակ վիճակ է: Ու ոտքի կանգնելու լավ հնարավորություն է բացվել: Մի լսիր այդ ապիկարներին, որոնք զբաղված են հարյուրամյա դիակապտությամբ: Դրանք մեռածների հիշատակի վրա առևտուր են անում, որից գոյացած շահույթը գնում է իրենց անկշտում ստամոքսը: Սփոփվիր քո վշտից, վանագի 100–ամյա արցունքից հյուծվել է մարմինդ, ու ցամաքել են կենսատու աղբյուրներդ: Վանի՛ր գորշ բջիջներիցդ ատելությունն ու տեղը դիր ուժերիդ հանդեպ վստահությունը: Եղի՛ր լայնախոհ ու նորից կծաղկես: Բավ է այլևս արտասավես: Ու դադարիր զբաղվել անիմաստ ձեռնաշարժությամբ, իբր քեզ տվել են գոհի դերը: Ժպտան ու կապրես: Ծիծաղիր ու կշատանաս: Սիա տա–

լիս են քեզ SWOT⁵⁶ անալիզ կոչվող գործիքն այս, որ ստեղծել են Արևմուտքի գավակներն իմ բիզնեսմեն: Գործիր. սա է իմ պատգամը:

Ամեն:

Օր 5-րդ, սեպտեմբերի 17

Նախաճաշից հետո գնում ենք Թալին,⁵⁷ բայց քանի ժամանակ կա, գոնե Թռչունյանի⁵⁸ պատմությունը գրեն: Երեկ չգրեցի, քանի որ ծանր տպավորություններով էի հետ եկել: Որովհետև երեխաների խնամքի ցանկացած կենտրոն ուտք դնելիս անպատճառ հիշում են միստր Բամբրլին ու միսս Մեննին, որոնք քերթում էին Օլիվեր Թվիստի և նրա ճակա-

⁵⁶ Սա մեթոդ է, որն օգտագործվում է վերլուծելու սուբյեկտի/ծրագրի ուժեղ և թույլ կողմերը՝ վեր հանելու համար այն հնարավորություններն ու շտկումները, որոնց միասնական կիրառման դեպքում հնարավոր է հասնել օպտիմալ արդյունքի:

⁵⁷ Երևանից դեպի հյուսիս–արևմուտք 70 կմ հեռավորությամբ գտնվող 5000 բնակչությամբ քաղաք: Բնակչության մեծ մասի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանից:

⁵⁸ Մանկատունը գործում է մոտ 12 տարի: Այնտեղ իջևանում են մոտ 80 երեխա, մեծամասամբ միակողմանի ծնողազուրկ: Մանկատան շենքում գործում է նաև դպրոց: Գոյություն ունեն տարբեր ծրագրեր, որով երեխաները որդեգրվում են ընտանիքների կողմից և լքում են մանկատունը, բայց 80–հոգանոց կազմը չի պակասում, և այն մշտապես համալրվում է նոր երեխաներով, որն արդյունք է Հայաստանի տնտեսական ցածր մակարդակի: Մանկատան շենքը եղել է 1870–ականներին ռուսական զորքերի համար կառուցված բազայի հոսպիտալներից մեկը և Ցեղասպանությունից հետո ընդգրկված է եղել Ամերկոմին հանձնված որբանոցների կազմում: Այն մինչև օրս էլ պատկանում է ռուսական բազային, և նրանք շենքը նվիրել են Թռչունյան հիմնադրամին, որպեսզի հնարավոր լինի իրականացնել Վահան Թռչունյանի կտակը:

տագրին արժանացած բազմաթիվ երեխաների կաշիները: Մնցանկալի ասոցիացիաներն սկսվել էին դեռ նախորդ օրվանից, երբ Լարիսան մերոնց միջոցով տնօրենի հետ բանակցել էր, որ գիշերը մնա այնտեղ ու ֆոտոռեպորտաժ պատրաստի: Սակայն տնօրենը չէր համաձայնել: Ինչ-որ պատճառով, որը միշտ էլ գտնվում է:

Որբանոցը Գյումրու անկյուններից մեկում է, որտեղից մինչև Կարս 7 կմ է, ու սովալի միջոցով մեր ընդհանուր օգտագործման Սստված պապիկին ուղղված աղոթքներն այստեղից լսվում են: Սինչև տնօրենը կգար, մենք մտանք որբանոցի տարածք ու սկսեցինք շփվել երեխաների հետ: Էլիֆն անմիջապես ստերնացավ մի խումբ երեխաների հետ, որոնցից մեկը նրանից պոկ չէր գալիս:

Շենքի արտաքինը հրաշալի վիճակում էր: Բակն էլ՝ ոչինչ: Ճոճանակներ կային, որոնց վրա ճոճվելիս Օզլենը վայր ընկավ, ու կոտրված ակնոցը՝ հարակից հիշողություններով, համալրեց Սճող արխիվի բազան:

Տնօրենը եկավ թանկարժեք ջիպով: Ես չտեսա, բայց տեսնողներ եղել էին: Նա հաճելի ժպիտով մեզ դիմավորեց ու բարեկրթորեն ուղեկցեց դափլիճ, որտեղ լրացրեց Սմերկոմի սասին մեր ունեցած գիտելիքներն ու ասաց, որ իրենք ձգտում են երեխաներին դաստիարակել այն նույն մեթոդներով, ինչպես արել են ամերիկացիները, որոնք, նյութական օժանդակությունից բացի, կամավորներ էին ուղարկում, որ խնա-

մեն որբերին ու զարգացնեն նրանց կարողություններն՝ ըստ ունակությունների: Ձգտումները նկատելի էին: Բակում շեֆություն անող հինգ տղաների ներկայությամբ, որոնք սանկատան սաներ էին, բայց հաշվեհարդար տեսնողների տպավորություն թողեցին: Գլխավորը՝ բանտի գողին վայել կեցվածքով, ձեռքին թզբեհ էր պտտեցնում:

Սանկատան պատերին Ցեղասպանության որբերի պատկերներ էին, ու այս երեխաները մեծանում են՝ լսելով պատմություններ, թե ինչպես են իրենց տարեկիցները մի 100 տարի առաջ սայլերի վրա բարձել իրենց ընկերների դիակներն ու ապրել այդ գիտակցությամբ: Այդ որբերից մեկը եղել է Վահան անունով մի տղա, որին կնքել են Տերչունյան ազգանունով, որովհետև տեր չի ունեցել: Վահանը եղել է այն երեխաների թվում, որոնց ամերիկացիներն իրենց հետ տարել են Ամերիկա: Նա այնտեղ ամուսնացել և երեխաներ է ունեցել: Իսկ մահից հետո թողած կտակում հայտնաբերվել է, որ նա ամբողջ կյանքի ընթացքում գումար է խնայել՝ թողնելու այն որբանոցին, որտեղ տիֆից փրկվել ու ապրել է: Նկատի ունենալով Տերչունյանի ակնհայտ բացասական երանգը՝ ազգանունը փոխվել է Թռչունյանի:

Տնօրենի խոսքից հետո բեմ են բարձրանում երեխաները, որոնք մեզ համար երգում են հայկական երգեր ու պարում հայկական պարեր: Թուրքերը համրացել էին: Նրանք նաև տեսել էին Հրանտ Դինքի նկարը որբանոցի պատերին: Հրանտ Դինքն ինքն էլ

որը էր ու մեծացել էր մանկատանը: Նա 2006 թ. այցելել էր Թռչունյան մանկատուն ու ունկն դնելով երեխաների երգ ու պարին՝ արտասովել: Հրանտ Դինքն այս պահին այն մարդն էր, որ կապում էր հայ և թուրք ինքնությունները. Հրանտ Դինքը թուրքահայ էր: Ու թուրքերը նույնպես արտասովում էին: Երեխաների արտասանած՝ Թուրքիան արյան ծով դարձնելու մասին բանաստեղծությունների ներքո. ասումնքն ու երգի բառերը նրանց համար չէին թարգմանվում:

* * *

Փընարենց Շիրազի թանգարանում գրկաբաց են ընդունել, ու դրանից նրանք լավ զարմացել են: Փաստորեն չէին սպասում: Ճիշտ այնպես, ինչպես մեր քուրդ մասնակիցներից մեկը, որը սրտի անկյուններից մեկում առնվազն երկու տասնամյակ մի պատմություն էր կրում: Մորաքրոջ ու մոր հարաբերությունների մասին, երբ մորաքույրը կռվել էր քրոջ հետ, նրան կոպտել ու տանից դուրս էր շարտել: Նրա մայրը մինչև հոգու խորքը վիրավորվել էր քրոջ վարմունքից, ու այդ մասին ոչ ոքի չէր պատմել: Միայն ինքն ու քույրն էին ականատես եղել վեճին: Սակայն տարիներ անց նրա մորաքույրը բախել է իրենց տան դուռը, իսկ Քուրդ մասնակիցը ցանկացել է նրան վռնդել: Կոպտել, հայհոյել ու դուռը փակել վրան: Սակայն նրա մայրն ընդունել ու պատվել է՝ քրոջ համար

պատրաստելով լավագույն ուտեստներ: Քուրդ մասնակիցն ապշել էր: Նա չի հասկացել մոր վարմունքի պատճառը ու այդպես էլ չհասկացավ մինչև այն օրը, երբ եկավ Հայաստան ու տեսավ, թե ինչպես են հայերն ընդունում իրենց՝ թուրքերին ու քրդերին: Այն հայերը, որոնց իրենք, քոբահան անելով, շարտել էին իրենց բնօրրանից: Նրանք՝ հայերը, սեղան էին բացում քրդերի ու թուրքերի համար, հյուրասիրում էին ու հարցնում ողջությունը: Մա Քուրդ մասնակցի համար շառաչուն ապտակ էր: Նա միշտ տխուր էր, որովհետև Հայկական հարցը նրա համար անձնական է: Քուրդ մասնակիցը 12 տարեկանում հանկարծ նկատել է, որ Մարդիկում որոշ տներ մյուսներից շատ տարբեր են, ու նրա հայրը բացատրել է, որ այդ տարբեր տները պատկանել են հայերին: Նա ավելացրել է, որ հայերին սպանել են իրենք՝ քրդերը: Իսկ պապը պատմել է, թե ոնց են սպանել. լցրել են մեծ թոնրի մեջ ու ողջ-ողջ խորովել, իսկ երեխաներին ցած նետել սարի գլխից: Հատիկ-հատիկ: Սեկը կանգնել է սարի գլխին, իսկ մյուսը երեխային պաս է տվել: Ճիշտ այնպես, ինչպես գնդակ են խաղում: Հետո թնջ, որ նրանք երեխաներ էին: Հիմա էլ 1915 թ. շարունակվում է: Թուրքահայերը խոսում են խաղաղության մասին, բայց աստիճանաբար թուրքանում են: Կարծում է Քուրդ մասնակիցը:

Թռչունյանից հետո Ուլրիկեն մեզ նորից ռեֆլեքսեց, ու Էլիֆը լաց եղավ: Կարմենի աչքերն էլ էին թացացել: Երան միացավ Երվանդը,⁵⁹ որը լաց եղավ, որովհետև Էլիֆը լաց եղավ, ու ես հագիվ ինձ զսպեցի, որ ես էլ լաց չլինեմ, որովհետև Երվանդը լաց եղավ, որովհետև Էլիֆը լաց էր լինում: Իսկ նա լաց էր լինում, որովհետև ամաչում էր, որ իրենց այդպես լավ են ընդունել:

Երանք գիտեն, որ մենք թուրք ենք: Ինչո՞ւ ես մինչև հիմա չեմ իմացել որբերի սասին. ամոթ: Ես ամաչում եմ, որ չեմ իմացել. ամոթ: Իմ փապը նույնպես որբ է եղել. ամոթ: Իմ ծնողները Բայկաններից են. նրանց ձեռքերը մաքուր են, ու նրանք հասարար մասնակից չեն եղել Յեղասպանությանը: Բայց դա կարևոր չէ. ես նույնպես պարասիսանարվություն եմ կրում. ամոթ: Իմ փապը որբ է եղել: Ինչպե՞ս ես կարող էի մրաժած չլինել որբերի սասին. ՄԵԾ ՍՍՈԹ:

Օր 6-րդ, սեպտեմբերի 18

Առավոտը շուտ է: Պատշգամբում նստած եմ, դիմացս՝ անտառածածկ մի սարի դոշ, սեղանի վրա՝ օրագիրս: Աղվերանում⁶⁰ ենք: Իջևանել ենք սարերի արանքներում կառուցված մի հարմարավետ ու նո-

⁵⁹ Հայկական կողմի մասնակից:

⁶⁰ Լեռնային հանգստավայր և առողջարան, գտնվում է Երևանից 30 կմ դեպի հյուսիս:

բառճ հյուրանոցային համալիրում: Նայած՝ ում համար: Կարմենի մոտ տպավորություն էր, որ լուսանումները սովետական արտադրության էին: Բայց հյուրանոցը կառուցվել է վերջին տարիներին: Երևի դա է պատճառը, որ նրա լոգարանում կրկին ջրհեղեղ էր:

* * *

Երեկ ամբողջ օրը անցկացրինք Թալինում ու դուրս եկանք իրիկվա կողմ: Ճանապարհների վատ լինելու պատճառով Սղվերան գնացինք Երևանով: Սյսինքն՝ մի ժամի փոխարեն գնացինք 2 ժամ: Հայաստանի բոլոր ճանապարհներն են վատը: Ցանկացածը: Եթե անգամ այն հիմնահատակ ասֆալտվել է մեկ տարի առաջ: Սրանք ոչ մի բան այնպես վարպետությամբ չեն անում, ինչպես գռփելն ու ժողովրդին հարստահարելը: Սյդ հարցում ևս մենեջմենտն անհրաժեշտ բարձրության վրա է: Օդի նվազ մի շերտ են թողել, որ սարդիկ սովից չմահանան: Հապա մվ պիտի աշխատի ու հարկ տա, եթե սարդիկ մեռնեն: Հետո նրանք լավ յուրացրել են անցյալի դասերը. գիտեն, որ սովածները ոչինչ չունեն կորցնելու բացի իրենց շղթաներից: Պատճառահետևանքային կապերի մասին ֆունդամենտալ օրենքի համաձայն՝ սա նշանակում է, որ նրանք կարող են նաև լավ կառավարել, բայց չեն անում, որովհետև լավ ասվածը խիստ հարաբերական հասկացություն է: Իրենց համար շատ էլ լավ է:

* * *

Ճանապարհին պարզվեց, որ Ադնանն ինսուլինը թողել էր Գյունրիում: Հայկակը⁶¹ զանգեց, որ տաքսիով ուղարկեն: Երևանում արդեն սարդը ձեռքից գնում էր, նորմալ չէր կարողանում կանգնել. ճոճվում էր:

* * *

Երևան հասանք մթով: Թուրքերը դեռ նորմալ չէին տեսել Երևանը: Այդ օրն էլ չտեսան՝ այդ կարևոր դեպքը թողնելով ճամփորդության վերջին: Միայն 15 րոպեով կանգ առանք մի սուպերմարկետի մոտ, որտեղից նրանք գինու փոխարեն արդեն Արարատ կոնյակ գնեցին: Տուրակներով:

* * *

Թալինում խարսխվել էինք նախկին սովետական մանկապարտեզի շենքում տեղակայված Արվեստի կենտրոնում, որտեղ կազմակերպված էր «Քաղցր Մուշի» ֆոտոցուցահանդես: Մանկապարտեզի բակում սրգերի ծանրությունից ճկած ինձորենիներ կային: Ուրիկեն մի հատ պոկեց ու կերավ: Ես էլ: Հետո մի քանի նախադասություն ասացի իմ ամերիկյան փորձից սոսն գեղեցկությանը ու խոտի համով

⁶¹ Հայկակ Արշամյան, Հազարաշեն ՀԿ ներկայացուցիչ, ծրագրի համակարգող:

խնձորների մասին՝ կոնկրետ ակնարկելով զարգացած Եվրոպայի զարգացած գյուղատնտեսությունը: Եւ մոտավորապես համաձայնեց:

Երեք խումբ կազմվեց, ու ամեն մեկը գնաց տարբեր ուղղություններով՝ Շամիրամ, Աշնակ ու Իրինդ:⁶² Լուսինեն դեռևս նախնական հանդիպման ժամանակ տեղեկություններ էր հաղորդել այս գյուղերի և այնտեղ փնտրվող հնարավոր պատմությունների վերաբերյալ, ու ժողովուրդը նախապես կողմնորոշվել էր: Ես գնացի Շամիրամ, որովհետև Շամիրամը Հայաստանի այն սակավաթիվ գյուղերից է, որտեղ կոնպակտ ապրում են էթնիկ փոքրամասնություններ: Տվյալ դեպքում՝ եզդիներ: Ծրագրի թուրքական կողմից բոլոր քուրդ մասնակիցները եկան Շամիրամ:

Երբ հասանք գյուղ, պարզվեց, որ այնտեղ կապեր հաստատելու համար մեզ օգնող մարդը ինչ-որ դժբախտ պատահարի պատճառով մեկնել էր Երևան: Հետևաբար ինքներս պիտի կապեր հաստատեինք: Որի համար մոտեցանք ընկուզենու տակ խնրված տղամարդկանց, ու այստեղ տեղի ունեցավ անսպասելին: Պարզվեց՝ քրդերն ու եզդիները խոսում են նույն լեզվով: Ու եթե օտար մարդու ներկայությանը նրանք կարող էին խոսել իրենց լեզվով, ապա հիմա

⁶² Գյուղեր Հայաստանի Արագածոտնի մարզում՝ մոտ 600, 850, 1300 բնակչությամբ համապատասխանաբար: Աշնակի ու Իրինդի բնակչությունը Արևմտյան Հայաստանի Սատուն և Մուշ գավառների գաղթականների սերունդներ են, իսկ Շամիրամի բնակչությունը՝ Ցեղասպանության հետևանքով Արևելյան Հայաստանում հայտնված փախստական եզդիներ:

իրենց հասկացող կար: Կապեր հաստատելու մեր փորձերն անուշադրության մատնելով՝ նրանք շատ արագ ցրվեցին:

Ինչ հիշում եմ, Հայաստանը մոնոէթնիկ⁶³ երկիր է, հիմա՝ 98 տոկոսով: Բայց երբ ես գնացի դպրոց, մեր դասարանի 36 աշակերտներից մեկը եզդի էր, մեկը՝ հրեա: Մենք չէինք հասկանում՝ դա ինչ է նշանակում: Իրականում դա մեզ համար ոչ մի բան էլ չէր նշանակում: Մեր դատելն ուղղակի ասաց, որ եզդիները հայերի բարեկամներն են ու քրդերի ազգականները: Այդքանով վերջանում էին քրդերի ու եզդիների մասին մեր ունեցած գիտելիքները: Ու սկսվում էր մնացածը: Իսկ մնացածը երկար պատմություն ու խնամքով թաքցված ենթատեքստ ուներ: Որը սոցոնել էր Սովետական Միության կայսր Ստալին ձյաձյան՝ աչքի առաջ ունենալով Արևմուտքի հետ Թուրքիայի խաղեր տալու նկրտումներն ու Ֆաշիստական Գերմանիայի հետ համագործակցային նախապատրաստությունները: Ես կասկածներ ուներ Սոսկվայի պայմանագրով հաստատված Սովետական Միություն-Թուրքիա բարեկամության հարցում ու ըստ այդմ պլան-

⁶³ Արևելյան Հայաստանի բնակչությունը քսաներորդ դարի սկզբին համարյա քառասուն տոկոսով եղել է մահմեդական, սակայն Ցեղասպանության հետևանքով Արևելյան Հայաստան լցված փախստական հայերի քանակը կտրուկ փոխեց Հայաստանի ազգային կազմի համամասնությունը: Մինչև 1939 թ. Հայաստանի բնակչության 17,2 %-ը եղել է այլազգիներ: Իսկ 1989 թ. ազգային փոքրամասնությունների մասնաբաժինը կազմել է 7,7 %: Ընդ որում՝ Հայաստանում ապրող աղբբեջանցիները, քրդերը և եզդիները հիմնականում ապրում էին գյուղական բնակավայրերում:

ներ էր մշակում այդ ուղղությանը փորելու համար: Այդ նպատակին հասնելու գործիքներից մեկն առարկայացել էր մեր տան պատին ու ամեն երեկո՝ ժամը 5–ին, ազդարարում էր՝ Երևան խեբերդիդե:⁶⁴ Ու քրդական ինքնություն էր աճեցնում մի երկրում, որը, 1923 թ. ժառանգելով Օսմանյան կայսրության մի հատվածը, բաղկացած էր տասնյակ էթնիկ փոքրամասնություններից ու թուրքական ինքնություն ձեռնելու ակնհայտ պատճառով երկրի բոլոր օրենսդրական և ոչ օրենսդրական մարմիններով լծվել էր այլ ինքնությունները մարսելու գործընթացին: Որը գրեթե հաջողվեց: Գրեթե: Քրդերը, սակայն, մնացին կոկորդին: Ոչ միայն այն պատճառով, որ շատ էին: Այլ, որ տասնյակ տարիներ Թուրքիայի, Իրանի և Սիրիայի բոլոր քրդաբնակ վայրերում ամեն օր՝ նույն ժամին, իրենց մայրենի լեզվով հնչում էր՝ Երևան խեբերդիդե: Ու հարյուր հազարավոր քրդեր ամեն օր շունչները պահած սպասում էին այդ ժամին. Երևան խեբերդիդե: Որպեսզի լսեին քրդերեն երգեր: Ու ոչ միայն: Ու

⁶⁴ Քրդերեն՝ Erivan xeberdide, խոսում է Երևանը: 1955 թ. հայկական ռադիոյում հիմնադրվում է «Եզդիների ձայն» հաղորդումը՝ եզդիերենով, սակայն դրա հեռարձակման տիրույթն ընդգրկում էր Մերձավոր Արևելքի որոշ շրջաններ, որտեղ կոմպակտ ապրում էին քրդեր: Հաղորդումը պոպուլյար դարձավ 1960 թ–ից մինչև Բեռլինի պատի անկումը, որն աշխարհում նոր դիսկուրսներ առաջ բերեց: «Եզդիների ձայն» հաղորդումը հատկապես կարևոր էր Թուրքիայի քրդերի համար, որովհետև մինչև 1990 թ. ըստ պետական կեցվածքի, Թուրքիայում ապրում էին միայն թուրքեր: Սկզբնապես հաղորդումը հեռարձակվում էր 1,5 ժամ տևողությամբ՝ պատրաստելով իրադարձային և մշակութային բնույթի բովանդակություն, ապա՝ 1 ժամ, իսկ հիմա դարձել է 30 րոպե:

մարմանդ կրակի վրա եփվում էր քրդական ինքնությունը. Երևան խեբերդիդե: Այս խոսքերը ես էլ եմ տարիներ շարունակ լսել: Ու երբեք չեմ մտածել դրանց նշանակության մասին: Ինչ էր տալու քրդերին ռադիոյով քրդական երգ լսելը մի երկրում, որտեղ արգելված էր արտասանել քուրդ բառը. հարց: Ինչ ուզես: Այդ թվում՝ Քրդական բանվորական կուսակցություն ու Սքդուլահ Օջալան. պատասխան:

* * *

Գյուղը քաղաքականացված էր: Եզդիները քրդերին չէին սիրում, որովհետև նրանց պապերը ևս մտահոգվել էին, որպեսզի իմացվեր, թե ովքեր են քրդերը և ինչ են արել իրենց: Իսկ նրանք եզդիներին արել էին նույն բանից, ինչ հայերին, հույներին և Օսմանյան կայսրությունում ապրող այլ փոքրամասնություններին:

Ես, Լուսինեն, Գուլեն, Հըզնին ու էլի մի երկուսը որոշում ենք գյուղում պտտվել, մինչև գյուղապետը կգար: Գյուղի կենտրոնի աջ և ձախ կողմերում հպարտորեն կանգնած են երկու հուշարձան. մեկը՝ նվիրված իրենց կրոնին, մյուսը՝ Ցեղասպանության, Ստալինյան ռեպրեսիաների և Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին:

Գյուղի գլխավոր ճանապարհին անսպասելիորեն բարեկարգ էր, ու ընդհանրապես, Շամիրանում բարեկեցիկ ապրուստի առկայության մասին տարբեր նշաններ էին երևում: Մի քանի ջիպերի և բարեշեն

երկհարկանի տների տեսքով: Եզդիները Հայաստանում լավ են ապրում, հիմնականում զբաղվում են անասնապահությանը: Մոտակա տան բակերից մեկում մի կին ռեզիստ խողովակով լվանում էր պատշգամբը: Գուլեն, ժպիտը դեմքին, առաջացավ ու իրենց լեզվով մի քանի խոսք փոխանակեց նրա հետ: Կնոջ դեմքի արտահայտությունը, սակայն, չընդառաջեց Գուլեի ժպիտին: Ընդհակառակը, գնալով փակվեց: Մեզ այդ տանը չընդունեցին:

Հետո խաբար եկավ, որ գյուղապետը եկել է, ու գնացինք նրան հարցախույզի ենթարկելու: Գյուղապետի նախնիները Դոհուբից⁶⁵ էին: Նա սերում էր աղաների ընտանիքից ու բեկի տիտղոս ուներ: Հավանաբար դա էր պատճառը, որ նրա երկու աչքերը 360 աստիճանով պտտվում էին կլոր դեմքի վրա: Նա խոսեց երեք և ավելի ժամ, որի ընթացքում ժամանակ առ ժամանակ անցնում էր քրդերենի⁶⁶ կամ եզդիերենի, ու Հըզնիին որոշ բաներ էր բացատրում, որի իմաստն այն էր, որ քրդերը հավատուրաց եզդիներ են: Ի սկզբանե եզդիներն էին: Որոնք դավանում էին և են Շարֆադին կոչվող կրոնի, որի առանցքում արևապաշտությունն է: Հետո եզդիների մի սասն իսլամացել է. այդպես են առաջացել քրդե-

⁶⁵ Հյուսիսային Իրաքի քաղաքներից: Ներկա Իրաքի ու Թուրքիայի սահմանամերձ տարածքը, որը համընկնում է Իրաքյան Քուրդիստանի հետ, եզդիների շրջանում ընդունված է համարել եզդիների բնօրրան:

⁶⁶ Հայաստանի եզդիներն ու Թուրքիայի քրդերի մեծամասնությունը խոսում են նույն լեզվով, սակայն Հայաստանում ապրող եզդիների մեծ մասը գերադասում է լեզուն անվանել եզդիերեն, իսկ քրդերը՝ քրդերեն:

րը: Սակայն կրոնը կուսակցության պես բան է: Եթե կրոն ու կուսակցություն չլիներ, ամեն բան լավ կլիներ: Գյուղապետը շարունակում էր բարձրաձայն մտածել: Եւ պտտվող ակնակապիճներում թափառող սարկազմով մեղմորեն հանդիմանեց մեր քուրդ մասնակիցներին առ այն, որ նրանք ոչինչ չգիտեն իրենց ինքնության մասին: Այդ մասին հայտնի էր դառնալու երեկոյան՝ ռեֆլեքսիայի ժամանակ: Որ գյուղապետը Գուլեին առաջարկել էր հետազոտել իր հիմքերն ու գիտելիքներ հավաքել իր իսկ մասին: Ինչո՞ւ ոչինչ չգիտես քո մասին: Դու եզդի ես: Դե հիմա գնա՛ ու կողմնորոշվի՛ր: Ու Գուլեն առաջադրանք ստացավ: Վերադառնալուն պես պարզել իր արմատները: Որովհետև ոչինչ չգիտեր եզդիների մասին: Ոչ որ չգիտեր նրանց մասին: Շանգալի ցեղասպանությունից առաջ: Տխուր փաստ: Կնկատի տխուր Քուրդ մասնակիցը: Որ աշխարհը եզդիների գոյության մասին իմացավ նրանց ցեղասպանությունից հետո: *Ոչ էլ տխուր է: Այդպես է ցանկացել Սարվաձ պապիկը, ու նրա պատկերը կրող մարդը:*

Գյուղապետը շարունակում էր ինքնամոռաց խոսել: Եւ Հայկական հարցի վերաբերյալ ռադիկալ կեցվածք ուներ: Ճիշտը նա է, ով ապստամբում է: Ով չի ապստամբում, էշի պես քշում են: Ու Էրդողանը տղամարդ չէ: Եթե տղամարդ լիներ, կընդուներ Ցեղասպանությունը: Դե հիմա եղածը եղել է: Ընդունենք՝ վերջանա՛գնա: Սահմանները բացվեն: Մարդիկ գնան-գան: Երկու կողմի համար էլ լավ կլինի:

Հետո նա անսպասելիորեն ասաց.

— Դոհուքը մերն է: Դոհուքը հետ բերելու հարցով դիմելու եմ միջազգային դատարան:

* * *

Հարցախոյզի ավարտից հետո ժամանակ չմնաց գյուղն ուսումնասիրելու, ու հապշտապ պետք է վերադառնայինք Թալին, որովհետև ցուցահանդեսի բացումը պիտի Լուսինեն աներ: Մեր քրդերը ցանկացան մնալ գյուղում և պտտվել: Սակայն Քուրդ մասնակիցը մեզ հետ եկավ: Ինչ-որ դեպք էր պատահել՝ քուրդ-եզդի ենթատեքստով, որը չհաջողվեց պարզել: Նա կրկին տխուր էր: Սակայն Շամիրամ էր եկել նաև Բզեզի մինիստրի Ֆաբիանը, ու Գուլեն նրա հետ մնաց: Պարզվեց՝ գյուղում Գերմանիաներում աշխատած մարդ էր գտնվել, որ գերմաներեն գիտեր, ու այդպես նրանց շփումն ստացվել էր:

Երբ հասանք Թալին՝ Արվեստի կենտրոնի բակում մեծ բազմություն էր հավաքվել. Մուշի փուլում պատմահավաքներն այս կողմերում աշխատել էին, ու այս պրեզենտացիան էլ մի առիթ էր, որ մարդկանց պատմեին «Քաղցր Մուշի» մասին: Մարդիկ էին եկել, որոնց ընտանեկան պատմությունները ներկայացված էին գրքում: Դե Թալինում մշեցիները շատ են:

* * *

Արդեն դարձավ ժամը 10–ը: Գնամ նախաճաշի. երեկոյան կողմ նորից կաշխատեն: Այսօր հանգստանալու ենք: Ըստ գրաֆիկի՝ ոչինչ նախատեսված չէ: Ավելի ճիշտ, Բզեզի թիմն ու պատմահավաքները պիտի աշխատեն իրենց պատմությունների վրա: Սեկ էլ իրիկունը Ուլրիկեն պիտի ռեֆլեքսիա անի:

* * *

Կեսգիշեր է: Նոր են եկել Սուրատ փարթիից ու որոշեցի աշխատել, որովհետև վաղն առավոտ շուտ գնալու ենք Երևան, ու մեր խումբը բաժանվելու է: Հյուրանոցում մնալու են միայն թուրք մասնակիցները և հայերից միայն նրանք, որոնք մարզերից են: Դա նշանակում է, որ վաղվանից քնելու են տանը ու դժվար կարողանան օրագրիս վրա աշխատել:

Առը հա, թե հանգստացանք: Օզլեն–Ավետիս⁶⁷–Լուսինե եռյակը փոխարինաբար անբողջ 4–5 ժամ նենց ռեֆլեքսեց պատմահավաքներին, որ ես չդիմացա ու սկսեցի ՍԵՄՈՒՇԿԱ չրթել: Հընթացս նաև պարզվեց, որ Բզեզը պիտի հրատարակվեր մեր ճամփորդության վերջում: Նոր դետալ, որի մասին դեռ չգիտեինք: Այս Բզեզը աչքիս էն սեթևեթող աղջիկնե–

⁶⁷ Ավետիս Քեշիշյան, Դի–Վի–Վի Ինթերնեյշնալ հայաստանյան գրասենյակի ծրագրի համակարգող:

րից է, որ կանաց–կանաց է բացվում, իսկ երբ ցույց է տալիս դեմքը, տեսնողի աչքերը վախից սևանում են:

Ճիշտն ասած՝ Բզեզի թիւն էլ է անեն օր ռեֆլեքսիաներ անում, բայց ես մի անգամ եմ մասնակցել, որի ժամանակ վերահաստատեցի ինացածս, որ հրատարակությունները մեծ ազդեցություն ունեն հասարակության վրա, ու եթե մարդը փոփոխությունների մասին պատմություններ պատմի, այդ փոփոխությունները տեղի կունենան: Տպավորիչ գիտելիք, որը թե՛ հայ և թե՛ թուրք մասնակիցները լավ կանեին՝ կախեին իրենց ականջի մի բլթակից ու այդպես ման գային այնքան ժամանակ, մինչև այդ գիտելիքը դառնար իրենցը: Թուրքերը չգիտեմ, բայց մերոնց նման բաներ ասել հաստատ պետք չէ, վասնզի նրանք անեն ինչ գիտեն, այդ թվում նաև այն, որ ժամանակակից տեխնոլոգիաների դարում կարելի է հեշտորեն ինքնահրատարակություն ունենալ այնտեղ, որտեղ ապրում ես: Օրինակ՝ քո տանը: Ու ստեղծել մեդիա, որը դիպչում է քո սրտին, ու պատասխանը գալիս է հենց այդտեղից, որովհետև դու գիտես, թե ինչու ես պատմում այդ պատմությունը: Որովհետև միայն այդ դեպքում է, որ դու կանես այն, ինչ քեզ դուր է գալիս, այլ ոչ թե կապասես ինչ–որ դոնորի, որի հետ գլուխ դնելը հեշտ չէ: Մեղմ ասած: Բա հաշվետվություններն ու մնացածը:

Ռեֆլեքսիա կոչվածը սնտավորապես մտքերի բարձրաձայն փոխանակում է, սակայն պարզվեց այն սարսափելի մի բան է, որովհետև Ավետիսը, փաստորեն, ամեն օր պատմահավաքներին ռեֆլեքսահարում էր: Ուրեմն Ուլրիկեն ռեֆլեքսում էր՝ մեկ, Օզլենը՝ երկու, ու անկախ բոլոր տեսակի ու որակի ռեֆլեքսիաներից՝ բոլորին մի հատ էլ պարտադիր ռեֆլեքսում էր Ավետիսը: Եթե անգամ բոլորն արդեն ռեֆլեքսվել էին: Պետք էր ռեֆլեքսել ռեֆլեքսիան:

Ռեֆլեքսիաների ժամանակ ժողովուրդը պատմում էր օրվա գլխին եկածն, ու բոլորը համաձայնում կամ չէին համաձայնում: Սյդպես մարդիկ հաղորդակցվում էին միմյանց ու զուգահեռ աշխատող խմբերի պատմություններին: Հետո փորձագետները որոշում էին, թե այդ պատմություններից որ մեկն է արժանի տպվելու Բզեզի պես պատվարժան ամսագրում:

Պատմություն թիվ 1. Ձկան հարցը

Նրա սկեսուրը ձուկ չէր ուտում
 որովհետև իր երեխաներին կերել էին ձկները
 փամփիլիկ-համփիլիկ էին արել ձկները
 երեխաներին, որոնց նա փրկել էր Արևմտյան
 Հայաստանից
 ու որոնց խլել էին Արևելյան Հայաստանի գետում
 ապրող ձկները

Պատրանություն թիվ 2. Մեծքի հարցը

Նրա տատը պետք է ողջ լիներ ու տեսներ, թե
նոց է թուրքը կոխում իր շենը

Նրա տատը պետք է դա տեսներ ու մինչև մահ ու
գերեզման անիծեր հարսին

* * *

Հարցազրույցներից մեկի ժամանակ մի 82-ամյա
կին պատմել է, թե ինչպես է իր ընտանիքը սպանվել
Ցեղասպանության ժամանակ: Պատմության կեսին
նա հանկարծ հարցրել է, թե ով է Գուլեն: Կինը են-
թադրել էր, թե Գուլեն թուրքահայ է: Նրանք նայել են
միմյանց աչքերի մեջ: Գուլեն և 82-ամյա կինը: Սյն կի-
նը, որի ընտանիքին սպանել էին քրդերը: Հետո Գու-
լեն իրեն հատուկ աշխուժությամբ գրկել է կնոջն, ու
նրանք միասին արտասովել են: Կամ, առնվազն, ցան-
կացել են արտասովել:

* * *

Օզլեն–Լուսինե–Ավետիս ռեֆլեքսիայից հետո
նախատեսված էր լայնամասշտաբ ռեֆլեքսիա, որը
նախաձեռնել էր Ուլրիկեն՝ աչքի առաջ ունենալով
այն հանգամանքը, որ սա վերջին գիշերն է, երբ ողջ
խումբը գիշերելու է նույն տեղում: Ես օգնեցի Կարմե-
նին, որ աթոռները շրջանաձև դասավորենք: Վեր-

ջուս էլ հաշվեցի: Կլոր՝ 40 աթոռ: Բայց պարզվեց, որ ռեֆլեքսիան անուս են միայն Բզեզի կազմով: Որովհետև ադմինիստրացիան հայկական թիմից բողոք էր ստացել Բզեզի և նրա թիմի դեմ: Իբր ճիշտ չեն աշխատում: Սվեյի կոնկրետ՝ իրենց ուզածով չեն աշխատում: Ու ադմինիստրացիան որոշել էր, որ ռեֆլեքսիան են միայն Բզեզ-կազմակերպիչներ կազմով: Խտրականություն, որի դեմ արժեր բողոքել ՄԻԵԳ-ին: Ինձ էլ շատ բարեկրթորեն զգուշացրին, որ դուրս գամ սենյակից, չնայած իմանալով որոշման մասին՝ զնացել ու պահվել էի մի սեղանի տակ: Ուրիկեն, սակայն, հմտորեն հայտնագործեց իմ թաքստյան տեղն ու ամենայն համբերատարությամբ կրկին դուրս հրավիրեց: Ես բողոքեցի: Սաացի, որ աթոռները ես եմ դասավորել, հետևաբար իրավունք ունեն մնալու սենյակում: Ես անդրդվելի էր: Բայց դուրս գալուց առաջ ականջներս պոկեցի ու կացրի սենյակի պատերից մեկին: Սակայն խստապահանջ Ուրիկեն դա էլ նկատեց ու Կարմենի միջոցով ականջներս փոխանցեց: Դե չէ՛ չէ: Ես էլ ուրիշների պատմածը կպատմեմ: Հայկական թիմը, փաստորեն, ծանր հրետանիով գրոհել է, որին գերմանացիներն արժանի հակահարված են տվել: Թուրքերը մնացել են անտարբեր կայուն: Զգացմունքների պարկեր են գլորվել, արտասուքը գետի պես հոսել է:

Բզեզին, սակայն, պետք էր լայնորեն անդրադառնալ, որովհետև այն ծրագրի ամենատեսանելի պրոդուկտն է, որը կարելի է ձեռքով շոշափել: Իսկ դրա նկատմամբ ձևավորված հայկական խմբի բացասական վերաբերմունքը տեսանելի էր դարձնում հայ-թուրքական հարաբերություններում առկա լայնասպեկտր ենթատեքստերի հակասություններն, ու ստորելու լավ նյութ էր:

Իրականում Բզեզն իր ծնունդով պարտական է Մուշին, որովհետև 2011 թ. իրականացված այս ծրագրի արդյունքներն ամփոփող «Մուշ, քաղցր Մուշ» գիրքը լույս է տեսել, բռնվեք, այս տարի: Հրքր: Ճիշտ է, անգլերեն տարբերակը հրատարակվել էր 2013 թ., բաց բերանով ես ասում. երկու տարի՝ 2011–2013: Սակայն հայ-թուրքական ծրագիր անելը հեշտ չէ, ու եթե այս փուլում մեր թուրք մասնակիցները բավականին լայնախոհ են, ու հենց իրենք են պնդում Ցեղասպանություն եզրի գործածությունը, ապա նախորդ փուլերում միշտ չէ, որ այդպես է եղել: Ասում են՝ մի շատ բարեկիրթ թուրք երիտասարդ այս ամենի միջով անցնելուց ու լսելուց հետո ասել է՝ կներեք, բայց սա Ցեղասպանություն չէ: Ու տենց: Ծրագրի ավարտից հետո երկու կողմի մասնակիցները շաբաթներով ու ամիսներով սակարկել են ամեն մի բառի, տառի ու ստորակետի համար: Ասում են՝ այդ գործի վրա մարդիկ հազարավոր ծիծիլիոն մեզաջողուլ էներգիա ու ժամանակ են վատնել: Սեղն ասած՝ մեզաջողուլ: Սա-

թիան, օրինակ, այդ գրքի ստեղծման վրա վատնել է կյանքի կեսը, իսկ Լուսինեն՝ ինչ–որ մի երկու տարի: Ու հենց այդ պատճառով այդ դեպքից հետո որոշվել էր՝ այլևս ոչ մի հրատարակություն:

Սակայն, ինչպես ասում են, շաբաթն ուրբաթից շուտ է գալիս, ու Աստված պապիկի բարեգութ կանոք ծնվում է ճանփորդական անսագիր հրատարակելու մի գաղափար: Սույն աստվածահաճո միտքը կյանքի կոչելու համար ծրագիր է հրավիրվում գերմանացի երիտասարդ ու հավակնոտ սեդիա մասնագետների մի խումբ,⁶⁸ որոնք Գերմանիայում հրատարակում էին երջանկաբեր⁶⁹ գերժամանակակից անսագիր, որի լսարանը հիմնականում Գերմանիայի միջին խավն է: Ու այստեղ միտք է ծնվում դժվարամարս ու կնճռոտ պատմական թեման համատեղել զիլ սողեռն նախագծի հետ, ու այդպիսով Ցեղասպանությանը վերաբերող հարցերը գեղեցիկ փաթեթավորմամբ հրանցնել Գերմանիայի միջին վիճակագրական քաղաքացուն, որն այդ մասին գիտե այնքան, ինչքան միջին վիճակագրական քուրդը՝ եզդիների:

Սյապես է ծնվում ծրագրում անսագիր ընդգրկելու միտքը, սակայն հաշվի առնելով նախորդ փուլի ընթացքում ծախսված կյանքերը՝ որոշվում է անսագրի բովանդակությունը պատրաստել ճանապարհին: Սյսինքն՝ ծրագրին հայտ ներկայացրած

⁶⁸ Խումբն իրականացնում է «Հրատարակիր ինքդ» անվանմամբ թրեյնինգներ, որոնցում ընդգրկված են հրատարակիչ, լուսանկարիչ և դիզայներ: www.publish-yourself.org

⁶⁹ Անսագիրը կոչվում է Froh!, որը նշանակում է երջանիկ:

մասնակիցները նախապես տեղյակ էին, որ մեկնում են մի ճամփորդության, որի ընթացքում նրանք պետք է զբաղվեին ոչ միայն ֆոտո/պատմություններ հավաքելով, այլև մինչև ճամփորդության ավարտը ներկայացնեին վերջնական պրոդուկտը: Ֆաբիաննց գործն էլ քիչ չէր լինելու: Նրանք ստանձնում էին աշխատել մասնակիցների ներկայացրած պատմությունների վրա՝ հընթացս հզորացնելով նրանց կարողություններն անսագիր ստեղծելու վերաբերյալ: Ենթադրվում էր, որ ճամփորդության ավարտին սեղանին դրված կլինեին անսագրի առաջին դրաֆթը, իսկ մասնակիցները կդառնային անսագրի հրատարակության գիտակներ՝ տիրապետելով նյութին ստենալու, դրա շուրջ ռեֆլեքսելու, այն կառուցելու և այդ ամբողջը համապատասխան դիզայնով մատուցելու բազմազարմազան տրյուկներին:⁷⁰ Միտքն իսկապես գայթակղիչ էր: Սակայն ծանրացնում էր մասնակիցների բեռը: Միևնույն ժամանակ համամարդկային արդարությունն այս կետում պահանջում է նշել, որ դժգոհությունը մարդուն հատուկ երևույթ է, և եթե մասնակիցներին նույն աշխատանքի համար իքս օրվա փոխարեն տրվեր իքս+2 օր, միևնույնն է, նրանք դժգոհելու ինչ-որ այլ պատճառ կգտնեին:

⁷⁰ Խոսքը վերաբերում է Ճամփորդական անսագրի մասնակիցներին: Սակայն երկու խմբերը մինչև բուն ճամփորդության մեկնելն իրենց երկրներում անցել են բանավոր պատմություններ հավաքելու հմտություններին նվիրված թեյնինգ, որն անցկացրել են ծրագրի հայկական և թուրքական գործընկերներ «Հազարաշեն» ՀԿ-ն և «Պատմության հիմնադրամ» ՀԿ-ն Հայաստանում և Թուրքիայում համապատասխանաբար:

Բզեզի նկատմամբ հայկական խմբի ընդգծված բացասական վերաբերմունքի պատճառը, սակայն, թաքնված էր խորքային շերտերում: Ու դրանք մի քանիսն էին: Մի կողմից հայտնի է, թե որն է ճապոնական հաջողության գաղտնիքը. նրանք ինչ-որ պրոյեկտի համար նախատեսված ժամանակի 90 տոկոսը ծախսում են պլանավորման և քննարկման վրա, իսկ տասը տոկոս ժամանակում իրականացնում են պլանավորածը: Սա, բնականաբար, շատ թանկ արժե: Մյուս կողմից՝ Ֆաբիանն⁷¹ ընդգծում էր, որ ծրագրի բոլոր կողմերը Բզեզից տարբեր սպասելիքներ ունեին, և նրանցից յուրաքանչյուրն ուներ իր սեփական սնոտեցումն ու տեսլականը, թե ինչ է իրենից ներկայացնելու Բզեզը: Մինչդեռ պատկերացրեք, Բզեզն ուներ մինիստրություն, և հետևաբար՝ իր ընկալումն իր սեփական պրոդուկտի մասին: Հո դուք ձեր համար բանվոր չեք վարձել, որ կարգադրեք մի քարը դնել այստեղ, մյուսը՝ այնտեղ: Ու թեպետ տարածված ընկալում կա, որ կոնպրոմիսն օգտակար բան է, սակայն սկզբունքներն էլ պակաս հետաքրքիր չեն:

Մյուս շերտն էլ գալիս է պատմական ակունքներից: Թուրք սասնակիցներից Բզեզի վերաբերյալ բացասական ազդակներ չեկան: Եթե անգամ եղել են, չի նկատվել: Ու սրա պատճառը հայ և թուրք սասնակիցների՝ մինյանցից 180 աստիճանով տարբեր

⁷¹ Ֆաբիան Վեյս, Հարցազրույց, Երևան, սեպտեմբերի 19, 2015:

ընկալումներն են, որոնք ձևավորվել են նույնպիսի տարբեր իրականություններում: Եթե միջին վիճակագրական հայի գիտակցությունում Յեղասպանության հարցը 100–ամյա ծանր հիշողություն ունի, ապա նույնիսկ առաջադեմ թուրքի համար այն հեղինեղուկ գիտելիք է, ու նրա առաջնային օրակարգում այլ հարցեր են գերակշռում: Մինչդեռ Յեղասպանությունը, թեպետ, հայի կենցաղում չի քննարկվում, սակայն նստած է խոր ենթագիտակցական շերտերում և հենց այնտեղից է կազմակերպում նրա կենցաղը:

Այս ամենից գատ, սակայն, ամենացցուն գործոնը հայկական ավանդական պահպանողականությունն է, որն այնքան խորն է արմատացած մեզ մոտ, որ շատ ժամանակ գլխի էլ չենք ընկնում, թե որն է մեր ներքին կոնֆլիկտի պատճառը: Թուրքերի պահպանողականությունը չեն կարող չափել, այդ մասին թող իրենք ստածեն: Բայց մեր պահպանողականությունը չափ ու սահման չունի, ու դրա ամենացայտուն դրսևորումներից մեկն այն խավարն էր, որ իջավ Հայոց աշխարհի վրա, երբ ճարտարապետական Ոսկեդար⁷² պարզևած քաղկեդոնականները դուրս

⁷² VI դարի վերջից մինչև VII դարի վերջը համարվում է հայկական ճարտարապետական Ոսկեդար, որովհետև այդ ժամանակահատվածում իրականացվել է աննախադեպ ծավալի եկեղեցաշինություն: Հայկական մեդիա մեյնսթրիմում ճարտարապետական Ոսկեդարը չի կապվում քաղկեդոնականության հետ: Արաբների կողմից Պարսկաստանի նվաճման հետևանքով, սկզբնական ժամանակաշրջանում ուժեղացան Բյուզանդիայի դիրքերը Հայաստանում, և դավանաբանական վեճերը երկրորդ պլան մղվեցին: Հայկական ծագումով Հերակլ կայսրը և Կ. Պոլսի Սերգիոս պատրիարքը Եզր Ա Փռառժնակերտցի կաթողիկոսի հետ կնքում են Միականության (մոնոֆիզիտություն) դա-

նդվեցին կրոնական համակարգից, ու գահին բազմեցին անասան առաքելականները:

Մտո 8 տարի ձգվող ծրագրերի ընթացքում պատմահավաքությունը⁷³ եղել է հիմնական բաղադրիչ կամ առնվազն գերակշռող դեր է ունեցել: Սա շատ հասկանալի է ու հասկանալի պատճառով՝ հայերի սրտին դուրեկան: Սակայն այս փուլում պատմահավաքության բաղադրիչի դերը նվազեցված էր՝

վանագիր, որի միջոցով Բյուզանդիան փորձում էր քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների միջև փոխընդունելի դավանաբանական բանաձև գտնել՝ վերջ տալու համար կայսրությունը երկփեղկած դավանաբանական վեճերին: Արաբների և Բյուզանդիայի միջև ռազմական հավասարակշռություն ստեղծվելուց հետո արաբները, իրենց ազդեցությունը պահպանելու համար սկսեցին զբաղվել քրիստոնյաների դավանաբանական վեճերով և 726 թ. հայ-ասորական Մանազկերտի եկեղեցական ժողովի ժամանակ հայերին ստիպեցին հրաժարվել Միակամության մասին բանաձևից, մյուս կողմից՝ Բյուզանդիան նույնպես հրաժարվեց դավանաբանական հաշտեցման քաղաքականությունից, քանի որ մոնոֆիզիտների մեծամասնությունը հայտնվել էր արաբների տիրապետության տակ և ավելի խստացրեց իր քաղաքականությունը հակաքաղկեդոնականների դեմ:

⁷³ Բանավոր պատմությունների հավաքագրումը նորագույն պատմության հետազոտության մեթոդ է, երբ ի լրումն արխիվային կամ այլ գրավոր աղբյուրների՝ հետազոտողը տեղեկություններ է հավաքում նաև հարցազրույցների միջոցով, որը, որպես կանոն, անցկացվում է հետազոտվող իրադարձության մասնակից կամ վկա եղած մարդկանց հետ: Այն հատկապես կարևորվում է այն համատեքստում, երբ պաշտոնական պատմագրությունն ու մարդկանց անհատական հիշողություններն իրարից շատ են տարբերվում: Ցեղասպանական համատեքստում տվյալ մեթոդը կիրառվում է հատկապես զոհերի հիշողություններն ու վկայությունները հավաքելու համար: Դի-վի-վի Ինթերնեյշնալի կողմից իրականացված հայ-թուրքական հաշտեցման ծրագրերում բանավոր պատմության մեթոդով հարցազրույցներն անց են կացվել ոչ թե իրադարձությունների անմիջական վկաների, զոհերի և մասնակիցների, այլ վերջիններիս ժառանգների հետ՝ այսպիսով գրառելով պոստ-հիշողությունը:

հիմնական դերը հատկացնելով ինչ-որ անհասկանալի ամսագրի: Դրան էլ գումարվում էր Ֆաբիանենց վերաբերմունքը, որոնք կողմ էին հրատարակել անձնական փորձառությունների և վերլուծությունների վրա հիմնված պատմություններ, որոնց առանցքում կարող էր ընկած լինել ոչ թե 100-տոկոսանոց ճշմարտությունը, որն, ի դեպ, միշտ վիճահարույց է, այլ մարդու տպավորությունն ու հայացքը: Համանման վերաբերմունք նկատվում էր նաև Աճող արխիվի նկատմամբ, որը, նկատի ունենալով ցուցահանդեսի և թանգարանի մասին մեյնսթրիմի ընկալումը, կարելի էր որակել ոչ թե *Բզեզ*, այլ իսկական *Ոսրիճ*: Այդ վերաբերմունքը, սակայն, տեսանելի չդարձավ, որովհետև Աճող արխիվի աշխատանքը չէր հատվում Բզեզի ու պատմահավաքների գործողությունների հետ, ու նրանք զուգահեռաբար աշխատող մինիստրություններ էին:

Օր 8-րդ, սեպտեմբերի 21

Արդեն էջմիածնում ենք: Իմ աշխատասենյակի լուսանուտից երևում է Արարատը, որն այլևս մերը չէ: Խնում են առավոտյան սուրճս ու փորձում ի մի բերել երեկվա օրը:

Մի քիչ ուշացել էի ու Մայր Աթոռ հասա ճիշտ այն պահին, երբ խումբն Արարատի ֆոնին լուսանկարվում էր: Հետո ժողովուրդը ցրվեց, ամեն մեկն՝ իր գործով: Ես էլ արանքում փորձեցի կտոր-կտոր լինել ու ամեն մի կտորը գործողել տարբեր ուղղություն-

ներով, սակայն հասկանալով, որ բան դուրս չի գալու, օգնություն հայցելու ակնկալիքով հայացքս հառեցի Սրարատին: Հանկարծ հեռվից լսվեց մոտեցող գնացքի շչակը, ու հասկացա, որ որոշումը եկավ: Էս օրն էլ կանցկացնեն պապուս հետ: Հերն էլ անիծած:

պու-ու-ու-չոք-չոք-չոք-չոք-չոք-չոք

Բարձրանում են վագոն ու գտնում այն կուպեն, որտեղ թողել էի պապուս: Սրածայր բեղերը մի կողմ սղալած՝ նույն դիրքով անշարժ նստած է: Բացակայող հայացքով: Համբերատար սպասում է, թե երբ ենք Կարս հասնելու: Հա, բա ո՞նց: Հենց ստեղծից վերջացնենք, Կարսով գնում ենք Թուրքիա: Էհ, բալվա ջան: Իմ ջահել տարիներին Կարսը պարսպապատ էր ու մի քանի դուռ ուներ: Գիտե՞ս՝ քանի անգամ են էդ դռներով ներսուդուրս արել: Յարաբ, էդ դռները հիմա կա՞ն: Մինչև կպատասխանեի, որ չգիտեմ, դուռը բացվում է, ու ներս է մտնում ժպտերես էքինը: Ես մի լավ զարմանում եմ, իսկ պապս աչքերն է խոլորում: Պահի տակ սոգոնում եմ, որ էքինը եկել է՝ իր պատմությունը գրի առնելու: Գրող ա, այ պապ: Պատմություններ ա հավաքում հայ-թուրքական համատեղ անցյալի մասին: Համ: Դե լավ: Նստի՛, տղա՛ ջան: Հիմի կպատմեմ: Բայց էդ մագերդ ինչի՞ ես երկարացրել, բա՞ դա տղային սագական ա: Վանյ, պա-պի՛, դու քո պատմությունը պատմի, հիմի ժամանակները փոխվել են: Հիմի աղջիկներն են տղաներին առաջարկություն անում: Ստում ու լեզուս կծում են: Հիշելով, թե

օֆֆթոփ ռեֆլեքսիաներից մեկի ժամանակ ինչ աշխուժությամբ էր քննարկվում կարմիր խնձորի հարցը: Կուսաթաղանթը սրբության մը պես բան է: Հապա, հապա: Ձեռքներին ճար լինի՝ մի կուսաթաղանթ կխփեն պատին ու օրը հինգ անգամ գլուխները կխոնարհեն դեմը: Ինչ գենդեր: Ինչ ծակ մեշոկ: Կուսություն, կուսություն մինչև վերջ: Նասկի լվալն էլ աղջկա գործն ա: Լավ կանի, որ կռանա ու ինքն էլ հանի: Չնոռանալով հոտոտել: Ինչքան հոտը փխ լինի, էնքան իրա մարդը ճիշտ տղամարդ ա: Վարագույր:

պու-ու-ու-չոբ-չոբ-չոբ-չոբ-չոբ-չոբ

Ներս է մտնում Սիբելը: Պարզվում է՝ էքինի հետ էջմիածնում պտտվելիս սոլորվել են ու գնացքին ռաստվելիս որոշել են հասկանալ, թե ինչ գնացք է ու ուր է գնում: Նստի՛, Սիբել՛ ջան: Էս իմ պապին ա: Բարև, պապի: Բարև, աղջիկ ջան: Ինչ բանի եք: Հայ-թուրքական բարեկամություն ենք կառուցում: Պիտի նենց անենք, որ սահմանը բացվի, որ էս գնացքով գնանք, գանք: Ո՞նց: Ինչի սահմանը փակ ամ: Վայ, պանպի, բա ի՞նչ ա: Նորվա փամկն ա: Կլինի մի 25 տարի: Բա հո՛ւստ ենք Կարս էթում: Մենք կեթանք, մի՛ ստածի: Մենք գրող ենք: Գրիչն էլ ա մեր ձեռքը, թուղթն էլ: Մնց ուզենք, նենց էլ լինելու ա: Համ, բալա՛ ջան: Համ, պապի՛ ջան: Դե հիմի պատմի՛, թե ո՞նց ես գերի ընկել թուրքերին, որ էն ֆլռընջին էլ օգնել ա:

Դե ինչ պատմեմ, բալա՛ ջան: 13 թիվն էր: Ես էլ՝ 16 տարեկան ազապ տղա: Արյունը երակներումս

ըլթըլթալով վազում էր: Ուրեմն քրոջս հարսանիքն ա, ու մեկ էլ մի խումբ քուրդ ա ներս մտնում: Մենք սրանց հարգում-պատվում ենք: Սրանց գլխավորը, թե չտռած-չթսած անկողին ենք ուզում: Էդ ինչ ա պապի: Էքինի աչքերն էլ էն կողմից են կլորանում: Մի ձեռքով էլ հյուստակն ա ոլորում, որ կոսի տակից դուրս չպրծնի: Դե ո՞նց ասեն: Պապս շիկնում ա: Հարսի օժիտի մեջ պարտադիր անկողին ա լինում, չէ՞: Դե նայած՝ երբ: Հիմի տենց չի: Նայած տեղ, այ պապ: Հիմի միանգամից տուն են օժիտ տալիս կամ էլ մեքենա: Աղջիկ էլ կա, որ ասում ա՝ ես տեղով օժիտ են: Յս: Հըբը: Հիմի աղջիկներն ազատագրվում են օժիտի հետ ունեցած արնատական կապերից: Մ'յ ձունը՝ դրանց կրթված գլխուն: Դե թարգի, այ պապ: Հիմի կարգերը փոխվում են, բան: Ես էլ իմ օժիտի գդալները նվիրեցի Կարմենի արխիվին: Կարմենն ռվ ա: Հեջ, հասել էինք անկողնուն: Հս: Բյասար, իրանք թագա հարսին էին ուզում: Ի՞նչ: Հըբը: Ստեղ փետուս արյունը խփում ա քունքերին, ու սա տեղում դրանց գլխավորին գյուլում ա: Սրանք էլ փետուս են գյուլում:

Խեղճ հարս: Տեսնես ինչ եղավ քո ճակատագիրը:

Հարսի ճակատագիրը պարզել չի հաջողվում: Որովհետև պապս, որ լավ հայտնի էր տամարը ժամանակ առ ժամանակ խփելու հատկությամբ, հենց հարսանքատեղից արնակալած աչքերով քշում ա դուզ ռազմաճակատ:

պու-ու-ու-չոբ-չոբ-չոբ-չոբ-չոբ-չոբ

հաջորդ կայարանը՝ նուսալեռ

Հայտարարում է վագոնավարը: Ու ես իջնում եմ, որովհետև Գրիգորը որոշել էր հարիսա եփելու արարողությունը նկարել, ես էլ վաղուց չէի եղել Մուսալեռում⁷⁴ ու նտածում էի հետը գնալ: Բա էրի՞նք: Էրինը թող մնա պապուս հետ: Ո՞նց: Հըբ ինչիս: Պապս թուրքերեն գիտի: Յո՛ւ: Հըբ ինչիս: Հերս էլ գիտի: Տո, որ ուզում ես իմանալ, ես էլ գիտեմ: Մնա՛, էրի՛ն ջան: Սիբելի ու պապուս հետ ջան ասեք, ջան լսեք: Դու պատմություններ ես հավաքում, իսկ ես պապուս պատմությունը ծիծիլիոն անգամ լսել եմ: Թող քեզ պատմի, դու էլ ինացի: Պալի, հետո էլ ուրիշներին պատմես:

պու-ու-ո՛ւ-չըբ-չըբ-չըբ-չըբ-չըբ-չըբ

Տո՛, Գրիգոր, այ տա, Գրիգոր: Ո՞րդիան կուգաս, այ Գրիգոր: Ուղիղ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնից: Ժողովուրդն աշխատում է պատմությունների վրա: Ինքն էլ իր գործին է: Տաքսիով քշել է դուզ Մուսալեռ:

⁷⁴ Երևանից 12 կմ հեռավորությամբ գտնվող գյուղ, կրում է ներկայումս Թուրքիայի հարավային հատվածում՝ Սիրիայի հետ սահմանին գտնվող Մուսա լեռան անունը: Ցեղասպանության ժամանակ լեռան լանջին տեղակայված 6 հայկական գյուղերի բնակչություն, մերժելով տեղահանության հրամանը և կանխագգալով իրենց սպառնացող վտանգը, բարձրացավ Մուսա լեռն ու սկսեց ինքնապաշտպանություն, որ տևեց 1915 թ. հուլիսի 21-ից մինչև սեպտեմբերի 12-ը: Մուսա լեռան գագաթին ապաստանած 4321 բնակիչներին փրկել են նրանց օգնության հասած անգլիական և ֆրանսիական նավերը, որոնք նրանց տեղափոխել են Եգիպտոս: Այս պատմության է նվիրված ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը:

Հարիսայի⁷⁵ հերթը սպանում էր: 90 և ավելի կաթսաները, մաքրամաքուր սրբած, իրար գլուխ էին կիտված: Մի կերպ հաջողացրի երկու պնակ հարիսա հայթայթել: Հարիսա բաժանող սպիտակ խալաթավոր մարդուն ասացի, որ դրանից են կախված հայթուրքական հարաբերությունների ապագան ու սահմանի հարցը: Մարդը կասկածանոված նայեց դեմքիս, բայց ընդառաջեց: Տեսել էր, որ գնացքից իջա: Ով գիտի՝ ստածեց, որ հիմնի էս գնացքով դուզ գնալու ա Վաքըֆը:⁷⁶ Խեղճ մարդ: Հիմա նախկին հայկական ամեն գյուղում նմուշի համար մի հայ է մնացել: Թալեաթ ու Էնվեր փաշաների ոսկորները⁷⁷ գերեզմանում թող մի լավ շարժվեն: Մենք դեռ կանք ու Մուսալեռում քեփ ենք անում:

⁷⁵ Ցորենով ու մտով պատրաստված թանձր կերակուր, որի պատրաստումը երկարատև պրոցես է, քանի որ եփելու ընթացքում ողջ խյուսը շարունակաբար հարվում է մինչև միասեռ զանգվածի ստացումը: Մուսա լեռան գագաթին պաշարված հայերը ունեցել են միայն ցորեն ու գառան միս ու սնվել են միայն հարիսայով: 1976 թ. սկսած, երբ բացվեց Մուսա լեռան հերոսամարտին նվիրված հուշակոթող, յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի երրորդ կիրակին նշվում է Մուսա լեռան օրը, որի ընթացքում մեծաքանակ կաթսաներով հարիսա է եփվում ու բաժանվում ժողովրդին:

⁷⁶ Վաքըֆըն Մուսա լեռան շրջակայքում գտնվող 6 գյուղերից մեկն էր, որի բնակիչները բարձրացան լեռան գագաթը: Գյուղն ընդգրկված էր ֆրանսիացիների մանդատի ներքո գտնվող Ալեքսանդրատի սանջաքում, որը 1939 թ. ֆրանսիացիները հանձնեցին Թուրքիային: Համարվում է Թուրքիայի միակ հայաբնակ գյուղը՝ մոտ 130 բնակչությամբ:

⁷⁷ Ցեղասպանությունը կազմակերպելու քարոզական խոսքում եղել է մի կարգախոս, համաձայն որի՝ թուրքերը պատրաստվում էին վերացնել հայ ազգին և մեկ հայ թողնել, այն էլ թանգարանի նմուշի համար: Թեպետ այս խոսքի սկզբնաղբյուրը գտնել չի հաջողվում, սակայն այն վերագրվում է Թալեաթ և Էնվեր փաշաներին:

Իզուր պապուս հետս չբերի: Հիմի մի լավ կշփվեր թուրքահայերի հետ: Աշխարհի չորս կողմից մարդ կար. էլ Թուրքիայից, էլ Սիրիայից, էլ Լիբանանից: Ամերիկահայ մի ընտանիքի հանդիպեցի, որ ամեն տարի գալիս էր՝ տոնելու Սուսա լեռան օրը:

Հետո գիշեր էր: Երգ ու պարի տակտից օդը թնդում էր: Հրզնին էլ հայտնվեց: Հետո Լարիսան, Արսենն ու Ֆաբիանը: Լարիսայի աչքերը փայլում էին, որոնց խոնավացած հատակում արտացոլվում էին դրայվից արբած մարդկանց գոռում-գոչյունները: Հրզնին թունդ տպավորվեց: Հատկապես պարերից, որոնց մեղեդին ու շարժումները բխում էին ուղիղ նրա սրտի կենտրոնից: Մթնոլորտը, երաժշտությունից բացի, հագեցած էր հաղթական տրամադրությամբ, հայ-թուրքական հարաբերություններով, մանկական խիճուկ ու ծիծաղով ու հնարավոր է, այլ բաներով ևս: Սուսալեռան հուշարձանի կամարից՝ գիշերային խարույկի բոցով լուսավորված, երևում էր սիգապանձ Արարատի ձյունոտ գագաթը:

Այսօր փետրվարի վերջին օրն է: 2016 թ. փետրվարի 29–ը: Ես նստած եմ աշխատասենյակիս լուսամտի գոգին, իսկ մտքով թթանոցում եմ:

Թթենիների վրա երեխաներ են թառած, որոնք ապրում էին Սովետական Հայաստանում ու, ըստ այդմ, աշխարհի ամենաերջանիկ երեխաներն էին:⁷⁹ Երանք բթի հաստության ու երկարության սև թուփ էին ուտում ու չգիտեին, որ թթենիների տակ նիքիում են իրենց նախնիների ոսկորները: Այն նախնիների, որոնց մասին տարրական դասարանի ուսուցիչը, ցուցափայտը զգուշորեն սահեցնելով քարտեզի վրա, կասի. «Յեղասպանությունից հետո մեզ մնացել էր այս կտորը, որից այս կտորը մենք տվեցինք եղբայրական Ադրբե–

⁷⁸ Էջմիածնի Չարենցի թաղամասը, որտեղ գտնվում են տանկային զորամասն ու հարակից Ներսիսյան անտառը, ժողովրդի շրջանում կոչվում է Բոին, որը սերում է ռուսերեն «Бойня», բառից, որովհետև մինչև թաղամասի հիմնումը այդ տարածքն օգտագործվել է որպես սպանդանոց:

⁷⁹ Ըստ խորհրդային քարոզչության՝ աշխարհի ամենալավ ու երջանիկ տեղը խորհրդային Միությանն էր, ու ըստ այդմ՝ այնտեղ ապրող մարդիկ՝ աշխարհի ամենաերջանիկ մարդիկ:

ջանին, իսկ այս կտորը՝ եղբայրական Վրաստանին»։ Քո հետաքրքրասեր գլխում կծագի միտքը, թե ինչու եղբայրական Սդրբեջանն ու Վրաստանը ոչինչ չտվեցին եղբայրական Հայաստանին, սակայն ուսուցչուհին արագորեն կնոտենա քեզ ու երկու մատներով վախվորած կճմրթի պստիկ շուրթերդ ու կսաստի, որպեսզի այլևս նման հարցեր չտաս։ Սյլն, այլն։ Սյլն չտաս նման հարց։ Քո հետ բացատրական աշխատանքներ չեն տարվի, սակայն դա կլինի անարդարության հետք առաջին հանդիպումը։ Տարիներ հետո դու կհասկանաս, որ արդարությունը խախտում են հենց արդարության խոսնակները։ Նրանք, որոնք խոսում են ժողովրդավարությունից և հարակից արժեքներից։ Ճիշտ այնպես, ինչպես բարձրաստիճան կղերականները՝ Սստված պապիկից։ Սակայն մինչև դա կպատահի, դու դասերից հետո անմիջապես կմոռանաս այդ մասին, որպեսզի ընկերներիդ հետ վազես այն տանկերի հետևից, որոնք անցնում էին քո տան մոտով և գնում ուղիղ թթանոցի կողքին գտնվող տանկային զորամաս։

Солдат, значку давай, значку давай! Солдат!!

*... Солдат!!*⁸⁰

Կգոռաս ինացածդ մեկ-երկու ռուսերեն բառերը, որ սովորել ես քեզից մի երկու տարի մեծ ընկերներից։ Տանկի գլխին բազմած ռուս զինվորները կժպտան հայկական արեգակից շլացած աչքերի տակից ու եր-

⁸⁰ Զինվոր, կրծքանշան տուր, կրծքանշան տուր, զինվոր... զինվոր։

բեմն կարմիր աստղը դռշին խփած Լենին պապիկի պատկերով մի երկու նշան կշարտեն:

Տանկային զորամասի, դպրոցի, թթանոցի ու ձեր շենքի արանքում տասը բուպեի ոտքի ճանապարհ է: Տանկերը գալիս էին հենց այդ փողոցով, որը մենք անվանում էինք դպրոցի ճանապարհ, ու թրթուրներով քանդում էին նոր ասֆալտը, որպեսզի նորից ասֆալտվեր: Մնահայտ հարկատուների հաշվին, որոնցով սնվող ամենամեծ գանձատունը գտնվում էր Մոսկվայում:

Солдат, значку давай, значку давай! Солдат!!
... Солдат!!

Կլեսս այդ ձայնը տարիների հեռվից ու Փրնարի հետ կգնաս Երեսիսյան անտառ, որպեսզի գտնես թթանոցը: Մնտառն ու թթանոցը գտնվում են միևնույն տեղում, սակայն դրանք նույնը չեն: Թթենիների վրա բթի հաստության ու երկարության սև թուփ էր աճում, որ հիմա չկա: Համեմատությունը պատկանում էր իմ ընկերուհի Վարդուհուն: Սշխարհը չափելու նրա միավորն իր բուփ մասն էր:

Դպրոցականի աչքերին աշխարհի չափ մեծ թվացող թթանոցը փոքրացել ու դարձել էր մի բուռ ճնրթված անտառ: Թթանոցը չկար: Ծառերը կտրվեցին 1990 – ականների սկզբներին, երբ սուփն ու ցուրտը պատել էին երիտասարդ ու շրջափակված Հայաստանի մարմինը: Տանկային զորամասը հիմա էլ կա, տանկերը՝ չգիտեն: Թթենիների տեղում ինչ–որ դեկորատիվ ծառեր են: Ստում են՝ տարիներ առաջ այստեղ ծառատունկ է եղել, սակայն այլևս չկային սովետի երկար փո-

ղերը, որոնցով կոնունիզմի առաջնորդները սնարդկանց շրջափակել էին երկայթյա վարագույրի ներսում ու այնտեղ քիչ թե շատ հարսնարավետ պայմաններ ստեղծել պլեբսի համար: Թթանցում կյանքը հոսում էր ինչպես Հովիվուդում: Մյստեղ տոն օրերին կարուսելի հերթը սնարդ էր սպանում, իսկ շաբաթ-կիրակի ծփում էր երեխաների հոսքն, ու անհոգ ծիծաղի ձայնը հասնում էր մինչև Մոսկվա: Երեխաները զվարճանում էին: Սովից ու տիֆից նահացած մեռելներին թաքցրած հողի վրա: Իսկ մեռելները շատ էին: Մյնքան, որ ուղղակի սեժ փոսեր են փորվել ու այդպես սնարդկանց լցրել մեջը: Երանց դիակներն առատորեն սփռված էին այնտեղ, որտեղ դրանից տասնյակ տարիներ անց մենք բթի երկարության ու հաստության սև թույթ էինք ուտում: Ու ոչինչ չէինք ստածում: Մեր փոխարեն մտածված էր: Մյն տանկերի ներկայությամբ, որոնց հետևից վազում էինք մեր բակից մինչև դպրոց:

*Солдат, значку давай, значку давай! Солдат!!
... Солдат!!*

Մենք կոխարճում էինք այն հողը, որտեղ հազարավոր գաղթականներ էին թաղված: Մնանուն-անգերեզման հայ գաղթականներ: Որոնք, Սրևնտյան Հայաստանից վաճառվելով, իրենց սահը գտան Եերսես Սշտարակեցի⁸¹ կաթողիկոսի անունը կրող արհեստական անտառում: Գաղթականները շատ էին ու հիվանդ: Հայաստանն էլ աղքատ էր ու անորոշ ճակատագրով:

⁸¹ Ամենայն Հայոց կաթողիկոս, գահակալել է 1843-1857 թթ.: Էջմիածնի անտառը հիմնել է 1847 թ.:

Ձմեռը հանելու համար գաղթականները կտրեցին անտառը: Վասնզի իջևանել էին բաց երկնքի տակ: Չար լեզուները սովետի փլվելուց հետո ասում էին, որ թթենիները տնկել էին դիակների հետքերը կոծկելու համար: Կղերականներն այդ փաստը չեն հերքում: Սակայն ասում են, որ անտառի տարածքն ավելի մեծ էր, ու մեռած գաղթականների անգերեզման դիակներով լի փոսերը բուն թթանոցից քիչ այն կողմ են, որտեղ հիմա գիտահետազոտական ինստիտուտ է կանգնած: Սակայն պատմությունը գրում են արդարության խոսնակների կանակատարները: Ու ամեն ինչ սրբագրվում է: Մարդիկ ավելի հակված են հավատալու մեյնսթրիմին, քան իրենց սեփական հիշողություններին: Եղբայրս, օրինակ, արդեն չի հիշում, որ անտառի տարածքում կարուսելներ կային: Իսկ նա ինձանից 7 տարով մեծ է ու նույնիսկ Գյոլում⁸² լողացել է: Գյոլը անտառի հարամերձ տարածքում գտնվող հսկայական արհեստական լիճ է, մեծությամբ երկրորդը Հայաստանի արհեստական լճերից, որտեղ լողալ էին սովորում Էջմիածնի բոլոր տղաները: Սյն նույնպես կրում է Ներսես Սշտարակեցու անունը, բայց դուք Էջմիածնում չեք գտնի մեկին, որ ձեզ ցույց կտա Ներսիսյան լճի տեղը: Երանք ձեզ կրացատրեն Գյոլի տեղը: Սհավասիկ, ևս մեկ ապացույց մեր համատեղ անցյալ կյանքի:

Փընարը չջանկացավ Գյոլ գնալ: Թեպետ անտառից Գյոլ 5 րոպեի ճանապարհ էր: Ես լանդաֆոտներ էր փնտրում, ու Ներսիսյան անտառը լրացնում էր այդ

⁸² Թուրքերեն göl նշանակում է լիճ:

շարքը: Փրնարն ընկել էր արևի ճառագայթների հետևից, իսկ ես՝ մանկական աղաղակների, որոնցով լի էր այս տարածքը շարաթ–կիրակի, ու որտեղ տարին մի երկու անգամ փառատոն էր կազմակերպվում:

Կարուսելները ևս չկային: Այսինքն՝ կան, բայց նոր են: Որոնք տեղադրել է Մայր Աթոռը՝ իբր այս տարածքին կենդանություն պարգևելու ու Ներսես Սշտարակեցու անունը կրող անտառին հարիր տեսք պարգևելու համար: Սակայն մի անկյունում կուչուռած պատիկ–մատիկ կարուսելները դատարկ էին: Երեխաներ չկային, ու ճնշող անայություն էր: Ես չգտա նաև այն տեղը, որտեղ վրան էր խփել Բեկոյանի⁸³ պարի համոյթը, ու որտեղ մեր պարի խմբով ելույթ ունեցանք ինչ–որ շքերթի օր:

* * *

Մյդպես էլ գիտեի, որ Էջմիածին գալուն պես նոթերիս չեմ հետևելու: Ես չեմ սիրում այն քաղաքը, որտեղ ծնվել ու անբողջ կյանքս ապրել եմ, թեպետ ընդունված է քո քաղաքին սիրո ձոներ նվիրել: Մյդ քաղաքն աշխարհի ամենափակ տարածքն է, որտեղ ոչինչ չի կատարվում: Երբ ես ծնվեցի, այնտեղ արև կար, որը սովետի փլվելուց հետո գավթեցին գեներալներն⁸⁴ ու

⁸³ Խորհրդային տարիներին դպրոցներին կից գործում էին ժամանակակից պարի խմբակներ, որոնցից մեկն էլ Բեկոյանի խմբակն էր: Այդ խմբակը տարին մեկ անգամ ելույթ էր ունենում Ներսիսյան անտառում կազմակերպված համաքաղաքային միջոցառման ժամանակ:

⁸⁴ Էջմիածնում են ապրում Ղարաբաղյան պատերազմում գեներալներ դարձած չորս զինվորականներ, որոնք տիրապետում են մեծ միջոցների ու լայն ազդեցություն ունեն քաղաքում:

կղերականները: Հիմա քաղաքը բաժանված է նրանց միջև, որոնք այնտեղ ապրող մարդկանց վերաբերվում են այնպես, ինչպես համակարգչային խաղեր ստեղծող ծրագրավորողն իր նախագծած քաղաքներում շարժվող ռոբոտներին. նրանք այդ տարածքում պետք են, որպեսզի թագավորն ու նրա թշնամին դրա համար կռվեն: Այնտեղ նույնիսկ ՀԿ-ներ չկան: Եվ միայն հեզոբեն կանգուն են Աստված պապիկի հինգ հնամենի տները,⁸⁵ որոնց երկրպագելու են գալիս աշխարհի բոլոր ծայրերում ապրող հայերը:

Էջմիածին գալուց հետո մեր առանց այդ էլ խառը գրաֆիկն ավելի խառնվեց, ու ոչ մի բանի հետևից հասնել չէր լինում: Տասնօրյա ճանփորդության ընթացքում տասնյակ մանր ու մեծ միջոցառումներ կային՝ գունարած Կարմենի արխիվն ու Բզեզը, որոնց պետք էր հետևել, ու ամեն ինչի հետևից հասնել ու գրել չէր լինում: Շատ բանի մասին չհասցրի գրել: Օրինակ, թե ոնց Գրիգորի հետ հասանք Թուրքիայի սահմանն, ու նա սահմանը նկարեց. փշալարերից այն կողմ Թուրքիան էր, իսկ ավելի ճիշտ՝ նախկին Հայաստանը: Սահմանում լինելու առիթներ էլի եղել էին, սակայն նախկին Հայաստանում չեմ եղել: Պապուս խոստացել էի, որ գնացքով միասին կգնանք Կարս:

Զգրեցի նաև Զարդի և Հրզազի ձորերի մասին, որոնք գտնվում են Գյումրին շրջապատող սարերի

⁸⁵ Էջմիածինն Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրն է և անվանվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Բացի Մայր Տաճարից, Էջմիածնում են գտնվում Սուրբ Գայանե վանքը, Սուրբ Շողակաթ, Սուրբ Հռիփսիմե և Սուրբ Աստվածածին եկեղեցիները:

արանքներում: Սյստեղ 1918–1920 թթ. ընթացքում դարձյալ մասսայական կոտորածներ են եղել: Սոցիալ-կրթական կենտրոնի կամավորները թուրքերին ամեն ինչ պատմում էին: Տարիներ շարունակ մարդիկ խուսափել են այդ կողմերով անցնելուց, որովհետև անձրևների ժամանակ ու ձնհալքից հետո մարդկային ոսկորներ են այն եկել: Իսկ 1965 թ-ից⁸⁶ հետո ձորի դիմացով ձգվող ճանապարհի անկյունում Ցեղասպանության գոհերի հիշատակին հուշակոթող են կանգնեցրել, ու Գյումրվա ժողովուրդն ամեն ապրիլի 24-ին գնացել է այնտեղ: Ասում են՝ այդ օրը ավտոների ու մարդկանց շարքը կիլոմետրեր է ձգվել:

Աճող արխիվի մասին էլ չգրեցի, թեպետ պլանավորել էի հանգամանորեն դրան անդրադառնալ: Հավանաբար, թուրքական մասում կգրեմ, երբ հայելիները կոտրվեն: Հայաստանում դրանք չկոտրվեցին, թեպետ Կարսենը սպասում էր: Որպեսզի Թուրքիայում ցուցադրեր կոտրված պատմություններ: Հայելիները ներդրված էին ճանապարհներից մեկի միջուկում այն դիրքով, որպեսզի դրան նայեն, ինչպես նայում են գերեզմանին: Ու Աճող արխիվի այցելուները նայում էին գերեզմանի դիրքով հայելուն, որի միջից տեսնում էին իրենց: Ու սելֆի էին անում, որը դառնում էր պատմություն, ու Աճող արխիվն այդպես տարածվում էր Ֆեսթրուքով, Թվիթերով մինչև այլուր: Իրականում սելֆիի պահը մտածված չէր: Սակայն

⁸⁶ Ցեղասպանության 50-ամյա տարեդարձին՝ 1965 թ. ապրիլին, Երևանում ցույցեր են եղել, որին հաջորդել է Ցեղասպանության գոհերի հիշատակին հուշակոթող կանգնեցնելու որոշումը: Այն բացվել է 1967 թ.:

այդպես ստացվեց: Աճող արխիվի գաղափարը դա չէր էլ բացառում: Ընդհակառակը: Դու կարող ես ինչոր միտք ունենալ, որ մարդիկ չնկատեն, բայց հաճախ հենց նրանք այնպիսի մտքեր կարող են ծնել, որոնց մասին չի էլ ստաձվել:⁸⁷

Ճամայրուկները, որոնցով հայերը ստիպված էին ճանփորդել աշխարհով մեկ, շատ շքեղ էին: Սաթիսան ու Կարմենը մի լավ չարչարվել էին մինչև ձեռք բերելը: Շքեղ ճամայրուկը պերճանքի ու հարստության մասին ակնարկ է, որի հետևից ընկել էին թուրքերը: Այն նաև ընդգծում է այն հակադրությունը, թե ինչ արժե մարդու կյանքը: Այս ճամայրուկները եղել էին Հոդկաստանում, Ավստրիայում, Բելգիայում, Ամերիկայում, ինչպես հայերը: Դրանցից մեկը գերմանական արտադրության էր, ինչպես տպագրական մեքենան, որով Աճող արխիվի այցելուները տպում էին իրենց պատմությունները. ո՞վ էր թուրքերին գենքեր տվել ու զինել մենեջմենտի այբուբենով. Աճող արխիվը ոտքից գլուխ խորհրդանիշ էր:

Արխիվում կար մեկ հարց. «Մա աճող արխիվի ցուցահանդես է, որ հավաքում է ամեն հնարավոր նյութ, որը կարելի է տեղափոխել Երևանի և Ստամբուլի միջև ընկած տարածքում: Ի՞նչ կարող եք նվիրաբերել դուք այս հավաքագրմանը»: Ու մարդիկ արխիվին տալիս էին իրենց անձնական խորհրդանիշներն ու կիսվում իրենց պատմություններով: Երանք գերմանական արտադրության տպագրական մեքենայով պատմում էին իրենց տատերի ու պապերի պատմությունն այն մասին, թե

⁸⁷ Կարմեն Բեքենբախ, Հարցազրույց, Երևան, սեպտեմբերի 19, 2015:

ինչպես են ունեզրկվել ու իրենց ինչքը թողել Արարատից այն կողմ: Ու Աճող արխիվը հարստանում էր հողային պահանջների սասին պատմություններով:

* * *

Ժողովուրդն Էջմիածնում արդեն հոգնած էր, ու հագիվհագ էին իրար գլխի հավաքվում: Իսկ թանգարաններում գիդին գրեթե ոչ ոք չէր լսում: Օրինակ, երբ Գանձատան⁸⁸ սիրունատես գիդը գերազանց անգլերենով պատմում էր, որ Գանձատուն այցելող սակավաթիվ թուրքական խմբերից չափազանց բացասական արձագանք են ստանում, նրան լսող չկար: Սյդ սասին պարզ դարձավ, երբ հանկարծակի գլխի ընկա, որ թուրքական վայրագությունների սասին գրեթե ոչինչ չի պատմում: Պարզվեց, որ սրանից որոշ ժամանակ առաջ սնտ 50–հոգանոց թուրքական խումբ է եկել, որոնք հենց շենի վրա Ցեղասպանամերձ մի քանի նախադատություն լսելուց հետո անմիջապես լքել են թանգարանը՝ ասելով, թե իրենք եկել են երկխոսության, իսկ հայերը նրանց երեսին են զարկում մի բան, որը դեռ պիտի պարզվի: Սյդ դեպքից հետո տնօրինությունը գիդերին

⁸⁸ Բարերարներ Ալեք և Մարի Մանուկյանների անունը կրող Գանձատունը բացվել է 1982 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի նախաձեռնությամբ: Գանձատանը պահվում են հայ հոգևոր մշակութային գեղարվեստական ստեղծագործություններ՝ սուրբ մասունքների պահարաններ, ձեռագիր մատյաններ, եկեղեցական սպասքի, նվիրական առարկաների ու հոգևորականների զգեստների հավաքածուներ, որոնք բերվել են Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև հայկական տարբեր գաղթավայրերից:

խնդրել է թուրքական խմբերին պատմել միայն այս կամ այն մասունքի պատմությունը: Սիրելի՛ գիդուհի: Խնդրում ենք՝ մեր խմբին պատմեք այն, ինչ եղել է: Շատ լավ: Պատմված է: Ափսոս, որ նրան լսում էին ընդամենը երեք հոգի, երեքն էլ՝ թուրքական կողմից:

Սյդպես չեղավ սակայն, Յեղասպանության թանգարանում, որը մեր տասնօրյա այցելության ընթացքում այն եզակի դեպքերից էր, երբ բոլոր մասնակիցները միասին էին: Ավելին: Բոլորը լսում և ցանկանում էին լսել այն, ինչ պատմում էր գիդը: Գեղեցկությանը և անգլերենի իմացության մակարդակով Գանձատան գիդուհուն չգիջող գիդուհուն հենց շեմի վրայից խնդրեցի, որ մեր խմբին ամեն ինչ պատմի: Ու պատմում էր: Բոլորը մեկ մարդու պես հետևում էին նրան ու փախցնում գիդի ամեն մի բառը: Հըզնիի հայացքը մի տեսարանի վրա անշարժացել էր: Երբ զինված հրոսակները հարձակվել էին կանանց ու երեխաների խմբի վրա ու ֆուտբոլի գնդակի պես տշում էին մի կողմից մյուսը: Հետո գնացինք հուշակոթողի մոտ ու ծաղիկներ դրեցինք զոհերի հիշատակին: Այնտեղ Լարիսան էլ արտասովեց: Ու ոչ միայն նա:

* * *

Վերջին օրը Ոլլրիկեն մի վերջին անգամ որոշեց մեզ ռեֆլեքսել, սակայն գրեթե ոչ ոք չխոսեց: Բոլոր խոսքերն ասվել, ու արցունքները թափվել էին: Լուսինեն, աչքի առաջ ունենալով ռեֆլեքսիայից առաջ բաժանված Բզեզի թարմ համարներն ու դրա նկատմամբ

հայկական խմբում գոյացած ակնհայտ բացասական վերաբերմունքը, երկու անգամ բացահայտ ակնարկեց, որ սարդիկ խոսեն սթրեսների ու հարակից բացասական զգացողությունների մասին, բայց ոչ որ ձայն չհանեց: Սակայն, երբ ռեֆլեքսիան համարվեց փակված, Բզեզի աշխատանքից դժգոհ հայկական թիմը հարձակվեց Լուսինեի վրա: Բառի ուղիղ և այլ իմաստներով: Նրան անվանեցին խաբեքա, մեղադրեցին այլ ծանրագույն հանցանքների մեջ ու սկսեցին կտոր–կտոր անել: Նազարեթը,⁸⁹ որ այդ ժամանակ զբաղված էր Լուսինեի կտորները միմյանց կպցնելով, հասկանալով, որ եթե սենց շարունակվի, Լուսինեից բան չի մնա, միջամտեց:

Ֆաբիանն այդ ընթացքում նստած էր կողքի դիվանին ու շառագունած հայացքով փորձում էր մի բան հասկանալ հայերեն գոռգոռոցներից: Մի բան, սակայն, ակնհայտ էր: Հայկական թիմի մի սովոր հատվածի Բզեզն այդպես էլ դուր չեկավ: Չսիրեցին նրանք քեզ, բարեկանս: Մի հատված, սակայն, շատ լոյալ էր, ու նույնիսկ հավանողներ էլ կային: Սակայն նրանք քիչ էին: Թուրքական կողմը Բզեզի մասին չարտահայտվեց:

Բզեզը, սակայն, շատ էլ լավ էր ստացվել: Համենայն դեպս ինձ շատ դուր եկավ: Հատկապես այն պահը, որ շատ տարբեր էր լուսանկարի ու տեքստի նկատ–

⁸⁹ Նազարեթ Նազարեթյան, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի Բոննի գրասենյակի ֆոնդահայայթման ավագ մենեջեր: Հայաստանում էր ամփոփելու ծրագրի հայկական հատվածը:

մամբ այն սնտեցումից, որին մեյնսթրիմը սովոր է: Այսինքն՝ բովանդակություն, խմբագրի խոսք և այլն: Բզեզում ոչ մի նման բան չկար: Էջերով լուսանկարներ էին՝ փոքրիկ մեկնաբանություններով կամ առանց, հետո՝ մերկ տեքստ, կամ տեքստ՝ լուսանկարով, կամ տեքստ՝ Լարիսայի ձևավորումներով և այլն: Մի խոսքով տրանսպորտ, ժամանակակից անսագիր էր: Պարզվեց՝ Բզեզը Թիթեռնիկ էր:

* * *

Վերջում բոլորով գնացինք Փարաջանովի⁹⁰ թանգարան, որից հետո թուրքերը մեկնելու էին: Ես խստորեն հետևեցի Փարաջանովի կենսագրության տարբեր կետերին, ու երբ գիղը հասավ այն մասին, որ սովետական իշխանությունները Փարաջանովին դատել էին նույնասեռական կապի համար, հանգիստ շունչ քաշեցի: Ցենզուրայից ցխկվում եմ:

⁹⁰ Սերգեյ Հովսեփի Փարաջանյան, խորհրդահայ կինոռեժիսոր: Փարաջանովի նկարահանած «Մոռացված նախնիների սովերները» (1964 թ.) և «Նռան գույնը» (1968 թ.) ֆիլմերն ընդգրկված են Հարվարդի համալսարանի կինոգիտության ծրագրում ներառված համաշխարհային կինոյի լավագույն 800 նմուշների ցանկում՝ խորհրդային արտադրության 20 ֆիլմերի շարքում: Կինոյի նկատմամբ ունեցած պաշտոնականից տարբերվող մոտեցման պատճառով Փարաջանովը լարված հարաբերություններ է ունեցել իշխանությունների հետ և երկու անգամ ազատագրկվել է: Երկրորդ անգամ՝ 1973 թ., նույնասեռական կապ ունենալու մեղադրանքով, որը խորհրդային Միությունում համարվում էր քրեական հանցանք: Փարաջանովի նույնասեռական լինելը միանշանակ չի ընկալվում հայկական մեյնսթրիմում:

Հրաժեշտի սրտառույզ բաժանումը տեղի ունեցավ թանգարանի բակում: Սրդեն պատրաստվում էի հեռանալ, երբ նկատեցի, որ Էքինն ու Սիբելը չկան: Այքեզ խաթա: Հայ-հայ էր՝ շուխուր էի դնելու, մեկ էլ հեռվից հեռու տեսնում եմ վազող Էքինին: Պապո: Պապո: Հևիհև վազելուց շունչը չի կարում տեղը բերի: Ի՞նչ ա եղել պապու: Պապո: Պապո: Էքինի կուրծքը հուզնունքից վերուվար էր անում: Չաուշը պապուդ մորթում ա: Ժպտում եմ: Էքին ջան, չաուշը պապուս չի մորթելու, եթե մորթած լիներ, ես չէի ծնվի: Վագոնետկայով⁹² հասել եմ: Ի՞նչ: Փաստորեն երկու ժամվա ընթացքում Էքինն արդեն ծուսերեն բառ ա սովորել: Այքեզ բան: Բա Սիբելն ո՞ր ա: Սիբելին թողել եմ է՛ստեղ, որ գանգենք՝ տեղը բացատրի: Դե լավ, ուրեմն գնանք Սիբելին բերենք, թե չէ ինքնաթիռից ուշանալու եք:

⁹¹ Հղում հայ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի համանուն բանաստեղծությանը:

⁹² Երկաթուղային ինքնաշարժ սայլակ, որը հարմարեցված էր երկաթուղային գծերին՝ սպասարկելու այս կամ այն կարիքը:

պու-ու-ու-չոք-չոք-չոք-չոք-չոք-չոք

Հեռվից լսվում է գնացքի շչակը, ու միասին թռնում ենք ռելսերի վրա: Վագոնավարը հեռվից գոռում ա, որ դուրս գանք ռելսերի արանքներից, բայց մենք չենք լսում: Նրա աչքերը սարսափից լայնանում են, իսկ ես գրիչս դեմ եմ տալիս անիվներին, ու գնացքը կանգնում է ուղիղ մեր քթի դիմաց: Վագոնավարը, կապ ընկած լեզվով, փորձում է մի բան ասել, իսկ իմ քունքն էլ չի շարժվում: Բշի: Ասում են: Դուզ Կարսի մատույցներ:

Հասնում ենք էն պահին, երբ թուրք չաուշը, խզակոթը դեմ տված պապուս վզին, պահանջում ա, որ մնացած հայերի տեղն էլ ասի: Վաղորդյան հովեկից օրորվող եղեգների արանքներից երևում են կիսաուշագնաց ընկած Սիբելի դեղին գանգուրները: Իսկ եղեգների դիմաց թավ անտառ է, որից հետո արդեն Կարսն էր:

Պապս փաստորեն մարագից փախել էր: Երեք ընկերների հետ: Նրանց անհետացումը նկատվել էր վաղ առավոտյան, ու չաուշը թունդ կատաղած, որ Հարութիկը փաստորեն իրեն խաբել է, նստել էր վագոնետկա ու հայրե պապուս հետևից:

Պապս բանակցում էր: Եթե իրեն բաց թողնեն, կգնա անտառ, մնացած ընկերներին էլ կհավաքի, ու չորսով կներկայանան: Նրանք օսմանցու տված հացը չեն ուրանա: Ագնիվ խոսք: Բայց չաուշի զինակիցները նրան համոզում են, որ պապուս տեղում ուղարկի Ալլահ պապիկի մոտ՝ անժամկետ ու անհատույց ծառայության: Չաուշը չի համաձայնում: Կատաղած ա, որ

քթի տակից հայեր են փախել, ուզում ա՛ր թուրին բռնի: Աչքերից կայծեր են թափվում: Թուրքերեն քֆուրներ ա տալիս, որից էքինի աչքերը թռնում են ճակատին: Ինձ էլ առաջարկում ա, որ ականջներս փակեն: Բայց ես, մեկ ա, էդքան լավ թուրքերեն չեմ հասկանում: Վերջը չաուշը պապուս բաց ա թողնում, ու երեք հոգով հետևից նշան բռնած՝ կանգնում են: Պապս թուրքերենով տղերքին ձեն ա տալիս: Տղերք, դո՛ւրս եկեք: Թուրքերը լավն են ու մեզ փիս-փիս բաներ չեն անի: Տղերքը տեղներից չեն շարժվում: Ակներևաբար, աչքի առաջ ունենալով Կարսի սառնամանիքին՝ ոչլակույտով լի մարագում մերկանդամ անցկացրած ամիսները: Տենց տղերքին ձեն տալով՝ պապս հասնում ա անտառի ծերն ու ոտքը ներս գցելով՝ լեզուն փոխում ա հայերենի: Տղերք, ես փախա, դամիճներից դուրս չգաք: Ու փախնում ա: Չաուշը ստեղ հասկանում ա, որ Հարութիկը հալալուց իրա ձեռքից փախավ, ու կարգադրում ա, որ դամիճները կրակի տան, բայց ստեղ ես գրիչս դնում եմ ձեռքին: Դու ո՛վ ես: Չաուշը չէր սպասում: Չէին սպասում շարքից: Դամիճները կրակի չես տալու: Էս պատմության մեջ ես կրակի եմ տալու դամիճները, բոլոր հայերին բռնելու ու հատիկ-հատիկ ոչնչացնելու եմ: Չաուշի պիպիկները կատաղությունից փոքրացել էին, ու աչքերի տեղում մենակ սպիտակուցներն էին երևում: Չլինի սա ստեղ կատաղախտ կանի: Չաու՛շ ջան, դու ինձ ճիշտ հասկացի, ես քո վատը չեմ ուզում, արի կրկնի դու քո ճամփով էթաս, մենք՝ մեր: Դամիճները վառելու եմ: Վառելու ու խանձելու եմ: Էս գավազանով

հայերին գանահարելու են: Բայց լավ ա, որ թուրքերեն քիչ ու միչ գիտեն, գոնե հասկանում են: Էքի՛ն: Էս ո՛ր կորար: Էքինը չկար: Օրագրիս էջերը թերթելով՝ իրա համար նոր էջ էր բացել, որտեղ գնացքի կուպեում պապս ուշքի էր բերում Սիբելին, ինքն էլ, նստած լուսանուտի կողքին, կտկտալով գրի էր առնում պատմությունը: Բա ես հիմի ի՛նչ անեմ էս չաուշի հետ: Ղանիշները... Հւււ, հասկացանք: Ղանիշները վառելու են: Արդեն ձանձրացնում ես, բայց: Վառել, թափելու են... Իյա, իրո՛ք: Ղանիշները... հայերը... Լավ, արդեն վերջացնելու ժամանակն ա:

Ու ուզում են շրջել օրագրիս էջը, որի նոր պարբերությունից լսվում էր գնացքի շչակն, ու վագոնավարի տեղում նստած Ավետիսը⁹³ ավետում էր՝ **հաջորդ կայարանը՝ Կարս:**

Բայց մինչև դա կանեի, հասկանում են, որ չաուշի հարցը սենց առկախված թողնելը ճիշտ չէ, ու լուծում էր պետք գտնել: Ու հենց էդտեղ՝ Կարսի սատույցներում, նստում են ղանիշների մեջ ու միտք անում: Չաուշը շարունակում էր հոխորտալ: Թող հոխորտա: Էս տեքատում ես եմ ասողը: Ու հիշում են հայոց պատմության դասերն ու մեր բոլոր պատմավեպերը, որոնց առանցքում հայ ազգի առաքինությունն է: Հիշում են, որ դա ինձ միշտ ներվայնացնում էր: Ես կասեի՝ նեմվայնացնում էր: Որովհետև առաքինությունից խոսում են միայն նրանք, որոնք ուրիշ ճար չունեն: Նրանք, ովքեր ունեն, անում են, ինչ

⁹³ Ավետիս անունը նշանակում է բարի, ուրախալի լուր:

իրենց պետք է, հետո էլ առաքինության մասին թրե-
նինգներ կազմակերպում: Ու մտածում են, որ թշնա-
մուն բաց թողնելն ամսվազն ախմախություն է: Ո՞նց
կվարվեր չաուշն իմ հետ, եթե իմ տեղում լիներ: Ու ին-
չո՞ պետք է նրան խնայելի: Որովհետև ինձ սովորեց-
րել են, որ պետք է վեհանձն լինե՞լ: Տխմար միտք: Կղե-
րականության հոտը կիլոմետրերից զգացվեց: Ու նո-
րից հիշում են էներգիայի պարկերը, որ վատնել ու
շարունակում են վատնել իմ նախնիների առաքինու-
թյան հետ անմիջական կապ ունեցող հայաստանյան
ներկա իրականության հետ բախվելիս, որը հաստա-
տուն քայլերով տանում է միջնադար, ու արյունը
գլխովս է տալիս: Ու մտածում են, որ չաուշին պետք է
սպանել: Ոչ թե նրա համար, որ թուրք է: Այլ, որովհետև
շահին սորթում են, կամ շահն է սորթում: Նաև, որով-
հետև իմ ազգի պատմությունում նրան կիմայելին:
Որպեսզի թիկունքից հարվածի: Ու կհարվածեր: Ու
հարվածել է: Պատմությունը միտում ունի կրկնվելու,
ու կարկուտը ծեծած տեղն է ծեծում: Իսկ ես սիրում եմ
փոփոխությունները: Ու չաուշին սպանում են: Ոչ
մի էնոցիա: Ջուտ շահերի բախում: Հետո մենք կազանք
քո անժամանակ մահն ու ծաղիկներ կոխենք քո անա-
նուն գերեզմանին:

ՄԱՍ Բ

Անցյալի ուրվականները

Ի՞նչ դու զգացիր, երբ կարդացիր նրա անունը Տրապիզոնի ջարդերի պատասխանատուների ցանկում: Անոթի ու զայրույթի մի գորեղ ալիք, որ քեզ լացացնելու էր Աֆրիկյանների պանդոկում:¹ Յեղասպանուհին ոչինչ չգիտեր Տրապիզոնի² ջարդերի մասին: Միայն տատի պատմածը, որը Տրապիզոնից փախել էր, որովհետև հայերը նրանց կոտորում էին: Մյուսիսի պատմություն:

Կներես, որ քեզ անվանելու են Յեղասպանուհի: Հասկանում են, որ դուրդ չի գա: Սակայն հայոց լեզուն ինչքան էլ որ հարուստ է, չունի մեկ բառ, որով կկարողանայի հղվել Յեղասպանության գործում լուրջ ներդրում ունեցած մի մեկի թոճնուհուն: Հո՛ ամեն անգամ չեն կարող գրել Յեղասպանության կազմակեր-

¹ Ռեստորան Երևանում, կրում է Երևանի հին տոհմերից մեկի անունը: https://www.armenianow.com/hy/features/8008/history_captured_genealogy_service

² Նահանգ ժամանակակից Թուրքիայի հյուսիս-արևելյան հատվածում: Ըստ որոշ աղբյուրների՝ 1912 թ. նահանգում եղել է 100.000 հայ բնակիչ, սակայն Յեղասպանությունից հետո փրկվել է միայն 15 հազարը:

պիչ սնարդու թռնուռիին: Ու չեն ուզում ինչ–որ անուն հորինել: Նախասիրության հարց է: Գերմանացիներն անցանկալի տարրերից ավելի ակուռատնի էին ազատվում, քան թուրքերը: Հոլոքոստից անմիջապես հետո գերմանացիները կասեն, որ գերեվարված հրեաները սպանվել են սնարդկային ձևով, որովհետև գազով թունավորվելիս չեն տառապել: Դա է պատճառը, որ Գազ սնականունով հայտնի Հեյնզ Գերհարդը, որի գործը գազի լծակը սեղմելն էր, կարդարացվի:³

Ես չեմ սիրում սնարդկանց կեղծ անուններ տալ: Ավելի լավ է փոխարինող բառ գործածել: Ու ինչպես նոր ձևավորվող Թուրքիան, այնպես էլ տեքստը որոշակի վերաբերմունք է պահանջում իր սնա կազմող անդամներից, ու որոշ բառեր պետք է դուրս մնան: Ինչպես նրանք, որոնք դուրս մնացին Օսմանյան կայսրությունից հետո ձևավորված Թուրքիայից: Ու սնարդիկ էին պետք, որոնք կանդամահատեին այդ տարածքի հետ անքակտելիորեն կապված մի սովորական գանգվածի ու տեղը կտային քրդերին՝ հույսով, որ հրնթացս նրանք էլ կթրքանան:

Ու նա ալբանական ծագմանը Բալկաններից միգրացված գաղթական էր: Ինձ՝ սնարգինալ, որն

³ Հեյնզ Գերհարդը մեկուսացման ճամբարներից մեկում կատարում էր գազի լծակը սեղմելու պարտականությունը: Գերմանիայում դատավարություններ սկսելուց հետո նրան չեն դատել այն պատճառով, որ նա հրաման կատարող էր, մինչդեռ նրա ղեկավար Հերբերթ Փոլանդին 1977 թ. ցմահ դատապարտել են, ու նա մահացել է բանտում: Հոլման աղքյուրը՝ Էրի Նադլեր, սոցիալ հոգեբանության պրոֆեսոր Թեյ Ավիլի համալսարանում. 2015 թ. Բուդապեշտում՝ Թոմ Լանթոշի անվան ինստիտուտի կողմից կազմակերպված՝ Ցեղասպանությունների նվիրված ամառային դպրոցի խոսնակներից մեկը:

ուզում էր հայտնվել մեյնսթրիմում: Դու ասում ես, որ ուզում ես հետազոտել զայրոյթի պատճառը, որ զգացիր նրա նկատմամբ, երբ այդ բանն իմացար: Չէ՞ որ նա էլ զաղթական էր: Սյսինքն՝ դժվար կյանք էր ունեցել: Ո՞րն էր արյան մեջ թաթախվելու նրա մոտիվացիան:

Գերմանացի էսէսական սպաներն իրենց ընտանիքներով ապրում էին համակենտրոնացման ճամբարների կողքին, ու այսօր գերմանացիները, այդ փաստն իմանալով, շատ են նեղվում: Մոտավորապես այնքան, ինչքան դու, երբ իմացար, որ պապդ ուղիղ ու գործուն կապ է ունեցել Ցեղասպանության կազմակերպմանը: Բայց նեղված գերմանացիները չգիտեին, որ էսէսականները չէին կարծում, թե վատ բան էին անում: Ընդհակառակը, նրանք զբաղված էին շատ ճիշտ ու կարևոր գործով: Ինչպես քո պապը, որ ճանապարհ էր հարթում այն բանի համար, որպեսզի այսօր դու լինես այնտեղ, որտեղ գտնվում ես: Օձված՝ նրբանուրբ օձանելիքի բույրով ու հագնված՝ կուտորիենների վերջին պիսկը Ստամբուլ բերող բուտիկներում: Ազգային շահի տեսանկյունից նախճիրը կարող է դիտվել որպես գերազույն արժեք: Գերմանացիները հավատում էին Հիտլերին, թուրքերը՝ Սթաթուրքին:

Ու ամեն ինչ մի տեղից է սկսվում: Օրինակ, երբ թուրքերը գնում են այլ երկրներ սովորելու ու հանդիպում են հայերի: Իսկ նրանք ամենուր են: Կարծում եմ՝ գիտես պատճառը: Արդեն:

Եվ ուրեմն քեզ Թուրքիայի մասին բաներ ասացին, որ դու չգիտեիր: Ու նույնիսկ այդ ժամանակ էլ մեծ նշանակություն չտվեցիր հայերի ասածներին: Ու չէիր մասնակցում Ստամբուլում կազմակերպվող ապրիլի 24-ի երթին, թեպետ արդեն մտածում էիր, որ հավանաբար Յեղասպանություն է եղել: 2014 թ., անշուշտ, գոջում էիր: Երբ եկար Էջմիածին ու իմ տան գրադարակում տեսնելով Տրապիզոնի ջարդերին վերաբերող մի գիրք՝ բացեցիր ու նայեցիր ջարդերի պատասխանատուների ցանկը:

Ինձ Ստամբուլից գրեցին, որ թուրքերի մի խումբ Հայաստանում է, ու նրանք գալիս են Էջմիածին: Երանց հրավիրեցի իմ տուն՝ մի բաժակ սուրճ խմելու, ու գնացի Մայր Աթոռ, որտեղ նրանք լսում էին կիրակնօրյա պատարագը: Մյնտեղից ոտքով եկանք իմ տուն, որն անցնում է հրապարակի սրտում գտնվող Կոմիտասի⁴ արձանի կողքով:

Յեղասպանուհին հենց իմ տանից էլ մի ֆոտո էր ուղարկել մորը: Ես էլ խորհուրդ էր տվել այլ աղբյուրներ գտնել: Ու Յեղասպանուհին այլ աղբյուրներ փնտրեց, որոնք հաստատում էին Տրապիզոնի ջարդերի գոյությունն ու էլի այլ բաներ: Ու նա սկսեց հե-

⁴ Սողոմոն Սողոմոնյան (1869–1935), հայ երգահան, վարդապետ, համարվում է ժամանակակից հայկական դասական երաժշտության հիմնադիրը, եղել է 1915 թ. ապրիլի 24-ին ձերբակալված մտավորականների շարքում և աքսորվել է Չանքըր, սակայն եվրոպական և ամերիկյան դեսպանների միջնորդությամբ ազատ է արձակվել: Սակայն դրանից հետո նրա գիտակցությունը մթազնել է, ու Կոմիտասը խելագարվել է: Բուժվել է Փարիզի հոգեբուժարաններից մեկում, սակայն ապարդյուն:

տագոտել պատմությունը: Այն պատմությունը, որը չէր սովորել ո՛չ դպրոցում, ո՛չ էլ քոլեջում: Ու հայտնաբերեց, որ մյուս պապն էլ սուլթան Համիդի կառավարությունում եղել է Անատոլիայի կառավարիչ: Շատ էֆեկտիվ կառավարիչ՝ 1894–96 թթ. համիդյան ջարդերի կազմակերպման գծով: Այդ մասին նա կարդաց մի ազգայնական կայքում, որտեղ գովեստի շքահանդեաներ էին կազմակերպված պապու հասցեին:

Ին տանը նրան չէի նկատել: Խումբը մեծ էր՝ մոտ 15 հոգի, ու մի մասը նստոտեց հատակին, որովհետև այդքան աթոռ չկար: Բայց այդ նա էր, որ Աֆրիկյանների պանդոկում արտասվում էր: Դրանից մոտ մի կես տարի հետո, երբ Ստամբուլում ուսումնասիրում էի հայ միգրանտների պերճանքն ու թշվառությունները, հետն էլ՝ հայ-թուրքական պատմություններ պեղում, դեմ առա ցեղասպանների թոռների դեպքերի, ու նրա կերպարը նույնականացավ:

Նա վաղ առավոտյան ծեծեց Նիշանթաշի պերճաշուք շենքերից մեկի առաջին հարկում ծվարած նեղլիկ բնակարանի դուռը, որը Զեյնեք արլան մեծահոգաբար մեկ ամսով գիջել էր ինձ, ու մենք մի թեթև խոսեցինք: Ժամանակակից գրողները կանգնած են մեծագույն մարտահրավերի առջև: Գրել, թե չգրել: Սի հնար ասեք: Սսվեց: Ցեղասպանուհու պատմությունը պատմեցի մի գերմանացի լեփսիուսագետի⁵ ու գրառեցի նրա դիտարկումները, որոնք մեկ առ մեկ թվարկում են այստեղ: Հենց նա էլ առաջարկեց գործածել Ցեղասպանուհի եզրը՝ պատճառաբանելով, որ իրերը պետք է իրենց անուններով կոչել:

⁵ Յոհաննես Լեփսիուս (1858-1926), գերմանացի հասարակական գործիչ, հոգևորական, արևելագետ, մարդասեր, հայտնի է Ցեղասպանության տարիներին հայափրկիչ և մարդասիրական գործունեությամբ: Նրա տունը Պոտսդամ քաղաքում վերածվել է հայագիտական կենտրոնի:

Քո Լեփսիուսագերին ասա, որ եթե իրենք այդքան ճիշտ են, ինչո՞ւ իր պետությունը չի ընդունում Ցեղասպանություն լինելու փաստը:⁶

Ասված է: Բայց յուրաքանչյուր ոք կրում է իր պատասխանատվությունը:

Իսկ Ցեղասպանուհու դեմքն անթափանց էր, սակայն նրա խոսքերից կաթում էր ափսոսանքը, որ հրաժեշտ է տվել այլևս նախկին անհոգ կյանքին:

Ինչո՞ւ այդպես պատահեց:

Լեփսիուսագետն ինձ խնդրեց, որ քեզ որոշ բաներ ասեմ, թեպետ, կարծում եմ, որ այդ մասին պետք է իմանալիք առանց իմ օգնության:

Նրանք հրապուրված էին նացիոնալ-սոցիալիստական գաղափարախոսությամբ ու հավատում էին, որ կռվում էին լավ ու ճիշտ պատճառների համար: Նրանք երբեք չեն մտածել, որ իրենք հրեշ են կամ էլ վատ մարդ: Իրենք դա անում էին հանուն իդեալական հասարակության գաղափարի: Գաղափարն արդարացնում է միջոցները: Ու նրանք կառուցում էին անթերի հասարակություն:

Սակայն մարդկությունը կարիք ունի հասկանալու, թե որոնք են ցեղասպանությունների պատճառները: Որոշ իմաստասերներ ասում են, որ հասկացել են ու զանազան տեսություններ են հորինել, որոնց համաձայն՝ ցեղասպանություններ լինում են հիերարխիկ հասարակություններում, որտեղ իշխանություն-

⁶ Գերմանիայի Բունդեսթագը 2016 թ. հունիսի 2-ի բանաձևով ընդունեց Ցեղասպանությունը:

ները չեն վիճարկում իրենց պլաններն ու մտադրությունները: Դա կարող է պատահել ինչպես ճգնաժամերի, այնպես էլ զարթոնքին հաջորդած վերելքի ժամանակ: Երբ մարդկանց սպասելիքների ու իրականության միջև ընկած է ահռելի դրական կամ բացասական ճեղք:

Այդ տեսությունները գտել են կապը խորտակված պատրանքների ու մարդկության դեմ գործված հանցանքների միջև: Եթե մեկը չի արդարացնում իր ծնողի կամ շրջապատի սպասումները, դա միշտ չէ, որ նրա մեջ կարող է ագրեսիա ծնել: Սակայն հակառակը նույնպես սխալ չէ: Հատկապես, երբ խոսքը վերաբերում է մարդկային մեծ խմբերին: Այստեղ է, որ առաջ են գալիս քաղաքական կուսակցություններ, որոնք դոմինանտ խմբին ասում են, թե գտել են հաջողության ճանապարհը փակող դռան բանալին ու մատնացույց են անում փոքրամասնական խմբի: Իսկ մարդկության փորձը ցույց է տալիս, որ հասարակության կորիզում փոքրամասնությունների նկատմամբ անհանդուրժողականություն կա, ու այդ կորիզն ունակ է ռադիկալացնել ողջ հասարակությունը:

Ու քավության նոխազները թիրախավորվում են: Տարբեր սկզբունքներով: Օրինակ՝ խնդիրների պատճառն այն է, որ նրանք շատ հաջողակ են: Եվ կամ, որ դոմինանտ խմբի հետ ունեն նույն ստատուսը: Շատ հաճախ թիրախավորված խմբերը կարող են լինել ոչ մրցունակ, բայց դոմինանտ խմբի կողմից դիտվել որպես մրցունակ: Ու զանազան մեթոդներ կան, թե

ինչպես է քաղաքական էլիտան մարդկանց դրդում մասսայական սպանության, որովհետև անգամ տոտալիտար հանակարգում էլ միանգամից չեն կարող ասել՝ գնացե՛ք ու սպանե՛ք: Աքայեսու անունով մի հիտլեր ճառեր էր ասում իր ցեղին, թե ինչու նրանք պետք է սպանեն թուֆսիներին: Հուֆուները խմբվեցին այդ մարդու ասածների վրա ու գնացին, թուֆսիներին մորթոտեցին: Այսինքն՝ ոչ թե մարդասպաններն էին դաժան, այլ զոհերն էին նրանց ստիպում դաժան լինել: Հայերը դավաճան էին ու ստիպեցին, որ իրենց հետ անեն այն, ինչ արվեց: Դա վատ բան չէ: Նրանք հարկադրված էին:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՋԱՐԴԵՐԻ ՈՒ ՀԱՅԵՐԻ ՀԱՐՑԸ

Ցեղասպանուիին Տրապիզոնի ջարդերի մասին ոչինչ չգիտեր ու երբեք էլ չէր նտածել, թե իր ընտանիքը որևէ կերպ կարող էր կապված լինել այդ բանի հետ: Այդ բանի հետ: Այդ բանն ինչ-որ անուն ուներ, որը նրա համար տեսական գիտելիք էր՝ ստորադասված իր կենցաղին, ու որը, սակայն, իմ տանը վերածվեց խիստ գործնական գիտելիքի:

Նա խիստ զայրացած է համակարգի վրա, որ այդպես հաջողել էր թաքցնել պատմությունն ու վերածել այն համակարգի, ինչպիսին որ կա: Մնտարակոյս: Ստուն են, որ Լև Տոլստոյը չնայած մեծ գրող է, բայց գյուղացիական ռեֆորմների ժամանակ հողերը գյուղացիներին տալու քարոզչություն անելուն գուգահեռ՝ իր սեփական կալվածքներից բաժանվելու ոչ մի ցանկություն չուներ:

Ցեղասպանուիին փորձեց դառը ժպտալ:

Միգրացե հիմնար կարող է հնչել, բայց դու մրաժժում ես, որ եթե քո ընտանիքը կապված չէ այդ բանի հետ, ուրեմն դու ազատ ես պարասխանարվությունից:

Ջուր հույսեր: Դու երկու կողմից կապված ես այդ բանի հետ: Ու այդ բանն անուն ունի, որը կոչվում է Ցեղասպանություն: Ու բնավ կարևոր չէ, որ դու չգիտեիր, թե ինչ է եղել 1915 թ.:

Ժպիտը չստացվեց: Նրա դեմքը մնում էր կայուն անթափանց:

Ճիշտ է, դու քո պապին երբեք չես տեսել, բայց քո երակներում հոսում է նրա արյունը: Ինչո՞ւ այդքան ժամանակ հարցեր չէիր տալիս: Չէ՞ որ 20 տարեկանից հետո քո մեջ խնդիր էր առաջացել քո երկրի պատմության պաշտոնական վարկածի հետ, որովհետև բարձրագույն կրթությունն ստացել էիր դրսում, որտեղ հայերի էիր հանդիպում, ու նրանք քեզ ինչ-որ ուրիշ բաներ էին ասում քո երկրի մասին:

Որովհետև Թուրքիայում շատ դժվար է մի բան իմանալ, ու այն սովորի պես փակ էր: Նաև ինտերնետը չկար:

Բայց դու որոշ բաներ գիտեիր, որովհետև մարդիկ, այնուամենայնիվ, քեզ ինչ-որ բաներ էին պատմում, որոնք դու լսում էիր ականջիդ ծայրով: Ինչպես քո մայրը, որ 1955 թ. սեպտեմբերի 6-ին Իսթիքլայով⁷

⁷ 1955 թ. սեպտեմբերի 6-ին Թուրքիայի պետական ռադիոյով հայտարարվել է, որ Հունաստանի Սալոնիկ քաղաքում գտնվող Քեմալ Աթաթուրքի հայրական տան վրա, ռումբ է դրվել, որին անմիջապես հաջորդել է Ստամբուլի Թաքսիմ հրապարակում բողոքի հանրահավաքը: Դրանից հետո բողոքարարները սկսում են քարկոծել հրապարակից սկիզբ առնող Իսթիքլայ փողոցի երկայնքով մեկ տեղակայված հույներ-

անցնելիս տեսել է, թե ոնց են թուրք հրոսակներն ունեզրկում հույներին ու հայերին, սակայն ուշադրություն չէր դարձրել: Հետագայում էլ քեզ խորհուրդներ էր տալիս, որ այլ գրքեր կարդաս ու այլ աղբյուրներ որոնես:

Երբ ես փոքր էի, մեր բակի նպարավաճառը հայ էր: Այնտեղ նաև մի հայ ոսկերիչ էր ապրում, բայց նրանք այդ մասին ոչինչ չէին խոսում:

Խոսում էին: 1965 թ. ապրիլի 24-ին ծաղկեպսակներ դնելով Թաքսիմում գտնվող Աթաթուրքի արձանի տակ ու ասելով, որ Թուրքիան իրենց հայրենիքն է, իսկ Յեղասպանությունը բնորոշելով որպես օսմանյան օրերին պատահած անախորժ դեպքեր: Այդ գինն էին նրանք վճարում ապրելու համար այնտեղ, որտեղ նրանք ծնվել ու որը շենացրել էին:

Այն ժամանակ այդպիսի բաների մասին չէին խոսում: Այդ հիմա է, որ նրանք մի քիչ փոխել են դիսկուրսի ֆոկուսն ու շրջանառում են վարկածը, որ պատերազմ էր, ու մարդիկ իրար սպանել են:

Բայց երբ դու փոքր էիր, հայկական ներկայությունը Ստամբուլում ավելի նկատելի էր: Ձեր դպրոցում մի երկու-երեք հայ երեխաներ էին սովորում, իսկ քո սոր ավարտական ատեստատում դասարանի կեսից ավելին ազգային փոքրամասնության երեխաներ են: Հետո դու ընդունվեցիր մասնավոր, թանկ

րին ու հայերին պատկանող խանութները: Նրանց են հետևում գինված խմբեր, որոնք երկու օրերի ընթացքում կոտրում ու թալանում են ոչ մուսուլմաններին պատկանող խանութներ, արհեստանոցներ, տներ, դպրոցներ, եկեղեցիներ և գերեզմանատներ:

քոլեջ, որտեղ այլևս նմուշի համար ոչ մի ազգային փոքրամասնության ներկայացուցիչ չկար: Ու կարծեցիր, թե նրանք պարզապես գնացել են Թուրքիայից:

Ինչո՞ն հարցեր չէիր տալիս:

Որովհետև չկար հարց հարուցող մի մեկը:

Բայց ուշ՝ 1960-ականներին, երբ դու դեռևս երեխա էիր, քո հոր դիվանագետ ընկերոջն օդանավակայանում վիրավորել էին, ու դու գիտեիր, որ հայերն էին վիրավորել: Ու, միևնույնն է, չէիր հարցնում, թե ինչ պատճառով էին նրան վիրավորել:

Ինչո՞ն հարցեր չէիր տալիս:

Թերթերում գրում էին, որ վարս հայերը հարձակվել են թուրքերի վրա ու սպանում են նրանց, բայց չէին ասում, իհարկե, թե ինչու են նրանք դա անում, ու ինչ է պատահել:

Քեզ դաճնացնում է փաստը, որ մենք գնացինք: Որովհետև քո ծնողները միշտ ասում էին, որ երբ իրենք էին փոքր, Ստամբուլն ավելի լավն էր ու բազմազան, ու այդ մարդիկ այստեղ էին ապրում, ու դու ասում ես, թե տխուր ես, որ սերունդներով այնտեղ ապրած մարդիկ ստիպված էին լքել այն, ու դու չգիտեիր պատճառը:

Ինչո՞ն հարցեր չէիր տալիս:

Ենթադրվում է, որ ամեն ինչ նստած է ենթագիտակցության մեջ, ու երբ գալիս է ժամանակը, հարցերն արտաբերվում են:

Ինչ դու զգացիր, երբ կարդացիր պապուդ անունն իմ տանը գտնված գրքում:

Անոթ:

Ինչո՞ւ:

Իմ նախնիները ներգրավված էին այդ բանում: Եսև, որովհետև ես Թուրքիայի քաղաքացի եմ ու հե-
տաքրքրություն չեմ ցուցաբերել այդ բանի նկատմամբ:
Եթե անգամ իմ ընտանիքն էլ ներգրավված չլիներ այդ
բանի մեջ, իմ երկիրն ուղղակիորեն հարստացել է՝ էթ-
նիկ փոքրամասնություններից իվված ունեցվածքը
բռնագավթելով, ու մարդիկ այսօր չեն ցանկանում լսել
ու իմանալ այդ մասին:

Լեփսիուսագետն ասում է, որ անցյալի դառը դա-
սերից մեկն այն է, որ ցեղասպանությունների ժամա-
նակ մարդիկ չեն վախենում պատիժ կրելուց, որով-
հետև նրանց թիկունքում կանգնած է պետությունը:
Հոլոքոստում ընդգրկված գերմանական սպայակույ-
տի մի մասն այդ գծով պրակտիկա էր անցել Յե-
ղասպանության ժամանակ: Ու չէր պատժվել: Բնա-
կանաբար: Ո՞վ է հիշում այսօր հայերի ցեղասպանու-
թյունը ակա Հիտլեր ձյաձյա: Ու մարդկության դեմ
հանցանք գործողների մեծամասնությունը պատիժ
չի կրել: Երբ հերթը հասավ պատիժներին, Գերմա-
նիան շատ մեծ ցանկություն չուներ այդքան մարդ
դատել, ու շատ քիչ մարդ դատվեց իր արածների հա-
մար: Մինչդեռ բոլոր վերապրողներն ունեն մեղքի
զգացումը, թե ինչու հենց իրենք վերապրեցին: Եսույն-
պես և հանցագործների սերունդները, երբ իմանում
են իրենց հայրերի ու պապերի արարքները:

Ի վերջո, ինաստասերները հանգեցին այն մտքին, որ հանցագործները պետք է հրապարակապետրեն ընդունեն իրենց կատարած հանցանքը՝ առանց ասելու. բայց: Դա պարտադիր է, որովհետև, օրինակ՝ Այխմանի դատավարությունը պարկերով հասարակական քննարկումներ առաջ բերեց: Բայց դու պատրաստ չես այդ մասին խոսելու, որովհետև միայն քո ցեղասպան պապը 14 երեխա ուներ, ու հիմա դու հարյուրավոր ազգականներ ունես:

Հաշտեցման հիմքում ընկած է հարգանքը, մինչդեռ Թուրքիայի բանակում այսօր էլ զինվորին կրթում են «Սպանիր, ինչպես հայի կսպանես» կարգախոսով: Քո երկրում հիմա էլ օգտագործվում է Ermeni dölü / Rum dölü⁸ արտահայտությունը: Դրան ի պատասխան՝ մենք էլ ունենք «թուրքի վիժվածքը», բայց այն առօրյայում գործածական չէ, ու թուրքի մասին մեր

⁸ Թարգմանվում է որպես հայի կամ հույնի սերմ, Թուրքիայում համարվում է ծայրահեղ վիրավորական:

գիտակցությունում խոր նստած գիտելիքը հյուսված է «թուրքը մնում է թուրք» արտահայտության շուրջ:

Հաշտեցում կլինի այն ժամանակ, երբ զոհերը հասկանան, թե ինչ են զգում հանցագործներն, ու որն է նրանց մտիվացիան: Լեփսիուսագետը բացատրում էր, որ մենք կարիք ունենք էնպատիայի, որ պեսզի հասկանանք հանցագործի մղումները զոհին ասպատակելիս: Գերմանացիները հրեաներին սպանելիս նրանց մարդ չեն համարել: Ի՞նչ է զգում մարդը կով մորթելիս կամ գայլ չարչարելիս: Չէ՞ որ յուրաքանչյուր օրգանիզմ օժտված է գիտակցությամբ:

Ցեղասպանուիուն Հայաստանում ասել են, որ նրանք մեղավոր չեն իրենց պապերի արածների համար: Բա յարկէ: Սեր կոնֆորմիստները հաշտեցման ծրագրում ընդգրկված թուրքերի ներկայությամբ ասում են, թե պետք է խնայել մեր թուրք եղբայրների ու քույրերի նուրբ նյարդերը, իսկ նրանց գնալուց հետո մեյդանում երդվում՝ Ստամբուլը վերածել արյան ծովի:

Եվ ուրեմն քեզ ասացին, որ դու մեղավոր չես: Անշուշտ է դա: Մենք այդ հարցում ոչ մի կոնկրետ ընկալում չունենք: Առանցքային միտքն ընկած է մեր պապերի հողերն ու Սրարատը վերադարձնելու շուրջ. մի մասը տենչում է պաշտոնական ներողության, մի մասն էլ կիսաանտարբեր վիճակում է: Իսկ իրականությունն այն է, որ այդ դո՛ւք պետք է հետաքրքրված լինեք: Որովհետև այդ դո՛ւք եք, որ ցեղասպանության բեռն ուսերիդ՝ քաղաքակիրթ հորջորջվելու հայտ եք ներկայացրել: Ու բնավ կարևոր չէ, թե Հայաստանում ձեզ ինչ կասեն:

Ի՞նչ է պատասխանատվությունը քո համար:

Սի ֆիլմ, որը մարդկանց կպատմի այդ մասին:

Լայնախոհ թուրքերը ֆիլմեր են նկարում այդ բանի մասին: Սյահնըն՝ այդ ֆիլմը կնայեն միլիոնավոր թուրքեր ու կհասկանան, որ իրենց երկիրը կառուցված է հայերի, հույների և այլոց արյան, ունեցվածքի և էլի ուրիշ բաների վրա: Չէ, անշուշտ, նրանք այդքան դաժան չեն լինի, այլ ուղղակի կասեն, որ մի բան է եղել: Նրանք դեռ հրապարակայնորեն պատրաստ չեն այդ բանին անուն տալու ու խոսելու այն մասին, ինչ եղել է:

Այդ մասին այսօր խոսելը շար դժվար է: Մեյնսթրիմը չափազանց ուժեղ ազդեցություն ունի, ու նրանք ստում են, որ եթե այսօրեղ հայեր են եղել և ունեցվածք են թողել, սպա ինչո՞ւ չեն գալիս ու հետ ուզում այդ ունեցվածքը:

Բա յարկե: Գենդերային դիսկուրսում անուսինը տարիներ շարունակ ծեծում է կնոջն ու բռնաբարում, հետն էլ առիթն ընկած դեպքում հարցադրում է անուն, որ եթե նա ճնշված էր, ինչո՞ւ չէր բաժանվում: Ցեղասպանությանն առնչվելը հեշտ չէ: Պետք է պարզապես հրաժեշտ տալ թանկարժեք դուխիներով պատված նախկին անհոգ կյանքին:

Ի՞նչ է պատասխանատվությունը քեզ համար:

Մարդիկ պիտի այդ մասին շար բան իմանան: Կարծում եմ, որ այդ ֆիլմով կկարողանամ մի բան անել: Մարդիկ Թուրքիայում նույնիսկ չեն գիտակցում, որ պոլսահայ երեխաները դպրոցներում սովորում են այն նույն դասագրքերով, որպեղ նրանց մասին գրված է, որ իրենք վապն էին, դավաճան և այլն:

Ինչ է պատասխանատվությունը քեզ համար:

Պետք է ընդունել Ցեղասպանությունը: Սակայն Թուրքիան նույնիսկ չի էլ բռնել այդ ճանապարհը: Գոնե պետք է վերադարձնել եկեղեցիներն ու նրանց ունեցվածքը: Մասնավոր անձինք նույնպես պետք է կարողանան հեղ սրանալ իրենց ունեցվածքը:

Ինչ է պատասխանատվությունը քեզ համար:

Կարալը հեղ Կալը ճիշտ չի լինի, որովհետև այն-պետ նարդիկ են ապրում, որոնք հավանաբար չեն ուզե-նա լինել Հայաստանի կազմում:

բայց

պատասխանատվությունը պանիր չէ, որ լավաշի մեջ փաթաթես ու ուտես

ոչ էլ հեռվից արտասանված պաթետիկ խոսքեր են կան հեղված արցունքներ

պատասխանատվությունը կոնկրետ գիտակցված ակտ է կյանքի իրավունքի նկատմամբ ունեցած հարգանք ներողություն խնդրելու ու շնորհակալություն արտաբերելու կարողություն

բակում խաղացող երեխաների ծիծաղն ու պատշգամբից լավող տատրակների ճովողությունը

երեկոյան մեկ բաժակ թեյի շուրջ ընկերական զրույցները թթնիների վրա աճող բթի հաստության սև թուփը կարուսեղները

մի կտոր դառը շոկոլադով 100 գրամ թունդ կոնյակի շուրջ սիրելիի աչքերի մեջ անթարթ նայելու ժամանակն ու

դյուկ էլինգտոնի ջագը

ՄԱՍ Գ

Պատ

Էդ գիշեր չքնվեց: Թուրքերին ճանփելուց հետո լցվեցինք գնացքն ու քշեցինք Կարս: Երեխեքն էլ պապուս որ տեսան՝ արդեն վերջ: Գիշերվա թեման պատաստ էր: Ու տենց մինչև լույս բանից բեխաբար զրից արեցինք: Ու պապս նորից սկսեց: 13 թիվն էր: Քրոջս հարսանիքը: Քրդերը: Ֆըռընջին: Թուրք չաուը... Ես փորձեցի մի անկյունի վրա գլուխս հարմարեցնեն, բայց չէր ստացվում ու սկսեցի տանձ կշռել: Արանքներում մեկումնջ թուրքերեն բառեր էի լսում ու կարծում էի, թե արդեն Կարսում ենք: Առավոտվա դեմ աչքս կպնելու վրա էր, երբ գնացքը ծանր փնչացնելով դանդաղեցրեց ընթացքն, ու լավեց սիրաձս սուլոցը.

պու-ու-ու-չըր-չըր-չըր-չըր-չըր-չըր

Գնացքն արգելակեց: Կուպերս դանդաղորեն բաց արեցի, ու լուսանուտից աչքով տվեցին հայերեն սակագրությամբ ցուցատախտակներ: Մտքիս մի ծայրով անցավ, որ երևի հարթմնի վիճակում եմ, բայց ականջներս լսեցին Ավետիսի ձայնը, որ սևով սպիտակի վրա հայտարարեց՝ **հաջորդ կայարանը՝ Չարենցի 1:**

Ի՞նչ:

Կարսում Չարենցի¹ անունով փողոց կամ: Դե գիտենք, որ Չարենցը Կարսում ա ծնվել, բայց իրա անունով փողոցը Կարսում մի քիչ երազ շարքից կլիներ: Չէ՛, ստեղ մի բան էն չի: Մտածում եմ ու երեխեքին

¹ Եղիշե Չարենց (1897-1937), հայ բանաստեղծ, գրող, ծնվել է Կարսում:

մատնացույց անում սուգ վարդագույն տուֆե բազմահարկ շենքի մի անկյունում խփված հայերեն «Չարենցի 1» ցուցանակը:

Էդ պահին Ավետիսը բացում և կուպեի դռան ու կիսամեղավոր հայացքով նայում մեզ: Բոլորս նայում ենք նրան: ԱՎԵՒՄԻՍ: Հասել ենք, իջե՛ք: Ո՞ւր: ԴիՎիՎի Ինթերնեյշնալի հայկական օֆիս: Իյն, էդ ո՞նց տենց ստացվեց: Պապս էլ մի կողմից և հարցակոխ անում: Հըր մի՛ բոպե, այ պապ, սպասի՞՜ հասկանանք՝ ինչ և եղել: Թուրքիա չենք գնում: Տարածաշրջանը կանգնած և նոր աշխարհաքաղաքական դասավորումների եզրին, ու նի դա էտոգո: Վտանգավոր և, իմացա՛մր: Մեզ կրճենն ու հատիկ-հատիկ փրփսկ կանեն: Ու նենց և, որ չենք էլ հասկանա, թե փրփսկ անողները թո՛ւրք էին, թե՛ ծայրահեղ իսլամիստ: Թուրքիայում իրադրությունն օրըստօրե խառնվում էր: Բոլոր կողմերից հիապթափված աչքեր են: Մենց, ախար, ո՞նց ստացվեց: Կյանք և, է՛լի, ինչ ասես, որ չի լինում:

Հունվարին հայտնի դարձավ, որ թուրքական գործընկեր «Պատմության հիմնադրամը» դուրս է եկել ծրագրից: Տարակուսած հայացքներից կարելի էր ենթադրել, որ Թուրքիան վերաբժնորել է հայ-թուրքական հարաբերությունների համատեքստն ու քիչ թե շատ ազատական տրամադրված ՀԿ-ներում հետընթաց հեղափոխություններ կազմակերպել: Սրա հետևանքները երկարաժամկետ կտրվածքով գուշակելու համար պետք էր հարցում ուղարկել Վանգա ծյոժային, սակայն կարճաժամկետ կտրվածքով այն կոնկրետ նշանակում էր, որ ծրագրի թուրքական մասը տեղի չի ունենա: Որովհետև:

Հունվարի վերջին Ստամբուլում հայ-թուրք-գերմանական բազմաստիճան ներկայացուցչական կազմով թուրք գործընկեր գտնելու մի քանի օրվա պրպտումները հաջողությամբ չպսակվեցին: Թեպետ ձախ հայացքներ ունեցող երիտասարդների մի կազմակերպություն արձագանքել էր գործընկերության հայտին: Բայց դրանից մի երկու շաբաթ կան մի ամիս

հետո ինացվեց, որ նրանք էլ էին հրաժարվել: Պատճառները հայտնի չեն ու անկարևոր:

Խոսակցություն կար, որ միջազգային դոնոր հանրությունը հայ-թուրքական հաշտեցման բոլոր ճանապարհները ժամանակավոր ու անհայտ հեռանկարով փակել է, բայց այս օրերին Բուրջուն² Հաստատում էր, ու ինացվեց, որ բոլոր դեպքերում հայ-թուրքական 8 կազմակերպություններից բաղկացած կոնսորցիումի ծրագիրը ԵՄ-ն հաստատել է: Դինք հիմնադրամի հայ-թուրքական մնացյալ ծրագրերը նույնությամբ շարունակվում էին: Փաստորեն ինչ-որ միջանցքներ դեռ կան: Չնայած հայտնի չէ, թե ինչպես են զարգանալու այդ ուղղությունները: Որովհետև տարածաշրջանում նկատվում է 100 տարի առաջվա պատկերը կրկնվելու միտում: Ու, ընդհանրապես, այս կողմերում միշտ էլ անհանգիստ է եղել: Հարաբերական անդորրը, որ շարունակվում էր մի քանի տասնամյակ, մարդկության գոյության պատմության հեռավորությունից ընդամենը մի դրվագ է:

Բայց շատ հարցեր մնում էին անպատասխան: Ըստ նախնական պլանի՝ Թիթեռնիկը բաղկացած էր լինելու երկու մասից, որի առաջին մասը ներառելու էր երիտասարդների հավաքած ֆոտո/պատմությունները հայկական հատվածում, ու որին էլ նվիրված է «Գյումրի-Կարս գնացքում» գլուխը, իսկ երկրորդ մասը, փաստորեն, պետք է համարժեքորեն

² Բուրջու Բեջերմեն, «Հրանտ Դինք» հիմնադրամի աշխատակից:

արտահայտեր թուրքական հատվածը: Բայց, փաստորեն, երկրորդ մաս չի լինի: Սակայն, որպեսզի ինչոր կերպ հակակշռվի Թիթեռնիկի հայկական բովանդակությունը, ադմինիստրացիան որոշեց, որ Թիթեռնիկն ունենալու է հավելված, որում կընդգրկվեն հայ և թուրք մասնակից գույգերի պատրաստած ֆոտոպատմությունները՝ ըստ իրենց նախընտրությունների: Սշխատանքը չերեզ Սկայայ-Ֆեյսբուք և այլն: Ինչ վերաբերում է պատմահավաքների հարցազրույցներին, որոնց սեծ մասն ընդգրկված չէ Թիթեռնիկում, որոշվեց, որ լավագույն պատմությունները կհրապարակվեն որևէ օնլայն մեդիայում կամ էլ պոֆ-ով կղրվեն հենց Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կայքում:

Իսկ թե ինչ է լինելու Սճող արխիվի հետ, դեռևս հայտնի չէ: Մնդուկներն ու ճամպրուկները, որոնք տարբեր իրերով ու պատմություններով Հայաստանում հարստանալուց հետո ուղևորվելու էին Թուրքիա, ծանրունեծ հանգրվանել էին Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայկական օֆիսում: Ուղիղ Ավետիսի սեղանի կողքին: Հավանաբար այն պատճառով, որ նա չափազանց հավանել էր Սճող արխիվի գաղափարը:

* * *

Լուսինեն ու Ավետիսը երեխերին հավաքեցին օֆիսում, որ տխուր լուրը հայտնեն: Սեծ մասը չկարողացավ գալ: Սկայայի ջանը սաղ ըլնի: Բայց երեխերը ցրված էին: Սլիսը մի քանի անսով Գազիանթեպում

կանավորություն էր անում, Արփին էլ Գերմանիայում էր: Բայց Արտյունը Իրանից հետ էր եկել: Ու տենց մի քիչ խոսեցինք: Ենթադրվում է, որ Թիթեռնիկի վերջնական դիզայնից ու երկու գրողների ճանփորդական նոթերի հրատարակությունից հետո ծրագիրը հուլիսին կանփոփվի Հայաստանի որևէ հանգստավայրում, իսկ եթե Թուրքիայում վիճակը հանգիստ լինի, հենց Ստամբուլում:

Նորից գնացքուն էի: Բայց էս անգամ մեն-մե-նակ: Պապս էլ չկար: Լավ չկողմնորոշվելով, թե ինչ պետք է անեն՝ ուղղակի նստեցի լուսամուտի մոտ ու հայացքս սկսեցի պտտեցնել այս ու այն կողմ: Գնացքը փնջացնելով արագություն էր հավաքում.

պու-ու-ու-չոք-չոք-չոք-չոք-չոք-չոք

Կողքս մի հսկա սնդուկ էր դրված: Վաասյ: Էս Աճող արխիվի սնդուկը ո՞նց ստեղ հայտնվեց: Չլինի իսկապես գնում ենք Կարս: Կուպեից դուրս եկա, որ մարդ գտնեն: Դենս պատ էր: Բայց սենց ո՞նց կլինի: Կարո՞ղ ա երազ են տեսնում: Ինձ կճմթեցի: Չէ, երազ չէ: Ցավ են զգում: Համ էլ մարմնիս յուրաքանչյուր կետով տարուբերվում են: Ու որպես հաստատում՝ լսեցի ծանոթ փնջոցը՝

պու-ու-ու-չոք-չոք-չոք-չոք-չոք-չոք

Երևի հատուկ տիպի գնացք ա, լուսամուտները մենակ կուպեի կողմից են: Ստաճեցի ու շրջվեցի աջ,

որ նայեմ՝ կողքի կուպեում ով կա, էլի դեմն պատ էր: Էս անգամ վրան մակագրություն կար՝ «Karabağ bizimdir»:³ Մյ քեզ բան: Ստեղ արդեն մի բան էն չի: Հետ եկա կուպեն ու սկսեցի ուսումնասիրել կողքերս: Դեղնավուն ծալծլված մի թուղթ էր ընկած գետնին: Բացեցի: Վրան Մասիս սարի ֆոնին երկու բարդի էր նկարած՝ «Հետ տվեք մեր հողերը» մակագրությամբ: Կարմենի արխիվից է ընկել: Նորից սկսեցի մտածել այն մասին, որ համաձայն չեմ աշխարհի այն մեկնաբանության հետ, որը կառուցել են մարդիկ ու որին հավատում են: Այդ մեկնաբանությունում պատերազմներ կան, որտեղ ուժեղները մեռցնում են թույլերին: Բայց իմաստասերներն ասում են, որ մարդ արարածն ինքնին սահմանված չէ: Նա առկախված է ոչնչության մեջ, ու հենց այնտեղից էլ սահմանում է ինքն իրեն: Այլ մարդկանց օգնությամբ: Իսկ ղվ է օգնել առաջին մարդուն: Աճող արխիվի դարակներից մեկում ընկած էր մի Աստվածաշունչ: Բացում եմ ու մատս դնում առաջին հանդիպած պատմությանը.⁴

³ Թուրքերենից թարգմանաբար նշանակում է՝ «Ղարաբաղը մերն է»: Լեռնային Ղարաբաղը հայկական գերակշիռ բնակչությամբ տարածք է Հարավային Կովկասում, որը խորհրդային իշխանությունների օրոք ընդգրկված է եղել Խորհրդային Ադրբեջանի կազմում: Խորհրդային Միության վերջին տարիներին Ղարաբաղի ժողովուրդն ինքնորոշման իրավունքով հիմնված հանրաքվեի հիման վրա ցանկություն հայտնեց դուրս գալ Ադրբեջանի կազմից, որի արդյունքում սկիզբ առան հայ-ադրբեջանական կոնֆլիկտն ու պատերազմը: Այս կոնֆլիկտի համատեքստում Թուրքիան՝ որպես Ադրբեջանի հետ եղբայրական պետություն, 1993 թ. սահմանը միակողմանիորեն փակեց:

⁴ Ծննդոց, Գրվա ժԱ, Աշտարակաշինությունը: Լեզուների խառնակությունը:

Եվ բոլոր երկիրը մէկ լեզու և մէկ խօսուածք էր: Եվ եղավ, որ մարդիկ մի սար գտան և այնտեղ բնակուեցան: Եվ աղյուսները նորանց համար քարի տեղ եղան ու կուպրը նորանց համար եղավ ցեխի տեղ: Եվ նրանք մի քաղաք շինեցին ու մի աշտարակ, և նորա գլուխը մինչև երկինք եղավ: Եվ նորանք ցանկացան միասին լինել՝ մէկ լեզուով և մէկ խօսուածքով: Եվ եղավ, որ Աստված եկավ տեսնելու մարդկանց որդիների շինած քաղաքն ու աշտարակը: Եվ նրա սրտին դուր չեկավ տեսածը: Եվ ինքն իրեն ասաց. ահա մէկ ազգ է և մէկ լեզու նորանց ամենի համար, և նորանց համար դժուար չի լինիլ ինչ-որ խորհեցին շինելու: Եվ ես նորանց լեզուն կխառնակեմ, որ իրար լեզու չհասկանան: Հակառակ դեպքում ին կարիքը չեն ունենալու: Եվ Աստված խառնակեց բոլոր երկրի լեզուն և նորանց ցրուեց բոլոր երկրի երեսի վերայ, և քաղաքը շինելուց դադարեցին:

Աստվածաշունչը փակում են: Զգում են, որ հայտնվել են անելանելի վիճակում: Մենակ են ու մի քանի կողմից պատերով շրջափակված: Բայց ակնհայտ ա, որ գնացքում են ու ճամփա են գնում: Ուր են գնում՝ ես էլ չգիտեմ: Կուպրի լուսամուտից մինյանց են հաջորդում դաշտեր, անտառներ: Մարդ-մարդասանք չի երևում: Ինչո՞ւ պիտի այդպես ստացվեր: Հարցնում են: Մարդն ի ծնե սոգական արարած է ու աշխարհը վայելելու փոխարեն ինքն իրեն մեռցնում է:

— Որովհետև այդպես է ցանկացել Աստված պապիկը:

Անսպասելի հնչում է պատասխանն ու տեղիցս վեր են թռչում: Դիմացս մի ծալապատիկ դերվիշ էր նստած: Դո՛ւ որտեղից հայտնվեցիր: Դերվիշ բարան բարի ժպտում էր: Հեքիմ՞թ է սա, թե՛ իրականություն: Ոչ մի ցանկություն չունեի հասկանալու, որովհետև պատի հետ խոսել չէր լինում, իսկ Դերվիշ բարան փաստորեն խոսում է: Համ էլ ի՞նչ կարևոր է: Ճանապարհի ընկեր էի ման գալիս: Իրեն–իրեն հայտնվեց: Դերվիշ բարա, մի պատմությունն պատմի: Գիտեմ, որ դերվիշները լավ պատմություններ են պատմում: Աչքիս վրա, աղջիկ ջան:

Ու սկսում է պատմել: Բայց խոսքերը չեն հասկանում: Համ տեսնում են, որ շուրթերը շարժվում են, համ էլ ձայնն են լսում: Մյ քեզ բան: Տեղիցս վեր են կենում, մոտենում են Դերվիշ բարային ու հպվում ձեռքին: Չէ՛, երազ չէ: Զգում են: Համ էլ Դերվիշ բարան ձեռքը դնում է ձեռքիս: Էլի զգում են: Բա ինչո՞ւ չեն հասկանում: Սի քիչ առաջ հասկանում էի, չէ՛: Դերվիշ բարան էդ ընթացքում շարունակում էր պատմել: Ես շարունակում էի չհասկանալ: Ու ավելի են խառնվում, որովհետև զգում են, որ շատ կարևոր պատմությունն ա պատմում, ու ես պիտի մի հնար գտնեմ իրեն հասկանալու: Դերվիշ բարա, քեզ չեն հասկանում:

— Որովհետև մարդը սովորաբար հասկանում ա էն, ինչ ուզում ա հասկանալ:

Վայ, բա ո՞նց սա հասկացա: Դերվիշ բարան երևի մի օյին ա խաղում գլխիս: Ստածում են: Ու սկսում են

կողքերս տնտղել՝ հույսով, որ մի հնար կգտնեն: Խոսքերում ինչ–որ հնչյուններ կան, որոնք ո՛չ էն և հայերեն են, ո՛չ էն և թուրքերեն են. մի տեսակ զգում են, որ ծանոթ ա, բայց գլխի չեն ընկնում, թե ինչ լեզու ա: Էդ ընթացքում Դերվիշ բաբան վեր ա կենում տեղից ու մոտենում ա ինձ: Մատներով բան ա ցույց տալիս: Նայում են. Կարնենի սնդուկն ա: Պատմությունները... Հողերը... Սրանք–արանք սկսում են բան հասկանալ: ... հողերը... Ի՞նչ: Մեկ էլ հայտնվում ա Ավետիսը: Ավետիս: Դու ստեղ ի՞նչ գործ ունես: Բա հենց ես եմ, որ ստեղ գործ ունեմ: Հետո հայտնվում ա թուրք չաուշը: Ո՞նց: Ես քեզ չէի սպանել: Դերվիշ բաբան ցույց ա տալիս չաուշին ու էլի բան ա ասում: Հետո հայտնվում են պապս ու թուրք ֆրոբնջին: Դերվիշ բաբան հերթով բոլորի մասին բան ա ասում՝ ...ուրիշ լուծում... ուրիշ լուծում... ուրիշ ճանապարհ... Բա պմտը, Դերվիշ բաբա, պմտը: պատը... պատը... Պատը ի՞նչ: Գոռում են:... պատը... պատը... Հետո հայտնվում ա Լեվսիուսագետը: Բա Ցեղասպանուհուն էլ հետո բերեիր, հենց ստեղ էլ իրան կրացատրեիր գերմանական փորձի ու դրանից բխող տարաբնույթ արդյունքների մասին, թե չէ հիմի հաստատ ինձանից թունդ նեղացել ա, որ անունը դրել են Ցեղասպանուհի: Լեվսիուսագետը խորհմաստ ժպտում ա, բայց ես նորից ուշադրությունս լարում եմ դեպի Դերվիշ բաբան, որովհետև կուպեի դուռը բացել ու պատն էր ցույց տալիս... պատը... պատը... Պատը ի՞նչ: Նորից եմ գոռում:

— Պատը պատ է, որովհետև նյութին առարկայացնում է նարդկային միտքը:

Պահ հո՛, մեր Դերվիշ բաբան աչքիս ֆիլասոֆների հետ նստած–հեղած դերվիշ ա երևում: Չգիտեմ՝ ինչու էդ մտքից խնդալս գալիս ա, ու սկսում են ծիծաղել: Ու մի հիստերիկ ծիծաղ ա բռնկվում մեջս, ու չեն կարողանում հանգստանալ: Հրնթացս, բայց տեսնում են, որ Դերվիշ բաբան խոսում ա ու մի կողմից՝ ցույց ա տալիս սնդուկը, մյուս կողմից՝ պատը, ու հերթով հայտնվում են հաշտեցման պրոցեսի հերոսները՝ վերևից ներքև: Դերվիշ բաբան բոլորի մասին բան ա ասում, ոմանց մասին խոսելիս գլուխն ա օրորում, մյուսների կողքին բուֆ մասն ա տնկում, յանի՛ գուդ, գուդ, բայց ես շարունակում են ծիծաղել: Էնքան են ծիծաղում, էնքան են ծիծաղում, մինչև որ աչքերիս առաջը սևանում ա: Լրջանալուց հետո հայտնաբերում են, որ կուպեում դարձյալ մենակ են: Գնացքը փնջալով արագություն էր հավարում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
ՄԱՍ Ա. Գյումրի-Կարս գնացքում	13
ՈՒՐԻ ԲԱԲԱՅԻՆ ՈՐՈՆԵԼԻՍ	15
ՊԱՊՍ ՈՒ ԹՈՒՐՔ ՖԵՌԵՆՋԻՆ	26
ԲՈՒՆԻ ԹԹԱՆՈՅՈՒՄ	89
ՉԱՐԻ ՎԵՐՋԸ	102
ՄԱՍ Բ. Անցյալի ուրվականները	107
ԹՈՒՆԵՐԻ ՀԱՐՅԸ	109
ԳԵՐՄԱՆԱՅՈՒ ՀԱՐՅԸ	114
ՏՐԱՊԻԶՈՆԻ ԶԱՐԴԵՐԻ ՈՒ ՀԱՅԵՐԻ ՀԱՐՅԸ	118
ՀԱՇՏԵՅՄԱՆ ՀԱՐՅԸ	123
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ	125
ՄԱՍ Գ. Պատ	129
ԱՊՐԻԼԻ 8, 2016	132
ԴԵՐՎԻՇ ԲԱԲԱՆ	136

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՊԱՏ

ՀԱՅ-ԹՈՒՐԻՔԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Գոհար Գրիգորյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարիամ Կանայանի
Սրբագրիչ՝ Նարինե Ղուկասյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Հիմնական տառատեսակը՝ CHEA Ararat
Ծավալը՝ 9 տպ. մանուկ

ՏՊԱԳՐՎԵԼ Է «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ-Ի ՏՊԱՐԱՆՈՒՄ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak